

ժամանակակից հայ գրականության համախառն ժնգիցողի համար

[www.fnuqիր.am](http://www.fnuqիր.am)

2 սոյն/բեր, 2001

## Ծիծաղելի բաներ

### Սարգիս Աստիկան

Խանութում, հերթի կանգնած մարդկանց հրելով, Սյուզանը մի կերպ հասավ մորն ու փարվեց նրան:

- Սյուզան, - բարկացավ մայրը, - վազվզելու տե՞ղ ես գտել:
- Մա, - հեռավոր ասաց Սյուզանը, - գող տեսա:
- Հանգստացիր, - մայրը ծիծաղեց: - Որտե՞ղ տեսար:
- Նայում էի, թե ծախողը ոնց ա կշռում, մեկ էլ էր պապիկը հավի բուրդ վերցրեց, չորս կողմը նայեց ու գցեց տոպրակի մեջ:
- Երեւի նրա վճարելը չես նկատել, - մայրը շոյեց Սյուզանի գլուխը: - Այսքան մարդկանց մեջ գողը բուրդ չէր փախցնի, փող կգողանար:
- Չէ, մամա՛, չե՞ս հավատում: Մատն էլ տարավ բերանին, ուղիղ աչքերիս նայելով վախենալու «սո՛ւս» ասեց: Քիչ մնաց շունչս կտրվեր:
- Վերջ, Սյուզան, - մոր գնումների հերթը մոտեցել էր, - դրսում կխոսենք:
- Ա՛յ քեզ բան, - հանկարծ իրար անցավ հաճախորդներից մեկը, - հազար դրամս չկա: Տեսես ո՞վ գողացավ:
- Տեսա՞ր, մա, չէիր հավատում: Նույն պապիկն ա գողացել, - Սյուզանը բոլորի ուշադրությունն իր կողմը գրավեց: Մայրը շտապ վճարեց գնումների համար, ու դուրս եկան: Սյուզանը հազիվ էր հասնում մոր հետեւից. մերթընդմերթ կանգ էր առնում, աչքերը մտածկոտ սեւեռում, նորից վազում, հասնում էր մորն ու նորից հետ ընկնում:
- Մա, - ասաց նա շենքի մուտքի մոտ, - ես գողերին ճիշտ էր ձեռով էլ պատկերացնում էի՝ կեղտոտ, սեւ գույնի, վախենալու աչքերով ու մատն էլ՝ բերանին:

Մայրը ժպտաց, ապա լրջորեն ասաց.

- Լա՛վ լսիր, ինչ եմ ասում, Սյուզան: Մի բուրդ գողանալով գող չես դառնում: Սոված մուրացկան է եղել, ու հետո, գողությունն էլ համարյա նույնն է, ինչ քո սուտ խոսելը:
- Ինչե՞ր ես խոսում, մա, - Սյուզանը շվարած նայեց մորը, - ախր աչքերիս մեջ նայելով գողացավ:
- Դու էլ աչքերիս մեջ նայելով սուտ ես խոսում:

Մտան տուն: Սյուզանը երկար ժամանակ լուռ էր:

- Մա, - վերջապես խոսեց նա, - եթե քո պես մտածենք, ուրեմն նախանձելն էլ, բամբասելն էլ, բոլոր վատ բաները գողանալու պե՞ս են:
- Ճիշտ ես, - քթի տակ ժպտաց մայրը: - Դասերդ սովորի՛ր:
- Ուրեմն, վատ բաներ անելու փոխարեն մարդիկ գողություն կանեն ու միլիոնատեր կդառնան:
- Գողության թեման վերջացրի՛նք, - բռնազբոս բարկացավ մայրը: - Դասերիդ անցիր, հենց հիմա:

Սյուզանը նորից նստեց, դասագրքերն ու տետրերը դրեց առջեւը: Ոչ մի դաս չկարողացավ սովորել: Մուրացկանն իր գողնով՝ հավի բուրդով, չէր հեռանում մտքից: Երբ հայրը վերադարձավ աշխատանքից, Սյուզանը վազեց ընդառաջ:

- Պապա՛, եսօր...
- Սյուզան, խաբար տալն էլ նույնն է, ինչ որ..., - մայրը բազմանշանակ նայեց աղջկան:

Հայրը համբուրեց աղջկան:

- Սյուզան, մաման էլի ի՞նչ է պահում ինձնից:

Սյուզանը հոր ականջին հասցրեց փսփսալ միայն.

- Վաղը կպատմեմ:

Մութն ընկավ, գիշերը լուսացավ: Նոր օրը բացվեց, եւ էլի՝ գողն ու բուրդը: Մտքում նրանց գրկած, Սյուզանը գնաց դպրոց: Դասի ժամանակ Կարենը խաբեց ուսուցչուհուն.

- Տետրս տանն եմ մոռացել, տիկին Արաքսյա:
- Ստում ես, - հազիվ հասցրեց ասել ուսուցչուհին, մեկ էլ Սյուզանը ցատկեղ տեղից:
- Կարենին որ թողնես, գողություն էլ կանի, չէ՞, տիկին Արաքսյա:

Ամբողջ դասարանը փոթակացրեց:

- Նստիր, Սյուզան, - ուսուցչուհին հազիվ զսպեց ծիծաղը:
- Գողերը վտանգավոր մարդիկ են, իսկ Կարենը մի փոքրիկ սուտ ասաց, որը, հուսով եմ, կուղղի:

Սյուզանը մտահոգ նստեց: Դասի ընթացքում ոչ մի կերպ գլուխ չհանեց տանջող մտքերից: Երբ տիկին Արաքսյան հարցրեց, թե ինչու դասին պատրաստ չէ, ստեց, որ հիվանդ մորն էր խնամում: Սուտը վայրկենապես դուրս թռավ, առանց անհանգստություն պատճառելու: Հետաքրքիրն այն էր, որ ուսուցչուհին իրեն հավատաց, Կարենին՝ ոչ: Իսկ գուցե Կարենը ճիշտ էր ասում: «Տեսնես բուդ գողանա՞լն էլ ա հեշտ, ոնց որ սուտ խոսելը», - մտածեց Սյուզանը տուն վերադառնալիս, երբ անցնում էր խանութի մոտով:

Ինքնաբերաբար մտավ խանութ: Նայեց հերթի կանգնած մարդկանց, նրանց միջով մկնիկի պես առաջացավ: Կանգնեց վաճառատների մոտ, նայեց վաճառողուհուն, վերջինս հազիվ էր հասցնում սպասարկել հաճախորդներին եւ շուրջը համարյա չէր նայում: Սյուզանը մոտեցավ, արկղից վերցրեց հավի մի բուդ, դրեց մյուս արկղի մեջ: Նայեց վաճառողին՝ իրեն չէր նայում: Նորից վերցրեց բուդն ու պահեց ձեռքին: Տոպրակ չունեի, որ գցեր մեջը, իսկ դպրոցական պայուսակի մեջ չէր ուզում դնել: Նայեց շուրջը՝ մի երիտասարդ տղամարդ իրեն էր նայում: Բնականաբար մատը մոտեցրեց շուրթերին՝ տ՛ւն: Տղամարդը ժպտաց: Մարդկանց միջով կրկին ելումուտ անելով, Սյուզանը հասավ տղամարդուն, բուդն արագ գցեց նրա տոպրակի մեջ ու պո՛ւկ, փախավ:

Երբ մտավ տուն, մայրը հեռուստացույց էր դիտում:

- Մա, - ասաց զվարթ, - երեկվա պապիկն այնքան էլ վատ մարդ չի:
- Որտե՞ղ ես տեսել նրան, - մայրն անհանգստացած նայեց աղջկան:
- Չեմ տեսել, ելթադրում եմ, - Սյուզանը խոր շունչ քաշեց, ձեռքերը խփեց ծնկներին ու առավել զվարթ, մի քիչ էլ երջանիկ ծիծաղեց:
- Ես էլ բուդ գողացա: Էսօր սուտ էլ եմ խոսել: Ոչ մեկն էլ վախենալու բաներ չեն, հակառակը՝ ծիծաղելի են:

## **Անծանոթների վեպ** [Չարոտար Մոկացյան](#)

Անծանոթների մոլորակը, ուր ոչ ոք ոչ ոքի չի պատմում իր պատմությունը, այլ գրում է վեպ:

Անծանոթների մոլորակը, ուր ընդ հետ խոսում են անծանոթ լեզվով, եւ ինքը պատասխանում ես անծանոթ լեզվով եւ դուք՝ երկու անծանոթներդ, հասկանում եք իրար:

Անծանոթների մոլորակը, ուր գալիս ենք, որպեսզի ոչ ոք չի իշի նրանց, ում մենք ենք հիշում:

Անծանոթների մոլորակը, ուր գալիս ենք, որպեսզի լռենք:

Համրության վեպ

Երբ մեռնում է լսողը, ավարտվում է ասելիքը:

Ասելիքը, ինչպես պատուհանից, նայում է աչքերից:

Եվ մնում է ներսում:

Խլությունը ավարտվում է համրությամբ:

Երեկվա խուլերն այսօր համր են:

Այսօրվա խուլերը փողը լսելու են վաղը,

սակայն մնացյալը լռությունն է...

Ջազ - վեպ

Իրենք իրենց հետ խոսող մարդկանց քաղաքում

եղանակները թափառում էին դռների մոտ.

ներս մտնել չէին համարձակվում:

Իրենք իրենց հետ խոսող մարդիկ սիրում էին իրար:

Անհանգստանում միմյանց համար.

հոգում միմյանց մասին.

երգում միմյանց համար.

ապրում միմյանց համար.

հասկանում մեկմեկու...

Եվ միայն խոսում էին իրենք իրենց հետ:

\*\*\*

Մեռած լեզուների մարմաշը հաջողում է մեռցնել մեր մայրերից լսած բառերը մի առ մի: Առաջինն ավելորդանում է անունը:

\*\*\*

Տարածամ մեկնումի հպանցիկությունը դատարկ կառամատույցում թողնում է մեզ ժամանման սպասումի մեջ. ո՞ւմ:

\*\*\*

Սգազգեստավորների թափորի հետեւից դու քայլում ես, դու աղերսում ես, որ քեզ ընդունեն, դու կրծում ես շուրթերդ ամոթից. քեզ վրա այրվում է ճերմակ հարսնազգեստը: Քեզ այդպես են թաղել:

\*\*\*

Վաղանցուկ պահերը հավերժության գուցեւ արժանի են շքեղաշուք սգի, սակայն թույլատրենք հավերժությանն անկախ լինել մեզնից, երբեմն միայն՝ անսահման հազվադեպ, քառածեռ բուլերոյի մուռհանությամբ:

Մնացեք ձեզ հետ

Չսպաշապիկների կեսօրյա ցուցադրույթը հավաքել է ազնվածոր տիկնանց հավաքածու ընդարմությունը: Վարդակապերը այս լողաշրջանում միայն վարդագույն են, հարսնահանդերձները՝ սպիտակոտ՝ գիարդեւիցե: Հարսանյաց կեղծամները ենթադրում են խոհեմության երեկոյի՝ ջրի ջերմաստիճանի քմահաճությամբ: Չմեղանչելով ոչնչի եւ ոչ ոքի դեմ՝ հիշեցնեմ՝ զսպաշապիկները չեն քրտնեցնում, դիպակե թեւքերը ինքնամոռացման համակարգված պահերին խոստումնալից նպատակադրումներ են խոհապոռթկումներ են ցուցադրում: Խորհուրդ է տրվում ընտրել համաձայն մատների ծագումնաբանության եւ ավերի գրաֆիկական եզրահանգումների: Մեղրամովի երանգը, ամառվա հաջորդ արեւադարձի ընդդիմության մեկնությունն որպես, ավից հեռու չի քննարկվում:

\*\*\*

Ամեն ինչ կարող է նմանվել մահվան: Մահը կարող է նմանվել ամեն ինչի:

\*\*\*

Չգեստահապարանում պահելով շքեղաշուք հանդերձները՝ մենք քայլում ենք ցնցոտիներ հագած. մեր պերճությունը ճանապարհի փոշու համար չէ՝ մտածում ենք: Այդպես վարվում ենք մտքերի հետ, ու ցեցն ուտում է նրանց: Այն օրը, երբ վճռում ենք՝ ժամանակն է, փոշի է միայն: Ապա մյուսներն ափսոսում են իրենց պերճությունը այդ փոշու մեջ:

\*\*\*

Սեփական սխալների պատճառաբանության մագիստրոսները պատմությանների պայծառ արժանապատվությամբ հանդիսավոր ճեմում էին անշեղ դեպին: Նրանք չէին կասկածում: Նրանք հավատում էին իրենց անկասկածությանը:

Նախանշաններ

Երբ ժպտում է դիակը, ուրեմն դաստիարակությունն անմահ է: Եվ անձրեւ է գալու:

Եթե ժպտում է դիակը, երբ անձրեւ է գալիս, ուրեմն չարախնդությունն անմահ է:

Եթե ժպտում է դիակը, երբ անձրեւ չի գալիս դեռ, ուրեմն հույսն անմահ է:

Կանանց, որոնք արտասովոր են արական պոեզիա կարդալիս

Ես ձեզ ասելիք չունեմ:

\*\*\*

Ընդվզումից հետո մեր ձեռքերին մնում են պարանոցի հետքեր:

Ամենքս... եւ ամենքս Աստծո...` ճերմակ ու անմասն, ինչո՞ւ եւք որոճում միմյանց:

## Մահվան քայլերդ

### Աստղիկ Սիմոնյան

Զամին քաշքշում էր մի տասնյակի չափ կծկված ու լացակումած ինչ-որ մարմինների քթեր ու ականջներ: Դետո էլ ժամանակ ամ ժամանակ խառնշտում էր կաղնեփայտից պատրաստված դագաղի մեջ հանգրվան գտած նախկին մարդու, ներկայիս դիակի, մագափուկները:

Շենքի պատուհաններից մեկի մոտ մի աղջիկ էր կանգնած: Էնպես փոքր-մոքր` խոշոր քթով, բայց հաստատ շոգում էր: Մինչեւ գոտկատեղը կախվեց պատուհանից ու այնքան ուշադիր զննեց հանգուցյալին, որ վերջինս նույնիսկ քրտնեց:

Երաժիշտներն անհանգիստ դոփեցին: Դանգուցյալի մտերիմների տասնյակն ավելի աշխուժացավ: Դիշվեցին հանգուցյալի մանկության չարածնի արկածները, անհանգիստ պատանեկությունն ու փոթորկուն երիտասարդությունը, խոհուն ծերությունը, որն, ավաղ, կիսատ մնաց:

Դաստատ շոգից խեղդվող աղջիկն աչքը չէր թեքում հանգուցյալից: Գեղեցիկ հանգուցյալ էր:

Դուրովկահարը փորձում էր կռահել հոգեհացի սեղանի չափսը: Երեւի թե, ամենաքիչը, երկուսից-երեք սեղան` 1,5-ը 2-ի վրա:

Դիուչին քելեխից հետո դեռ շուկա էլ պիտի մտներ: Թոռ էր ծնվել: Տղա թոռ: Տոտիկ պիտի աններ: Ժպտաց:

Նա, որի թեւից ակորդեոն էր կախված, ոչինչ չէր մտածում: Լուռ էր...

Տասնյակի արցունքների պաշարը սպառվում էր: Տարեց մի կին, երեւի հանգուցյալի ամենամոտ հարազատը, մի վերջին անգամ քիթն ու աչքերը թաշկինակի մեջ իրար խառնելով` շրջվեց երաժիշտների կողմը:

Դագաղը բարձրացավ: Իր բարձունքից հանգուցյալը հպարտ մի հայացք գցեց շենքին, բակում կանգնած տասնյակին, աչքով արեց շոգից խեղդվող աղջնակին, կանգնեց երաժիշտների կազմած շարքի հետեւում ու քայլեց... կյանքին ընդառաջ:

Շոգից խեղդվող աղջիկը փակեց պատուհանը: Լարված ու մանրակրկիտ քայլերով մի երկու անգամ չափչփեց սենյակի չորս անկյունների միջեւ. ընկած տարածությունը, մինչեւ որ դեմառդեմ հանդիպեց իր արտացոլմանը:

Դանգուցյալը, որն արդեն երեք օր է, ինչ հույսը կտրել էր իր սեփական երկու ոտքերից, ապավինած մեքենայի չորս անիվներին` գլորվում էր:

Դուրովկահարը հաշվում ու չէր հավատում: Տասնմեկ հոգով մարդ թաղե՞լ կլինի: Սկսեց հետաքրքրվել հանգուցյալի ազգությամբ: Ամերիկացի չէր: Դետո նեղացած փակեց աչքերն ու 1,5-ը 2-ի վրա 2-3 սեղանի փոխարեն 1-ը 1,5-ի վրա պստղիկ մի սեղանիկ տեսավ:

Դիուչին ուշադիր զննեց սեփական բազուկը` տոտիկի չափը: Կինն էր ասել:

Նա, որի թեւից ակորդեոն էր կախված... Մի խոսքով, նա լուռ էր:

Շոգից խեղդվող աղջիկն ուշադիր զննեց իր երկար քիթը: Դետո պառկեց գետնին, խաչեց ձեռքերն ու փակեց աչքերը:

Դագաղի կափարիչը հագցրին իր տեղն ու դրանով վերջնականապես փակվեց հանգուցյալի դիտակետը:

Շոգից խեղդվող աղջիկը հիմա էլ սկսեց լարվածությունից խեղդվել, երբ հասկացավ, որ ոչինչ չի տեսնում:

Հանգուցյալը՝ գետնի տակն անցնելով, մի վերջին ևսոր առիթ ստեղծեց տասնյակի սկիզբ առնող եղերերգի համար:

Շոգից խեղդվող աղջիկը մի փոքր բացեց աչքը և նայեց հայելուն: Լարվածությունից ծամածածկ դեմք՝ մեջտեղում մեծ, շատ մեծ մի քիթ: Ու մտածեց, որ իր նման գեշ մեռելի վրա դժվար թե եղբան լաց լինեն:

## Տարարացիների բնութագիրը

### Դեկտեմբերի 1-ին

Տարարացիներն ապրում են Տարարա լեռան շուրջն արդեն երկար դարեր: Դա նրանց իրավունք է տալիս մտածելու, թե լեռն իրենց է պատկանում: Տարարան ամենուր է՝ նրանց դրոշին, նամականիշներին, դրամին և ազգային օրհներգում: Ի միջի այլոց, նրանց երեխաները ծնվում են հետույքի վրա կապտավուն հետքով, որ շրջված V-ի տեսք ունի: Դա նրա նշանն է: Երբ տարարացին գլուխը բարձրացնում է, աչքերն անպայման դեմ են առնում Տարարային: Նա ապրում է այդ վեհ բնապատկերի մոլուցքով: Եվ հույների նման, որ իրենց տները շրջում են ծովի կողմը, տարարացիներն ապրում են իրենց հողին, բայց՝ աչքները դեպի Տարարան: Տարարան տարել է նրանց խելքը, լեռը նրանց Մեքքան է, Տիրոջ Գերեզմանը, Արտասուքի պատն ու վերին Երուսաղեմը: (Եթե տարարացիներին հանդիմանեն, թե կռապաշտ են, կառարկեն, թե լուսինը պատկերված է շատ ժողովուրդների դրոշների վրա, չնայած նրանց չի պատկանում: Ինչու՞ ուրեմն իրենք պիտի բացառիկ իրավունք չունենային այս լեռան նկատմամբ):

Բայց՝ ահավասիկ: Տարարացիներն այսօր դժբախտ են: Նրանց գրկել են իրենց սիրելի սարից: Դա տարարացիների պատմության ակնառու ողբերգությունն է: Նրանց կոտորել են, գրկել սեփական հողից, իսկ Տարարա լեռն էլ (անշնորհակալ մեկը) մնացել է դահիճների մոտ: Եվ երբ վերապարծներին երեւում է Տարարան, որ սահմանի մյուս կողմն է, նրանց լեռը կարմիր են տեսնում: Գիշերներն անցկացնում են մղձավանջների մեջ, ցերեկները՝ քաղաքական քննարկումներում: Եվ սերունդներ են հանգչում՝ հաջորդներին թողնելով իրենց ցավը հավերժացնելու հոգսը կամ էլ լուծում գտնելու պարտականությունը: Տարարացի երեխան հորից Վրեժ անունն է ստանում: Մի ամբողջ ծրագիր:

Տարարացիները մյուս տարարացիներին սիրում են չափավոր, քանի դեռ մյուսի մեջ տեսնում են իրենց կրկնակին, իրենց նմանատիպը: Երկու տարարացի իրար հետ խոսելիս գործածում են մի ծածկագիր, որը հիմնված է Տարարայի հավերժ և անվիճելի պաշտամունքի վրա: Յուրաքանչյուրը չափում է մյուսի տարարայություն արտադրելու և վերարտադրելու կարողությունը: Տարարացիներն իրենց միտքն արբեցնում են տարարայական հիշողությամբ: Միմեծիգամի և կրկնության մեջ ապրող ժողովուրդ են: Ես նման եմ, ուրեմն ես գոյություն ունեմ: Մշակութային պանուրգիզմ: Մինչդեռ տարարացիներին գերագույն հաճույք է պատճառում մեծ խմբերով հավաքվել փողոցներում կամ հանրային հրապարակներում և Տարարայի պաշտպանության կամ փառաբանման համար ցույցեր կազմակերպել: Այդժամ նրանց գոյություն ունեն: Տարարան ընդունման կամ բացառման չափանիշ է: Եվ դա այն աստիճանի, որ անհնար է պատկերացնել: Մեկը մյուսին նրանց չափում են ճշմարիտ տարարիզմի չափանիշներով: Մնացած ամեն ինչը մտքի անընդունելի շեղում է:

Բայց հակառակը են հավասարապես ճիշտ է: Հոգու խորքում տարարացիներն ատում են տարարացիներին: Խանդում են իրար, փախչում իրարից, սպանում:

Բոլոր տարարացիները չէ, որ ապրում են Տարարիայում: Ոմանք լքել են անիծյալ հողերը Մեծ Աղետից հետո (ինչը կրկնակի ուրախացնում է նրանց դահիճներին): Այսօր տարարացիներն բույն են դրել աշխարհի բոլոր երկրներում: Երբեմն զարմանում են՝ նրանց հանդիպելով այնտեղ, որտեղ երբեք էլ չէին սպասի տեսնել: Համոզվելու համար մի օր Գրբի անապատում մի քար բարձրացրի են քիթ քիթ առա մի տարարացու հետ, որն այդտեղ պատասպարվել էր շոգից: (Իր անցքի խորքում կույց եկած՝ Նա նման էր տորոված ու գրեթե չորացած թրիքի: Սկզբում ինձ թվաց, թե սաղմի դիրք ընդունած յոգ է: Իրականում նրա եռագույն (կապույտ, կարմիր, նարնջագույն, ինչպես որ մի դրոշի վրա է) հյուսվեց բերետի տակ ճանաչեցի Ֆիդա Պերանին, (տարարա-տիպեղծ այսինքն՝ տարարայական, տի - տիպոր և եղծ - բազմաստեղծ նկարչին): Այնպես որ, երբ որեւէ տարարացի մեկնում է արտասահման, կարող է վստահ լինել, որ իրեն մի քիչ կզգա ինչպես հարազատ տանը՝ այնտեղ գտնելով իր եղբայրներին: Դրանք պատից այն կողմ ապրող տարարացիներն են, ում սովորաբար կոչում են Տարասփյուռ կամ սփյուռքի տարարացիներ, որոնք աշխարհ մի անգամ թափվելով սարից, ծածկել են աշխարհի գետիկը: Բայց Տարարիայում դեռ աշունը շարունակվում է, շատերն են մեկնում, քամուց բշկվելով, որ գիշերները մահու չափ հաչեն՝ Տարարիայից հեռու:

Ներկա պահին էլ տարարացիները վերջնականապես լքում են Տարարիան: Այդպիսիների թիվն ամսեամիս աճում է: Շատերը տարիներ առաջ իրենց հյուրընկալած երկիրը լքել էին, որ ապրեն Տարարիայում տարարացիների հետ: Բայց բնիկ տարարացիներն անընդհատ ստորացրին նրանց, այս «եղբայրներին»: Եթե գոհ չես, վերադարձիր այնտեղ, որտեղից եկել ես: Այնպես որ այսօր, երբ բաժանկն արդեն լինել է, «եղբայրները» բաժանվում են այն տարարացիներից, որ հիմար բաղձանքն ունեն միայն իրար մեջ ապրելու ու իրար սիրելու: Բայց բոլոր տարարացիները քեն են քշում այս դասալիքների դեմ: Առաջինը դրանից բողոքում են նրանք, ովքեր արդեն լքել են նավը կամ նրանք, որ երբեք չեն էլ փորձել թիավարել, քանի որ միշտ ապրել են Տարարիայից դուրս:

Այն պահին, երբ «փրկվեք, ով կարող է»-ն է մոլեգնում Տարարիայում, որտեղից ամեն ամիս երկու հազար մարդ է տարագրվում, երբ դրսի ոչ մի տարարացի չի պատրաստվում հաստատվել երկրում, որոշ մարդիկ հողեր են պահանջում, որքան հնարավոր է ավելի բարձր գոռալով. «յան, յան, յան»: Յուրաքանչյուր իրեն հարգող տարարացու կյանքի իմաստը կորուսյալ հողերը պահանջելն է: Սա միակ հավատո հանգանակն է, կարիճը, որն իր պոչն է խաճում: Մտում է միայն իմանալ, թե արդյո՞ք այս հողերը վերագրավվելուց հետո կարող են նորից կորսվել: Այդ դեպքում նորից պետք կլինի վերսկսել պայքարը: Եվ այսպես՝ մինչև աշխարհի վերջը... Ի դեպ՝ Տարարիայի պատմությունը, եթե նրան նայես որոշ բարձրությունից, ցույց է տալիս, որ նրա սահմանները սարսափելի շարժուն էին դարձել: Որոշ դարերի ընթացքում նույնիսկ լրիվ անհետացել են:

Ի՞նչ է առաջարկում տարարացի փիլիսոփան տարարացուն: Լինել և մնալ տարարացի:

Ի՞նչ է առաջարկում տարարացի բանաստեղծը տարարացուն: Լինել և մնալ տարարացի:

Ի՞նչ է առաջարկում տարարացի կրոնավորը տարարացուն: Լինել եւ մնալ տարարացի:

Գուցե Թորոսը սա՞ էր ուզում հասկացնել, երբ ասում էր.

Մեր փիլիսոփաները փիլիսոփայությամբ են զբաղված, բայց փիլիսոփաներ չեն:

Մեր պոետները պոեզիայով են զբաղված, բայց պոետներ չեն:

Մեր կրոնավորները զբաղված են իրենց կրոնով, բայց գուրկ են միստիցիզմի զգացումից:

Տարարացի գրողները դիմում են տարարացիներին, որպեսզի զարգացնեն նրանց տարարայնությունը: Նրանք հազվադեպ են շեղվում այս ծրագրից: Տարարայական ամեն ձայն մի վարիացիա է Տարարիայի թեմայով:

Տարարացիները քիչ ունեն սկանդալային գրողներ: Նրանց գրողներն իրենց վախենում են սկանդալից: Մեկը մյուսին լռելյայն համոզում է իրար նման հաչել: Այս պայմաններում գրողը դառնում է վախկոտ, անտարբեր կամ դեմագոգ: Իսկ ժողովուրդը տեղից չի շարժվում:

Տարարացիներին հասկանալու համար պետք է ծանոթ լինել երկու թվին: Աշխարհի ոչ մի ուրիշ ժողովուրդ այդքան չի կիրառում բաժանումը, այսինքն՝ երկու ոչ դիալեկտիկական եզրերի հակադրումը: Պետք է ենթադրել, որ սա է նրա գոյության եւ միասնականության միակ եղանակը: (Արդեն ասել եմ, որ տարարացին դիմացինի մեջ փնտրում է իր կրկնօրինակին, որպես տարարայականության նմուշ: Հենց հանուն կրթոտ տարարայնության է, որ տարարացին կմերժի մի ուրիշ տարարացու, որն իրենից տարբեր տեսակետներ կունենա):

Ինչպես արդեն պարզ դարձավ՝ աշխարհում երկու վայր կա, որտեղ տարարացիներ են ապրում. Տարարիան եւ մնացած աշխարհը: Երկու հայրենիք ունեն վերջին հաշվով: Այս իրավիճակն իր համապատասխան հետեանքներն է թողել. տարարացիները երկու լեզվով են խոսում, երկու առաջնորդ՝ մի եկեղեցուն, երկու քաղաքական կուսակցություն՝ (կողմերն ու դեմերը), այս քաշելու երկու եղանակ, անդրավարտիքի երկու գրպան, երկու ականջ (մեկը լսելու, մյուսը՝ խուլ ձեւանալու համար), ֆուտբոլի երկու թիմ (չնայած այս մի բանից գուցե երեքն ունեն), երկու գետ (որոնք Տարարիայում երբեք չեն միախառնվում իրար), հակադիր երկու ճանապարհ նույն ավտոմայրուղիներում, երկու ձեռք (մեկը բարելու, մյուսը...), ավտոբուսի երկու մուտք, որ նաեւ ելքեր են եւ այլն... Հա, քիչ էր մնում մոռանայի՞ նրանք ուղեղի երկու կիսագունդ ունեն (որով ամեն ինչ բացատրվում է): Տարարա լեռը երկու գագաթ ունեցող լեռ է. արժե՞ր այս երկվիսակության մեջ տեսնել այն նմուշը, որին հարմարվում է յուրաքանչյուր տարարացի: Բայց ես դրան չեմ գնա:

Երբ տարարացին մկրտում է երեխային, նրան Աստծո գավակ չի դարձնում, այլ՝ տարարացի:

Տարարացիներն անցյալի այնպիսի պաշտամունք ունեն, որ ի վերջո անընդհատ վերարտադրում են այն:

Նրանք գիր ունեն, բայց միտքն են կորցրել:

Միակ տարարացիները, ովքեր Տարարիան պաշտպանում են, նրանք են, որ վրան են հարձակվում: (Բայց նրանք շատ արագ չեզոքացվում են. հալածվելով, կլլվելով կամ էլ պարզապես, կղկղակծվելով):

Տարարան աշխարհի ծայրն է: Գագաթ... Անսահմանության ցուցիչ, ճիշտ է, բայց անսահմանության համեմատ շատ փոքր:

Տարարան լեռ չէ: Այն ջրապտույտ է, ծուղակ, շտրիի եւ ճակատագրականության իդեալ:

Տարարացիները նմանակում են, նմանեցնում իրենց իրենց, ինքնակրկնօրինակում, վերարտադրում նույնը... Իսկ հորինել գիտե՞ն:

Խոսում են ցեղասպանությունից: Ոչ թե մահվանից: «Նեկրո-մշակութային պաթոսի չեմպիոններ» են (Ժ.Բ.): Իրականում մահը նրանց չի հետաքրքրում: Միայն այսկողմայինը գոյություն ունի: Պատմությունը: Ռ՞վ է ավելի առաջ եւ ով՞ հետո: Նրանց կյանքը՝ պատմության մեջ, պատմության դագաղի: Նրանց կյանքն իրենց սահմանների պատմությունն է: Այդ սահմանների դագաղի մեջ:

Տարարացիները զգում են, մինչդեռ կարծում են, թե մտածում են: Սա է նրանց ինտելեկտուալների դրաման, այն մարդկանց, ովքեր իսկապես մտածում են:

Արդյո՞ք իրենց անգիտության զոհերն են: Բանտված սեփական ինքնապատկերման շրջանակում, տարարացիներն իրենց համարում են անուղղելի նահատակներ:

Տարարացիները երկու-երեք օրը մեկ են սափրվում: Մորուք պահելը սզի նշան է, բայց՝ նաեւ իրար ճանաչելու: Դրան գումարվում են նաեւ սեւ հագուստները, երբ որեւէ առիթ չկա: Լալկաններ: Կարծես թե նրանք են, որ կան աշխարհի միամիտը: Համոզվելու համար մի օր հագուկապի մասին հարցրի Ջանրու Միերդադին՝ նկատի ունենալով, որ ինքն այս համագգեստը կորողների նախատիպերից էր, արտաքինն էլ ենթադրել էր տալիս համապատասխան ներքինի առկայությունը եւ՝ այդպես շարունակ: Նա հայտարարեց, որ ինքն ապրում է պերմանենտ սզի վիճակում, ինչպես որ հեղափոխական իրավիճակն է գաղափարական նույն տեւողությունն ունենում: Ինձ անհանգստություն պատճառեց այն, որ նրա մազախոփվա արագ ճերմակում էր, եւ իրեն մասնակից դարձրի անհանգստության: Ամեն ինչ շատ պարզ է, պատասխանեց ինձ նա, երբ մազերս շատ ճերմակեն, սեւ զգեստներս սպիտակներով կփոխեմ: Եվ ամեն ինչ իր տեղը կընկնի: Իսկապես, Ասիայի որոշ երկրներում սպիտակը սզի նշան է: Բայց շուտ է կեղտոտվում:

Այն ժամանակից ի վեր, երբ Տարարան մարել է իր կրակը, այն ժամանակից ի վեր, երբ սառել է (սպասելով, որ մի օր անակնկալ կհավի հին երկրի վրա՝ որպես սեփական շքեղության ինքնասպան պատկերամարտիկ), տարարացիները, որպես իրենց լեռան արժանի զավակներ, սնվում են հրդեհային ճաշացանկով՝ սնուցելու համար իրենց պաշտամունքը, կծու համեմված մսեր, կրակի ջուր, որ խմում են մեծ բաժակներով, որպես իրենց մշակութային ջուրը՝ դեմքը ծամածռելով նախ գործարկված ջանքից, հետո՝ թեթեւացած, քացախի մեջ թաթախված ամեն տիպի բանջարեղեն՝ եւ... էլ չասեմ՝ ինչեր: Տարարացիները մակերևութ են, այլ կերպ ասած՝ սպանդագործներ: Բացահայտ մորթագործներ են, մսագործներ, որ աշխատում են առանց կեղծավորության, քանի որ չեն

թաքցնում հյուրերի աչքից այն կենդանուն, որին մեռցնելու եւ մատուցելու են խնջույքին: Ի միջի այլոց, կենդանին չի մեռնում, սատկում է: Մեռնելը մարդկանց առանձնաշնորհն է: Ահա թե ինչու, տարարացու մտքով չի անցել իր գոյության օրվանից, թե կենդանին կարող է տանջվել: Երբեք տարարացին չի հասնի դրա գիտակցությանը, չի ընկալի ուրիշ կյանքի իմաստը: Տարարայում ոչխարների ջարդը գազաթնակետին է հասնում լավ եղանակի գալստյան հետ՝ ապրիլին: Եկեղեցիների ու մենաստանների մոտակայքում էլ հատուկ վայրեր կան նախատեսված այս ծեսի համար. քարերը կարմիր են արյունից, իսկ կանաչ ճանճերը երկաթյա ստամոքսներով իրենց գործն են տեսնում աղբախոցներում լեշի մնացորդների վրա: Դուք խոսում եք, բայց իսկական խնջույք է արեւի տակ հատկապես այն բախտավոր օրերին, երբ Տարարան երեւում է ճերմակ ու սուր, ասես ժանիք: Մատաղը տարարայական կրոնի անբաժան մասն է: Տարարացիները՝ այդ աղջամուղջային մթամածները, որ օժտված են աղոտ հիշողությամբ, սիրում են սրբությունը նույնացնել մեծ խժռումի հետ, իսկ Գառան երկրպագությունը՝ ոչխար լափելու: Կենդանուն նախ մասնատում են՝ մարդկային ազահ բերանի չափով, հետո մսակտորը թաթախում կարմիր պղպեղի ու սոխի մեջ եւ այդ ամենը հանձնում կրակին, որ տարարայական խաղողի վագերով սնուցվում է, ինչպես որ հարկն է: Լա, ով չի տեսել, թե ինչպես է տարարացին իր բոլոր ատամներով ու մատներով քաշքշում մսի ըմբոստ կտորը, ինչպես է գործում տգրուկի տոկունությամբ, վայրի հաճույքով ծամում համեմունքների կրակը, ի վերջո հրաբխային խառնարանի վերածելով իր կերակրափողը, ոչինչ չի տեսել:

Այդժամ, փորը ուռած իրար հաջորդած զարեշերտից, փքված՝ եղբոր կենացի գոլորշիներից ու զավեշտից, ամեն տիպի բառային լավաներ ու մնացուկներ արտաթորող բերանով՝ տարարացին հասնում է իր գազարտադրության նիվանային: Մեկ էլ կարող է նույնիսկ դոնդողային պարեր պարի կամ թոշնած երգեր երգի կարտագին բյուզի հնչյունների տակ, որ կատարվում է բարակածայն թմբուկով եւ ռնգախոս դուդուկով, որ երկրի տիպական գործիքներից են: Տարարացին այնքան է սովորել ատամները խրել մսի մեջ, որ նեղության ժամանակներում նրա հայացքն ուղղվում է դեպի կենդանաբանական այգի, այնպիսի ընչասեր հայացք, որ աչքը դուրս է պրծնում, ու թուքը վազում է: Ինչ-որ մի տարի նույնիսկ տեսել են, թե ինչպես վայրի գազանի տեսքով մարդիկ պտտվում էին վանդակների շուրջը: Ֆրիդա շիմպանզեն եւ Ռուժան սեւ արջը՝ Տարարայի հատկանշական աքսորյալները, փրկվել են դեռես: Բայց կոմունիզմի մայրամուտի եւ անարխիստների արշալույսի հետ նրանք դողում են իրենց ճաղերը դողացնելու աստիճան: Իսկ եւ նրանց պատկերացնում եմ որպես գեղեցիկ կտորաշար՝ կարմիր պղպեղով համեմված, թարմ սոխով, տեղական համեմունքներով օծված, մարմանը կրակի վրա խանձվելիս, հետո սիրով մանրացվելիս տարարայական ծնոտի կողմից: Իսկապես, ի՞նչ խաղաղեցման կհանգեցնե՞ր դա: Եվ ինչպիսի մարտողական կերպափոխությունների ականատեսը կդառնային մեր երկու ցուցադրական և մուշները որեւէ քաղցած մարդ-եղբոր փորում:

Ֆրանսերենից թարգմանեց Նունե Աբրահամյանը

## **Վերջին օրը** **Սհեռ Բելլեոյան**

- Դեմքը չեմ տեսել. ամառային գլխարկով է՝ գլուխը կախ, - ձեռքով արդուկում է դեղին փողկապը, որի աստառին անընթեռնելի տառերով գրել է. «Մա՛հ մայրոհն», - գլխարկի ճակատին ինչ-որ բան կա գրած, բայց չեմ հասցնում կարդալ՝ փախչում եմ:

- Դու քեզի տեսել ե՞ս, արա, - բարկանում է մայրը, - ոնց որ քյասիբի տոնածառ ըլնես: Խի՞ ես մոտս գալի: Կարող ա ես քո մաման եմ, յա թե չէ պապան: Էդ գալոյովդ ո՞վ քո հետեւից կընգնի, բես:

- Դեմքը չեմ տեսել, բայց էսօր գործից որ հեյա, էլի ինձ էր սպասում:

- Հա, էսօր շեֆդ գանգեց, ասեց կոստը գլխին քաշեց ու էնքան ցիտեք, որ խլինքը փուչիկ կային: Շեֆի՞դ ի՞նչ ես արել, արա:

Ուսերն է թրթվում, ամոթից ուղղում է սպիտակ կոստյումի օձիքը, որի ներսի կողմից իր ձեռքով ասեղնագործել է. «Արա շեֆի՞դ այն, ինչ էլի որ ուզի՞՝ քեզ անեն»:

- Դեմքը չեմ տեսել, բայց միշտ մոտենում՝ կրակ ա ուզում, գլուխը չի բարձրացնում: Ես փախնում եմ, ինքը լարում ա հետեւիցս ու սաղ գիշեր դուռս կամաց ծեծում ա: Ինձ մի երկու օր ձեզ մոտ պահեք, ընկեր մայր:

- Ես քեզի ի՞նչ ընկեր. կարող ա՞ եսի քո հըմար սանատորիա ա, թե՞, որ կուլտուրական եմ խոսում, չոգում ես՝ լեզուս ոսկեջրած ա:

- Դեմքը չեմ տեսել, բայց կարող ա ինձ խփի:

- Էդ վախտ էլ կգաս, - մայրը կանգնում է, սեղանի վրայից պարզում ձեռքը, ամոթխած ժպտում է, - ավել պակաս ներող եղեք, գործեր ունեմ, - անձամբ բացում է դուռը, - նորեն համեցեք, բայց ուրիշ գալոյով:

Բաժանմունքից դուրս է գալիս գիշերվա տասին, հետեւից լսում է ոտնածայներ: Ամուր բռնում է «Խմբապետ Շավարշ» գոտին, որ վախից չճչա եւ սկսում է վազել: Հասնելով իրենց շենքին՝ արագ բարձրանում է հինգերորդ հարկ, դողացող ձեռքով բացում դուռը, որի վրա անուն-ազգանվան փոխարեն գրված է «Չգա քեզ, ինչպես՞ իմ տանը», ներսից փակում է եւ մոտենում պատուհանին, որին կարմիր շրթներով գրել է FINISH: Դուռը կամաց թակում են: Մոտենում է, ականջը հպում դռանը: «Ապե, մի վախեցի, ես օպեր եմ, ընձի մայրն ա քու վրա դրե»: Չի հավատում, բացում է պատուհանը եւ ցած է նետվում:

II

Ներքեւի երկու հարկերում ծխում են երիտասարդներ: Ավելի ճիշտ նույն երիտասարդը ծխում է տարբեր հարկերում, եւ վերեւինը մոխիրը թափ է տալիս ներքեւինի գլխին: Նրանք բնագոյաբար թաքցնում են սիգարետները, բայց իրեն ճանաչելով շարունակում են ծխել: Ներքեւի պատշգամբում սիրահար գույգ է: Տղայի ձեռքը հանգչում է մյուս տղայի ուսին, երազկոտ աչքերում արտացոլվում է հետույքի պես լափրշ ու ցանկալի լուսինը: Չուզընկերը ձախ ճկույթով քնքշորեն քչփորում է աչ քթանցքը: Մյուս հարկում համերաշխ ընտանիքի երջանիկ հայրը տիկնոջն է պարզում ափսեւն, որի մեջ գրգռված տիկինը սալաթ է լցնում՝ «ես քեզ ուզում եմ» հայացքով: Չուզընկերը շատանում են ամայի պատշգամբները, իսկ պատկերի սյուժեն, մնալով կենցաղային, դառնում է ավելի ողբերգական: Հայրը գոտիով դադում է զավակի հետույքը, որի դեմքին (զավակի) գոհունակ ժպիտ է: Հաջորդ հարկում, կարմայի օրենքի համաձայն,



վերոհիշյալ գավակը սղոցում է հոր վիզը՝ փորձելով որսալ մակարենայի ձիթով: Տղան մռայլ է, հետույքը՝ բաց, հոր դեմքին գոհունակ ժպիտ է: «Բարի գալուստ դժոխք» կավիճով գրված է պատին: «Օգնի, տըվար, - գոռում է անկյալ մայրը, տես քու էրեսից ուր ընգա: Գալող տու՛ կախվեմ»: «Չեմ տա, - գոռում է մայրի հետելից, - սիրածիս նվերն ա»: Պատշգամբները ավարտվում են, եւ սկսվում է փակ պատուհանների շարքը: Պատուհաններից մեկին գրված է 21, մյուսին՝ 20: Մնաց 19 հարկ: 18, 17, 16 - պատուհանների հետեւում կանգնած է իրեն հետապնդողը: 15, 14, 13 - նա ամեն հարկում ավելի է բարձրացնում գլուխը: 12, 11, 10 - այն պահին, երբ իրենց աչքերը պիտի հանդիպեն, անծանոթը շրջվում է եւ հեռանում պատուհանից: 9, 8, 7 - պատուհանից երեւում է, որ մոտեցել, ակնաչքը հպել է դռանը: 6, 5, 4 - վերջապես ճանաչում է հետապնդողին, գլխից հանում է ամառային գլխարկը: 3, 2, 1 հասցնում է կարողալ ճակատամասին գրվածը. «Վերջը լավ կլինի»: Չրոյի փոխարեն գրված է FINISH բառը. այդպես էլ եղավ:

## Դ ա կ ա թ

### [Կարեն Ղարսյան](#)

Երեւի: Գարեջուրը դարձել է պահանջկոտ իմ հանդեպ: Երեւի: Մենք դուրս ենք գալիս քաղաքից, ուղղվում դեպի քաղաք: Երեւի: Գլուխն է քորում մեքենայի հետեւում՝ նստած ընկերս: Երեւի: Չվերն է քորում դիմացը՝ նստած վարորդը: Քնկոտ՝ աչքերս եմ քորում, շուտով անցնելով կոպերիս, անշարժ երթեւեկում եմ:

- Ո՞ւրդե եմք տեսնվելու:

- Բարում:

Երեւի: Գիտեինք՝ որում, եւ հանգիստ նստած սպասում էինք՝ երբ մեզ բարմենը մեր երեք կում ջինը կբերի: Երեւի: Դեռա:

- Դե՞ն ա, արա:

Երեւի: Ես ուշադիր գննեցի նրա կազմվածքը: Երեւի: Նա է: Երեւի: Կողքս նստեց եւ մի ժպիտ պոռթկաց: Երեւի: Ես էլ: Երեւի: Չգիտեմ, թե ինչից էի գոհ:

- Ո՞նց ես:

- Ոչինչ:

- Իսկ դո՞ւ:

- Թգիտեմ՝ եզ շոֆեռն եմ:

- Ես իրա ընկերն եմ, ո՞նց ես:

- Լավ: Ես ո՞րոյից ես գթե սրանց:

- Ըստից-ընդից...

- Զել էթանք ստից:

- Չեր յա՞ն:

Երեւի: Ընկերներս քիչ անհարմար դրույթյան մեջ դրեցին, լարվեցի. ես գլխով արեցի երկուսին եւ շշուկ գարեջրի ու սրտովդ աղջկա հետ դուրս եկա: Երեւի: Անձրեւը կտրվել էր. վերցրեցի տաքսի, նա սուրճ դրեց, խմեցինք, երաժշտություն դրեցի, պարեցինք, դաշնամուր նվագեցի՝ աշխատելով սեւ ստեղներիս դիսկրիմինացիայի չենթարկել, տեղերը բացեց, կրծկալը արձակեցի, լայնույթս բացեց, շոյեց մազերը, դուրս հանեց, փշաքաղվեցի, բերանը բացեց, փակեցի աչքերս: Երեւի: Շատ չանցած կարոտեցի ընկերներիս: Երեւի: Չանգեցի ընկերներս, լավ է՝ գտա, եւ հրավիրեցի այնտեղ, ուր որ էի, մի քիչ ցրտոտ էր, մեկ բաժակ տաքտաք թեյ խնդրեցի նրանից: Երեւի: Եկան, օղիով, հերթով բավարարվեցին, վճարեցի: Երգի՛: Պատահականորեն մտա նրա սենյակ, մտութն էր լվանում, ինձ տեսնելով՝ իներցիայով սկսեց անցնել գործի, հազիվ հետ պահեցի: Երեւի:

Երեւի: Բան չունեի ասելու եւ դուրս եկա փողոց: Երեւի: Օրվան նման վերջ տալ, տուն, դատարկությունից քնելու, չէի կարող գնալ: Երեւի: Չէի կարողանա ինձ դատարկողին սպանել: Երեւի: Նա ինձ ավելի շուտ սպաներ, կամ կխլելի ոտքի տակից գետինը, ձեռքից իր բերնակարանը, պատերին թոխումե պաստառներ, կզրկելի նրան իր մանկության սնդուկից, կամ նա կսիրահարվեր ինձ: Երեւի: Ես՝ կսի... Երեւի: Երեւի: Երեւի: Մի այգում քիչ նստելուց եւ աննկատելիորեն քնի անցնելուց կես ժամ անց գնացի տուն: Երեւի: Երբ հասա, տեսնեմ՝ դռան առաջը փակել, կուչ է եկել այդ աղջիկը, խռաացնում է: Երեւի: Ես ինձ երբեք թույլ չէի տա կոխկրտելով անցնել խմբիացնող աղջկա վրայով: Երեւի: Այնքան հարազատություն կար նրա եւ այդ շեմի միջեւ, որ որոշեցի նրան չխանգարել, մենակ եւ հանգիստ թողնել իր կաթոգին զգացմունքների հետ: Երեւի: Ես գնացի նրա տուն: Երեւի: Այնտեղ ինձնից բացի ոչ ոք չէր չարաշահում նրա հյուրասեր բերանիկը: Երեւի: Թակ, թակ: Երեւի: Նա վազեց դրանք վերձանելու, ես հյուրասենյակից գոռում էի՝ մտեք, մտեք: Երեւի: Աղջիկն ընկճված վերադարձավ, ուր որ էի, եւ սկսեց արտասվել՝ գլուխը թեւերին՝ սեղանների վրա, եւ սկսեց արտասվել՝ գլուխը վզին՝ դաշնամուրի գլխին, եւ սկսեց արտասվել՝ մի ոտը խոհանոցում, մյուսը՝ գուգարանում, մյուսը՝ եռացող կաթսայի մեջ, որտեղ մայրը սրտացավանքով խաշ էր խառնում:

- Ինձ կուտի ետ դեւը:

- Ետ ո՞ւմ ա կերե, որ քեզ ուտի, խոզուկ:

- Ընկերոջս:

- ...Բա ճիշտ չի արե՞:

-

- Ինչ էր ուզում:

- Քեզ էր ուզում տենա, ասի հերիք եղավ:

- Ու:

- Զցեց-բռնեց, որ ճիշտ եմ ասում, թողեց-զևաց, բայց հետո զգացի... դրսի դուռս հետև ա տարել... մազերըս ետեղ...

Երեւի: Յա էլի: Երեւի: Վերսկսեց լացը. այդպես էլ այլեւս նրա դեմքը ես չտեսա: Երեւի: Իջնում էի մաշված աստիճաններով, այնքան հնացած. որ ամեն քայլից առաջ վախենում էի՝ փուլ գայինք իրար հետ: Երեւի: Պատերին գրություններ, խզբզանքներ... կյանքից կարելի է զզվել: Երեւի: Այ թե ինչու հարգես կոնցեպտուալիստներին, որ չեն քաշվում կանգնել իրենց արածի կողքին՝ արտատակման ու, իր ձեռքով հենց նոր կրտած սեփական անդամը ատամների մեջ սեղմած, սիգարի պես վառելով, անիմաստ ժպտ ալ: Երեւի: Երբ իջնում էի հնամաշ աստիճաններով, հորս խոսքերը եկան մտքիս. «Ես զևացի»: Երեւի: Տեսնես՝ ուր զևաց... ահա ես էլ եմ զնում, բայց չե՞ որ ամեն անգամ նույն տեղում եմ: Երեւի: Այս արատավոր կետում՝ երկրագունդ կոչված: Երեւի: Սիրտս խառնեց: Երեւի:

Anywhere out of anywhere. Եր եւ ի

13.XI.2000

## **Հինը նորովի** **Վահան Իշխանյան**

Ազատամարտիկ Համգո Համգոյանի անվան քոլեջը քաղաքում առաջինն էր, որ ուսումնական տարվա հենց սկզբում պատրաստ էր նոր «Ժողովրդական իմաստությունները եւ կրոնքը» առարկայի դասավանդմանը: Իհարկե, սա պատահական չէ: Միշտ էլ այս դպրոցն է աչքի ընկել եւ իր կարգապահությամբ, եւ ուսման բարձր մակարդակով, եւ աշակերտների ու ուսուցիչների բարձր հայրենասիրական գիտակցությամբ: Այսպիսի դպրոցներ ընդհանրապես հանրապետությունում մատերի վրա կհաշվես: Ամեն նոր ծրագիր առաջինը յուրացվում է այստեղ: Աշակերտները եռանդով եւ մեծ ոգեւորությամբ սերտում են դասընթացները, մասնավորապես ազգային նկարագիր ունեցողները: Ուսուցիչները նվիրված մասնագետներ են, սիրում են իրենց գործն ու երեխայի պես ուրախանում իրենց սաների հաջողություններով: Սակայն այդ ամբողջի համար ծնողներն ու ղեկավարները պարտական են տնօրենին՝ տիկին Ֆրուժետա Դաբադյանին: Նա է, որ ընտանիքի հոգսը մի կողմից, մյուս կողմից՝ ամբողջ կյանքը նվիրած մանկավարժությանը սիրով ու նվիրումով հայրենասիրություն է ներարկում կրտսեր սերնդին: Ինքն է հրավիրել հանրապետության տարբեր շրջաններից լավագույն մասնագետներին: Նա նաեւ տաղանդավոր նորարար է ազգային կրթական համակարգում: Վերեւից իջնող ծրագրերում միշտ, երբ հանդիպում է ինչ-որ թերությունների, համարձակորեն, անմիջապես գրավոր զեկուցագիր է ուղարկում կրթության նախարարություն, որն առանց բացառության կոլեգիայում քննարկվելուց հետո հաշվի է առնվում, եւ ծրագրում համապատասխան փոփոխություններ են կատարվում:

Եւ, կրկնում եմ, պատահական չէ, որ «Ժողովրդական իմաստությունները եւ կրոնքը» առարկայի դասավանդմանը առաջինը հենց պատրաստ էին Համգոյանյանները: Եւ կրկին տիկին Դաբադյանի եռանդի շնորհիվ: Դասընթացի համար անհրաժեշտ դիդակտիկ առարկաներն ու կենդանիները առաջինը ձեռք բերվեցին Համգոյան քոլեջում:

Հենց առաջին դասն էր «Գելի գլխին ավետարան կարդացին, ասաց՝ ոչխարը սարով անցավ» թեման, որը յոթերորդ դասարանում դասավանդելու էր Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցուց հրավիրված տեր Ասքանազ քահանային: Մեծ դժվարությամբ, հենց առաջին հերթին այս դասի համար, տնօրենը ձեռք էր բերել ոչխարների հոտ՝ 7 ոչխար եւ մի գայլ: Վեղահիների հայթայթմանը մեծապես օգնել էին նրա ամուսնու՝ գեներալ Սերյոժա Դաբադյանի պատերազմի մարտական ընկերները՝ Տորք Անգեղ ջոկատի անդամները: Ազատամարտի վետերաններից ոմանք իրենց ոչխարներից նվիրատվություն արեցին քոլեջին: Իսկ գայլը որսացել է լեգենդար Համգոյանի կրտսեր եղբայրը՝ Մանդատը՝ Խուստուփ լեռան փեշերին: Ի դեպ, նա այդ սխրանքի համար երկրի նախագահի կողմից պարգևատրվեց ազգային կրթությանը մատուցած ծառայությունների համար Սուրբ Մեսրոպ Մաշտոց շքանշանով:

Վեղահիներին մեծ հոգատարությամբ խնամում ու կերակրում են հենց աշակերտները: Նրանք ջանք ու եռանդ չեն խնայում մոտակա տարածքից խոտ քաղելու եւ ոչխարների կերը ապահովելու համար: Իսկ գայլի կերի՝ մսի մատակարարումը իր վրա է վերցրել գեներալ Դաբադյանի որդին՝ Աժդահակիկը: Նա իր շանը՝ Հաբազանին հատկացված կերակուրից բաժին է հանում գայլի համար:

Սեպտեմբերի 2-ին, առավոտյան ժամը 8-ին, արդեն դպրոցի բակը մարդաշատ էր: Առաջինը եկել էին երեխաները եւ նրանց ծնողները: Մի փոքր անց մերսեղեսը կանգնեց դպրոցի բակում, եւ դուրս եկավ տեր Ասքանազը: Ի դեպ, մեքենան Դաբադյանի համայնքի թեմին է նվիրաբերել սփյուռքահայ բարերար օրիորդ Սալբի Սիսեռյանը՝ քրիստոնեության 1700 ամյակի առթիվ: Ապա բակ մտան նաեւ բեռնատար մեքենան ու ավտոբուսը:

Երբ բոլորը հավաքվեցին դպրոցի կենտրոնում վեր խոյացող Համգո Համգոյանի արձանի մոտ, տեր Ասքանազը խնկարկեց նրա հիշատակը: Տուֆից քանդակված ազատամարտիկի արձանի, խորիտ հայացքը կարծես հսկում է ազատագրված տարածքները: Պարանոցին քանդակված է ականջաշար շղթան: Վետերանները՝ խաչը: Տասնհինգ ականջները նրա գրաված տասնհինգ գյուղերն են խորհրդանշում, որոնց թիվը զարմանալիորեն համընկնում է նրա ոչնչացրած թշնամու քանակին: Ի դեպ, թշնամուց Համգոյանի կտրած տասնհինգ ականջները նրա այրին նվիրաբերել է քոլեջին, որոնք խնամքով ջորոցների վրա ամրացրել է շրջանակի մեջ եւ դրել հինգերորդ դասարանի աշակերտները: Աշխատանքը տեղադրված է դպրոցի՝ Համգոյան մշակույթի անկյունում: Ականջները

տասնչորսն են: Մեկը տիկին Դաբադյանը նվիրեց Դաշնակցության Զավայան կղզիների կոմիտեությանը, որի դրամահավաքի շնորհիվ կառուցվեց Զամգոյանի հոյակերտ արձանը: Ականջներից մեկը առանձնանում է եռագույն շրջանակով: Դա մեր անհայտ ազատամարտիկի ականջն է, որը դպրոցին են նվիրել Բաքվի՝ Զոյաբուրու անվան դպրոցի աշակերտները, երբ ամռանը հյուրընկալվել էին Զամգոյան քույրը՝ բաց հասարակության հիմնադրամի տարածաշրջանային համագործակցության դրամաշնորհման շրջանակներում: Սա պատասխանն էր համագոյականների հաճելի անակնկալ քայլի, երբ անցյալ տարի Բաքվում հյուրընկալվելիս նրանք մեծ հանդիսավորությամբ քյոմուլիցիներին հանձնեցին անհայտ ադրբեջանցու ականջը:

Նշենք, որ այժմ բարձր առաջադիմությամբ աչքի ընկնող աշակերտներին արժանացնում են Զամգո մեդալով: Այն պատկերում է ականջի եւ խաչի մի ուրույն համադրություն. ականջը խորհրդանշում է հնագանդություն, որ աշակերտը միշտ կիստեղի ծնողների եւ ուսուցիչների պատվիրաններին: Խաչի ուղղահայաց հատվածը խորհրդանշում է հայրենիքը պաշտպանելու, իսկ հորիզոնականը՝ կառուցելու պատգամը:

Մինչ կենդանիներին բեռնատար տեղափոխելը ուսուցիչները, տնօրենը, ծնողներն ու աշակերտները հավաքվեցին շենքի նկուղում հատկացված տարածք՝ կենդանաբանական այգի, եւ տեր Ասքանազը օրհնեց հյուրերին, աշակերտներին ու կենդանիներին: Առաջինը դուրս հանեցին անիվներով վանդակի մեջ գտնվող գայլին: Վանդակը երեխաներն են պատրաստել փայտամշակման դասին՝ հատուկ անվավոր, որ այն հեշտորեն գլորելով՝ հնարավոր լինի գայլին տեղից-տեղ տեղափոխել: Տղաները ճ հոգով վանդակը քշեցին բակ, ապա բեռնատարի թափքին հենած տախտակներով՝ թափքի անկյունը: Ոչխարներին ճիպոտիկներով դուրս բերեցին աղչիկները:

Ասացվածքի դասավանդման համար Զուհիբոտն մարզի մարզպետարանը սիրով տեղ էր հատկացրել Բալիդաղ տեղանքում: Այստեղ եւ հովիտն էր հարմար գայլին տեղադրելու համար, եւ դիմացի սարը, ուր Զամաշխարհային բանկի կրթական ծրագրի վարկով ճանապարհ էր կառուցվել մինչեւ Բալիդաղի գագաթ: Ի դեպ, տեղանքը պատահական չէր ընտրվել. ավանդույթի համաձայն այստեղ ժամանակին շատ գայլեր են եղել, որոնք խժռել են տեղի բնակիչների ոչխարները: Զանի որ հայ բնակչությունը մուսուլմանական լծի տակ իրավագուրկ է եղել, հայ գյուղական նույնիսկ որսորդական հրացան ունենալու իրավունք չի ունեցել, հետեւաբար գայլերին չի հաջողվել ոչնչացնել: Այս խնդրի լուծման ելքը գտել է Բալիկ վանքի վանական սուրբ Լալիկը: Նա բարձրացել է մոտակա բլուրը եւ Ավետարան է ընթերցել: Զարմանալիորեն տեղանքի բոլոր գայլերը հավաքվել են նրա շուրջը: Երբ երեկոն է իջել, սարից հովիվները սկսել են իջեցնել ոչխարներին: Այդ պահին գայլերից մեկը մարդկային լեզու է ստացել եւ ասել է. «Ոչխարը սարով անցավ»: Այդ օրվանից սարը կոչվել է Գայլի սար: Ժամանակի ընթացքում անունը հնչյունական փոփոխության է ենթարկվել, դարձել Գալու, Բալու, ապա՝ Բալիդաղ:

Սկզբում իջավ տեր Ասքանազը եւ օրհնեց տեղանքը: Ապա աշակերտները հովտում իջեցրին գայլին: Աղչիկները, երեք տղամարդ ծնողների հետ, ելան բեռնատարի թափքը, եւ մեքենան ուղղապտույտ ճանապարհով բարձրացավ սարը: Այստեղ աղչիկները հայրերի օգնությամբ ոչխարներին իջեցրին: Զովտից հիանալի երեւում էին ոչխարները, գայլը նույնպես անպայմանորեն կտեսներ նրանց: Տղաները խմբվեցին վանդակի շուրջ՝ գայլի դիմացի տեսողաշտը բաց թողնելով: Տնօրենի գլխի նշանով արդեն պատրաստ քահանան մոտեցավ վանդակի դիմացի աջ անկյունին, բացեց Ավետարանը ու սկսեց բարձրաձայն ընթերցել: Առաջին պարբերությունից հետո ուսուցչուհին ձեռքով նշան արեց աղչիկներին. անմիջապես նրանք ոչխարներին ճիպոտներով սկսեցին քշել սարով՝ ուղղահայաց: Արդեն ոչխարները տեսողաշտից անհետանում էին, սակայն գայլը ոչ մի ձայն չհանեց. նա փռված էր վանդակի հատակին ու անտարբեր նայում էր դիմացը: Բոլորը խիստ զարմացած էին: Ի՞նչ անել: Տնօրենը ասաց, որ միակ ելքը գործողությունը կրկնելն է: Սարի վրա աղչիկներին նա նշան արեց, որ ոչխարներին կրկին քշեն հակառակ կողմ: Տեր հայրը շարունակեց ընթերցանությունը: Սակայն գայլը անհողողոջ էր: Երրորդ փորձից հետո տնօրենը կարգադրեց տղաներին, որ նրանք փայտիկներով բզբզեն գայլին: Կարճ ընդմիջման ժամանակ, երբ հանդիսատեսներն ու մասնակիցները իրենց հետ բերած նախաճաշն էին ուտում, երեք տղա աշակերտներ Բալուի ջուր աղբյուրի կողքի մացաններից ճյուղեր էին պոկում:

Այս անգամ մինչ տեր հայրը կկարդար Ավետարանը, տղաները սկսեցին ճիպոտներով բզբզել գայլին: Գայլը սկզբում տեղից ելավ, ապա տղաների համառության շնորհիվ ժանիքները ցցեց ու սկսեց գոմռալ: Տիկին Դաբադյանը բղավեց՝ պահն է, եւ տեր Ասքանազը շարունակեց իր պարտականությունը: Աղչիկները վերելում քշեցին ոչխարներին, սակայն գայլը հանգստացավ, մի քանի պտույտ արեց ու կրկին փռվեց: Աշակերտները հաշվեցին՝ վեց ժամվա ընթացքում ոչխարներին քշելու եւ ավետարան կարդալու գործողությունը կրկնվեց 20 անգամ: Ավետարանը տեր հայրը ընթերցեց 2 անգամ՝ սկզբից մինչեւ վերջ, սակայն գայլը բառ անգամ չարտասանեց: «Յո ամբողջ օրը չենք մնալու», - ասաց տնօրենը, ու հոգնած մասնակիցները վերադարձան քաղաք:

Հաջորդ օրը տնօրենը արդեն գիտեր իր անելիքը: «Դոգմաներ չկան, ամեն ինչին կարելի է մոտենալ ստեղծագործաբար», -միշտ ասում է տիկին Դաբադյանը: Անմիջապես նա մի գրություն գրեց նախարարություն. «Հարգելի պարոն նախարար, ես կարծում եմ, որ մեր ժողովրդական իմաստությունները մեծապես նպաստում են մեր մատաղ սերնդի հայեցի դաստիարակմանը: Դա են կարող են վկայել մեր դպրոցի փորձով. երեկ մենք սարում բեմադրեցինք «Գելի գլխին ավետարան կարդացին, ասաց՝ ոչխարը սարով անցավ» ասացվածքը: Աշակերտները մեծ հաճությամբ սերտեցին թեման: Այսօր, մեկ օր անց, նրանց աչքերն ավելի պայծառ են, եւ հոգիները՝ ամրացած, Զայրենիքը պաշտպանելու համար լի վճռակալությամբ: Ձեզ ցանկանում եմ հայտնել իմ դիտարկման արդյունքները: Կարծում եմ՝ ժողովուրդը այնքան իմաստուն է, որ իր իմաստությունները ստեղծելիս հաշվի է առել, որ նրանք ենթակա են ժամանակի ընթացքում փոփոխության: Պետք է Ձեզ տեղեկացնեմ, որ երեկ մի քանի անգամ ոչխարները սարով քշելուց եւ այդ ընթացքում բարեխիղճ քահանա տեր Ասքանազի կողմից գայլի գլխավերելում Ավետարան ընթերցվելուց հետո գայլը այդպես էլ չասաց՝ ոչխարը սարով անցավ: Այս հանգամանքը չի կարող նսեմացնել մեր հինավուրց իմաստությունը: Դա կարող է անել միայն մեր թշնամին: Այսուհանդերձ, կարծում եմ, որ մեր ժամանակների համար ասացվածքը մի փոքր այլ հնչեղություն պետք է ունենա: Ես առաջարկում եմ այսպես. «Գայլի գլխին ավետարան կարդացին, երբ ոչխարը սարով անցնում էր»: Սա նաեւ մեր ժամանակների ոգուն համահունչ է: Եթե վերլուծենք ասացվածքն այս իմաստով, կգանք այն եզրակացության, որ ամեն հայ մարդ լավ կլինի զբաղվի ստեղծագործ աշխատանքով եւ չմիջամտի մյուս հայրենակիցների, նաեւ, ինչու էլ, իշխանությունների աշխատանքին: Կարծում եմ, դուք կքննարկեք այս առաջարկը»:

Իհարկե, տիկին Դաբադյանը վստահ է, որ իր ճշմարիտ դիտողությունը անպայման հաշվի կառնվի, ոչ թե այն պատճառով, որ իր ամուսինը՝ գեներալ Դաբադյանը, մեր հայրենիքին մեծ ծառայություններ է մատուցել: Դեռեւս խորհրդային տարիներին, երբ պարոն Դաբադյանը համեստ վարորդ էր, բոլորին էր հայտնի Ֆրուժետա Վաղլենովայի սուր եւ պրպտուն միտքն ու մանկավարժական տաղանդը:

Հաջորդ իմաստության դասավանդման համար տիկին Դաբադյանը ձեռք է բերել կովեր: Դրանք դպրոցին է նվիրաբերել Շվեյցարիայի կառավարությունը՝ գյուղացիների կրթության ծրագրի շրջանակում: Աշակերտները այս անգամ պետք է սերտեն

«Ամառ, որ պառկես հովեր, ձմեռ կատկեն կովեր» ասացվածքը: «Մինչ նախարարությունում լրացնում, շտկում են ծրագրում մեր կողմից հայտնաբերված թերությունները, մենք արդեն սկսում ենք հաջորդ դասը, - ասում է տիկին Դաբադյանը՝ Հանրային հեռուստատեսության «Ամենօրյան կանխավարկած» հաղորդմանը տված հարցազրույցում, - Դժվարությունն այն է, որ դեռևս չգիտենք՝ կովերին ինչ պարբերականությամբ կերակրելու դեպքում նրանք կատկեն ձմռանը: Դրա համար արդեն մշակել ենք մեթոդիկա. 7 կովերին երեխաները կկերակրեն տարբեր պարբերականություններով: Օրինակ, մեկին՝ օրը մեջ, մյուսին՝ շաբաթը մեկ էլ այսպես շարունակ: Եթե ձմռանը սատկեց, օրինակ, 3 օրը մեջ կերակրվողը, ապա մենք նախարարություն համապատասխան գրություն կուղարկենք՝ «Աշուն, որ կերակրես 3 օրը մեկ, ձմեռ կատկեն կովեր»: Դուք կհարցնեք՝ ինչու՞ աշուն: Պարզ պատճառով՝ դասերը աշնանն են սկսվում», - ապա խորամանկ ժպտալով տնօրենը ավելացնում է. «Տեսնո՞ւմ եք, նախարարության գործն էլ մենք պիտի անենք»:

## **Բանավեճ: Հայ գրականագիտական միտք. անցյալը և ներկան**

[Օ՛ջալոյանը](#)  
[Անանուն](#)

Նոր հայացք հին հայելու մեջ

Ուղիղ 80 տարի է՝ հայ գրականագիտական միտքը շեղվել է հայկյան նետի սլացքից ու մայր Արաքսի ափերով քայլամուկոր գնում է: Ուղիղ 80 տարի է, ինչ գրականագիտական միտքն անհաջող փորձում է Արազն անցնել էն կուռը, բայց որակյալ բումերանգի համառությամբ Նորից ու Նորից վերադառնում է ետ: Վերադառնում է՝ լուրջ խոչընդոտ դառնալով իրավական պետության կերտման ճանապարհին:

Խոչընդոտներ իրավական պետության կերտման ճանապարհին

Գրականագիտական միտքը միանգամայն սխալ օրինակների վրա փորձում է դաստիարակել մատաղ սերնդին: Հորինվում են կեղծ, կարելի է ասել, միանգամայն հակագիտական ու հակամարդկային օրինակներ: Այսօր առարկություն չընդունող վստահությամբ կարելի է հայտարարել, որ հակագիտական վերլուծության է արժանացել «Պեպո» տրագիկոմեդիան: Եվ միայն այսօր, շուկայական տնտեսության ծլարձակման պայմաններում, պարզ դարձավ, որ իրավական պետության պայմաններում դրական հերոսը Չիմզիմովն է, իսկ Պեպոն շարքային ռեկետյոր է (նեկաշորիչ): Հարցը դիտարկենք իրավական պետության տեսանկյունից: Հայտնի չէ, թե որ պետության քաղաքացի, ձկնգողերի շրջապատում հեղինակություն վայելող Պեպոն առանց ստացականի եւ բանկային փոխանցման ավիզոյի (բարաթի), Չիմզիմովից գումար է պահանջում: Գործարարների ազնիվ դասը ներկայացնող Չիմզիմովը հրաժարվում է վճարել: Պատճառը խիստ հիմնավոր է՝ հարկային խիստ համակարգի եւ պետականության բարձր գիտակցության պարագայում անհնար է դրամարկղից հանել փաստաթղթերով չհիմնավորված գումար: Մինչդեռ գրականագիտությունը դրական հերոս է համարում Պեպոյին, սույնով խաթարելով իրավական պետության շինարարության աշխատանքները:

Անհրաժեշտ է նշել նաեւ, որ Գրողների միության կողմից մինչեւ այսօր էլ տրված չէ սովետահայ գրականագիտության քաղաքական գնահատականը:

Որբի անլուր ճակատագիրը

Մեր գրականագիտությունը զբաղված է ամեն ինչով, բացառությամբ գրականությունից: Որեւէ գրականագետ մինչեւ այսօր լրջորեն չի զբաղվել հայ գրականության բառացիորեն անմահ հերոսներով: Նրանցից ոչ ոք ուշադրություն չի դարձրել, որ որեւէ պաշտոնական փաստաթուղթ չկա Կիկոսի եւ Գրիգորի Համբարձումովիչի մահվան մասին: Մինչդեռ Գիքորի պարագայում հեղինակը պարզորոշ ակնարկում է, որ հայրը՝ գյուղացի Համբոն, չի տեսել որդու դիակը: Մեր գրականագետների սերունդներն արդեն 80 տարի է՝ չեն ուզում նկատել այս փաստը: Ավելին, նրանցից ոչ ոք քննության չի անել Գիքորի հետագա ճակատագրի ամենահամոզիչ վարկածը: Սույն վարկածն, անկեղծ ասած, ամենեւին էլ վարկած չէ: Նույնիսկ փաստ չէ: Քանի որ դա ավելին է, քան փաստը: Որովհետեւ հենց այդպես էլ եղել է իրականում:

Այն օրերին, երբ Գիքորն անտեր-անտիրական պառկած էր աղքատների հիվանդանոցում, Թիֆլիս քաղաքում էր գտնվում ֆրանսիացի մի ընտանիք: Ընտանիքի հայրը՝ Դը Գոլ ազգանունով, մասնագիտությամբ լեռնային ինժեներ էր եւ աշխատում էր Ալավերդու «Մանես» լեռնամետալուրգիական ձեռնարկությունում: Դը Գոլն իր կնոջ հետ, Ծննդյան տոներից առաջ, բարեգործական նպատակով այցելում է աղքատների հիվանդանոց: Հիվանդներին հումանիտար օգնություն բաժանելու ընթացքում Դը Գոլների ընտանիքը պահի հուզական ազդեցության տակ որդեգրում է մանուկ Համբարձումովիչին: Թիֆլիսի արխիվներում պահպանված որդեգրման փաստաթղթերում նշված էր, որ որդեգրին տրվել է Շարլ դը Գոլ անուն-ազգանունը:

Յավոք, հետագայում ոչ ոք ոչինչ չի լսել որբուկի ճակատագրի մասին: Շարլ դը Գոլի հետագա կյանքի ու գործունեության մասին որեւէ տեղեկություն չի հասել հայ գրականագիտական մտքին: Եվ դա զարմանալի չէ, քանի որ «գրականագիտական միտք» հասկացությունը տրամաբանական հակասություն է պարունակում ինքն իր մեջ: Անհասկանալի է՝ եթե դա միտք է, ապա ինչպե՞ս կարող է այն գրականագիտական լինել: Եվ հակառակը՝ եթե գրականագիտական է, ապա ինչո՞ւ է այն միտք համարվում:

Օ՛ջալոյանց

Ողջույնի նամակ

Մեծարգո Անանուն:

Սույն թվի ապրիլի 1-ին պատիվ ունեցա կարդալու «Նոր հայացք հին հայելու մեջ» վեհաշունչ հոդվածը եւ մինչեւ հիմա չեմ կարողանում ուշքի գալ, այնինչ այսօր արդեն ապրիլի 6-ն է... Ձեր գրականագիտական ուսումնասիրությունը, առանց չափազանցման, հանճարեղ եմ համարում: Ավելին ասեմ, հիմա ես կյանքիս ուղին բաժանում եմ երկու հատվածի՝ մինչեւ Ձեր

հողվածը կարողալը եւ հողվածը կարողալուց հետո: Չեմ սպի, թե առանձնապէս երջանիկ օրեր էին երկու հատվածում էլ, բայց հիմա կյանքիս ուղին գոնէ իմաստավորված է, ինչը չեմ կարող ասել առաջին հատվածի մասին: Հատկապէս ուրախալի եր այն փաստը, որ գրականագիտության առումով դուք տգետ եք, եւ հաշվի առնելով նվաճման մեծությունը՝ Ձեզ պետք է հանճար համարել, քանզի գործել եք մի ոլորտում, որից բացարձակապէս անտեղյակ էիք: Գույները մի քիչ մեղմելով՝ նույնը կարելի է ասել իմ մասին նույնպէս: Բայց նախ թույլ տվեք ներկայանալ: Ես գրականագետ եմ: Շուտով կես տարին կլրանա: Նախկինում զբաղվում էի ստանդարտացման եւ սերտիֆիկացման խնդիրներով: Չար լեզուները պնդում են, որ մասնագիտությունս փոխեցի մեր երկրում ապրանքային արտադրության անկման պատճառով, իսկ դա սուտ է: Ես գրականագետ դարձա, քանի որ, նախ՝ անկարող էի լռել, եւ երկրորդ՝ գտնում եմ, որ վաղուց ժամանակն է ստանդարտացնել հայ գրականությունը եւ սերտիֆիկացնել գրողներին՝ ըստ տաղանդի աստիճանի: Գործունեությանս հենց առաջին օրերից հանդիպեցի մեծ դժվարությունների, քանզի մեր դասականները ոչ միայն մեծաթիվ էին, այլեւ չէին ենթարկվում ստանդարտացման: Հատկապէս պետք է նշեմ Յուրիանես Թումանյանին, որը ո՛չ ստանդարտացվում էր, ո՛չ սերտիֆիկացվում: Թումանյանի հերոսների նախատիպերի փնտրտուքը ինձ բերեց որոշ տեղեկությունների ձեռքբերման, որ շտապում եմ ներկայացնել Ձեր ուշադրությանը: Խոսքս Բազազ Արտեմի մասին է, որը հեղափոխության ժամանակ գաղթեց Կոստանդնուպոլիս, իսկ այնտեղից՝ Ալժիր: Տիպիկ էքստրավերտ խառնվածքով մանր բուրժուա լինելով՝ Արտեմը չէր կարող չմասնակցել Ալժիրի անկախացման համար մղվող պայքարին: Այստեղ էլ կայացավ հին ծանոթների երկրորդ հանդիպումը: Ապագադուրացման գործընթացի ավարտից հետո Բազազ Արտեմը անցել էր աշխույժ առեւտրական գործունեության: Երբ ֆրանսիական պատմիրակության մեքենաների շքախումբն անցնում էր կենտրոնական շուկայի մոտով, Շարլ դը Գոլը կարգադրեց կանգնեցնել մեքենան եւ, մոտենալով հայերեն «Է՛ստի համեցեք» ցուցանակը կրող կրպակին, ուշադիր նայեց ներսում կանգնած ծեր վաճառականին ու հարցրեց. «Դուք Բազազ Արտեմն եք»: «Այո, իմ գեներալ», - հետեւեց շքախումբի վաճառականի պատասխանը: Մթազնած Շարլ դը Գոլը մի պահ լռեց, ապա ասաց. «Լա՛վ: Շարունակե՛ք»: Այդ հանդիպումից հետո Բազազ Արտեմը շուկայում ֆրանսիական լրտեսի համարում ձեռք բերեց, եւ նրա կյանքը Ալժիրում գործածվեց անտանելի: Իսկ գեներալ դը Գոլը ներեց Բազազ Արտեմին, քանի որ հայ էր եւ գիտեր, որ երբեք չէս իմանա, թե որտեղ կկորցնես, իսկ որտեղ՝ կգտնես: Այս մասին իր հիշողություններում գրել է գեներալի նախկին թիկնապահ ժան Կլոդ Բրասարը (տես՝ Ժ.Կ.Բրասար, «Ռ՞վ էր նա, ո՞վ էր նա, ո՞վ էր նա», Փարիզ, «Գալիմար», 1968):

Հարգելի անանուն գինակի՛ց... Հակառակ բեւեռներից սկսած մեր գրականագիտական հետազոտությունները բերեցին միեւնույն կետին: Չե՛ք համաձայնի արդյոք համատեղ շարունակել մեր դեգերումները հայ գրականության ջունգլիներում, քանզի, ինչպէս ճիշտ նշվել է, Թումանյանն անհաս գագաթն է, իսկ նրանից ներքեւ ինչ ասես կա...

Որպէս գաղտնիք հայտնեմ, որ «Նորից Բաբելոն» հրատարակչության տնօրէնն իմ հին բաժակակիցն է, եւ մեր ցանկացած աշխատություն դատապարտված է տպագրության «Այդ ուղով» հանդէսում:

Հարգանքներիս խորագույն հավաստիքով

եւ հետագա համատեղ գործունեության ակնկալությամբ՝

## Ստորումներ ձմերուկի մասին

### Կարեն Մսիճարյան

«Տարօրինակ բույսի նման տարօրինակ, Անհնարին, ինչպէս կղզին օվկիանոսում...»

ՄԱՐԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Դժվար է այս կյանքում հանդիպել մի մարդու, որին երբեւէ ձմերուկ չի հանդիպել: Այդ տարօրինակ բույսը, հենց միայն իր գոյությամբ, հաստատում է այն պարզ ճշմարտությունը, որ մեծ լինելու համար բոլորովին էլ պարտադիր չէ հզոր եւ խոր արմատներ ունենալ: Դա հաստատում է նաեւ մարդկության պատմությունը, չնայած այստեղ կողմնորոշվելն ավելի բարդ խնդիր է, որովհետեւ, Սենեկայի խոսքերով ասած՝ «շատերին մեծ են համարել, քանզի չափել են պատվանդանի հետ միասին»: Հատկապէս դժվար է կողմնորոշվել մտածողների շարքում, քանի որ ստիպված են պարզել նաեւ, թե ինչի մասին էին նրանք մտածում: Օրինակ, դարասկզբի մտածողներից մեկը պնդում էր, որ էլեկտրոնը անսպաս է... Հուսով եմ, բոլորդ կհամաձայնեք, որ այս առումով ձմերուկը չի գիշում էլեկտրոնին, եւ նրանում ջրի ամբողջ քանակությունը անհրաժեշտ է: Իսկ շուրջ, ինչպէս Թալեսի ժամանակներից է հայտնի, ամեն ինչի հիմքն է: Որքանով ավելի հեշտ կլիներ մեր խնդիրը, եթէ գոնէ այսօրվանից սկսած՝ պայմանավորվածություն ձեռք բերվեր, որ մարդկության մեծագույն մտածողները խորհեին ընդհանուր թեմայի, ասենք, օրինակ, ձմերուկի մասին եւ նրա շուրջ: Ցավոք սրտի, մինչ այժմ, զարմանալի համառությամբ, մեծագույն մտածողները ծրագրում եւ իրագործում էին հեղափոխություններ: Մի տարօրինակ գործընթաց, որից անմիջապէս հետո զարմանալի կերպով սկսվում են հետհեղափոխական ժամանակները: Հենց այդ պահից հեղափոխությունը սկսում է խժժել իր զավակներին: Սիրելի ընթերցող, մի բան է, երբ այդ մասին կարդում ես դասագրքերում, եւ բոլորովին այլ է, երբ միացնում ես հեռուստացույցը եւ տեսնում, թե ինչպէս է հեղափոխությունը դատարանի դահլիճում փորձում խժժել իր զավակին: Հատկապէս սրտաճմլիկ է, եթէ զավակին հիշում ես դեռ ուսանողական տարիներից... Հիմա ես ավելի հազվադէպ եմ հեռուստացույց դիտում, քանի որ լավ չեմ հասկանում, թե ինչ է ցուցադրվում եւ ինչու: Վերջերս, օրինակ, մի ֆիլմ էր ցուցադրվում, որտեղ գլխավոր հերոսներից մեկին ինչ-որ արտառոց կենդանի պատառոտեց եւ կերավ: Ինձ թվաց, թե դա փաստավավերագրական ֆիլմ է այն մասին, թե ինչպէս է հեղափոխությունը խժժում իր զավակներին, բայց ծրագիրը նայելով պարզեցի, որ դա սարսափների ֆիլմ էր եւ նկարահանված էր ինձ վախեցնելու համար: Իսկ թե ինչու է դա անհրաժեշտ, ես չեմ հասկանում: Ավելի լավ չէ՛ր լինի արդյոք մի ֆիլմ նկարել ձմերուկի նման հրաշալի բույսի մասին...

Ըջերն են հիշում, որ Դանիայի արքայազն Համլետի հայրանունը նույնպէս Համլետ էր («Այն տարի, երբ մեր արքա Համլետը հաղթեց Ֆորտիբերասին, եւ ծնվեց փոքրիկ Համլետը...»): Դա զարմանալի չէ, որովհետեւ մենք ապրում ենք ինֆորմացիոն հզոր աղմուկի մեջ, եւ նոր ինֆորմացիան, որքան էլ անհեթեթ լինի, ջնջում է հին մի մասը եւ տանում բոլորիս հիմարացման ուղիով: Արժեքավորը աղբից տարբերելն էլ դժվար է, կարծես Գյուլկի «մեղեդին» ես լսում քարհատ հաստոցների նվազակցությամբ: Իզուր չէ իմաստուն ժողովուրդը գերադասում դիտել լատինամերիկյան բազմասերիանոց ֆիլմեր, որոնց իմաստը հասկանալը շատ հեշտ է՝ դրա բացակայության պարզ պատճառով: Բացի այդ, ենթագիտակցորեն զգում ես, որ այդ տափակ ֆիլմերում հեղափոխություն չի լինի, եւ որ ամենազվեթէն է՝ հետո չի խժժի իր զավակներին: Մյուս կողմից էլ հիմարությունը ոչ միայն տհաճ է, այլ նաեւ վտանգավոր,

քանզի «Եթե երկար նայես անդունդին, այն կանդրադառնա քո մեջ»: Այդ պատճառով ես գերադասում եմ խաղաղ անկյուն գտնել եւ մտածել որեւէ հաճելի բանի, ասենք՝ ձմերուկի մասին: Հասկանալի է, անընդհատ նույն բույսի մասին մտածելը ծանր խնդիր է: Նույնիսկ Միչուրիսի նման տաղանդը երբեմն փոխում էր թեման եւ բարելավեց բազմաթիվ պտղատու բուսատեսակներ: Ես մի ժամանակ մեծ ցանկություն ունեի կարդալու Միչուրիսի բնագրերը, որովհետեւ մի մեջբերում դրանցից ինձ հանգիստ չէր տալիս. «Մրջյունը խելացի, հասկացող եւ արտակարգ խորամանկ էակ է»: Հիմք կար կասկածելու, որ տաղանդ լինելուց բացի Միչուրիսը եղել է նաեւ խելագար: Ժամանակակից հոգեբաններից շատերը պնդում են, որ ոչ միայն նա: Ափսոս, որ ոչ մի սցենարիստ չի հանդգնի սցենար գրել Միչուրիսին նվիրված մի ֆանտաստիկ սարսափների ֆիլմի, որտեղ զլխավոր հերոսի՝ ձմերուկի եւ մրջյունի խառնուրդի կեղեքը կտրելուն պես կորիզները փախուստի են դիմում, եւ մնում է արնածոր անկորիզ ձմերուկը, իսկ հեղափոխությունը մոտ է գալիս... Չէ, չի ստացվում, ես բազմաթիվ հիմար ֆիլմեր եմ դիտել, ու դրանք ոչ միայն անդրադարձել են իմ մեջ, այլեւ շարունակում են աղմկել: Աղմուկից զգատվելու համար անջատեցի հեռուստացույցը եւ սկսեցի հիշել, թե նշանավոր մարդկանցից ում ձիու անունը ինչ էր: Բուցեֆալը Ալեքսանդր Մակեդոնացու ձին էր, Ինցիտատուսը՝ Կալիգուլայի, Բայագեթը՝ Աթոսի, իսկ թե ում ձիու անունն էր Բոեներգոս, այդպես էլ չկարողացա հիշել: Ձիու անունով տիրոջը չես գտնի, դա դժվարին խնդիր է: Ու ես նորից վերադարձա ձմերուկին: Հարթության ցանկացած անցկացում ձմերուկի միջով տալիս է շրջանագիծ: Այդպես, ձմերուկը կտրելիս մարդկությունը հայտնագործեց անիվը եւ կատաստրոֆիկ արագությամբ սկսեց զարգանալ՝ չմոռանալով ժամանակ առ ժամանակ հեղափոխություններ անել, որից հետո... դե, ինքներդ գիտեք: Անցած դարի ֆանտաստ գրողներից շատերը մարդկության երջանկությունը կապում էին ռադիոհաղորդակցման հայտնագործման հետ: Տարիներ անցան, հիմա ռադիո կա, իսկ երջանկություն՝ ոչ: Ավելին, գեղեցիկ մեղեդի լսելու ակնկալությամբ միացնում ես ռադիոընդունիչը եւ լսում, թե ինչպես է հեղափոխությունը խժռում իր զավակներին:

Երբեմն իրական կյանքն այնքան է դժվարանում, որ մարդիկ նախընտրում են երազները: Նիցշեն «Չրադաշտում» հիշատակում էր մի իմաստունի, որն ապրում էր քնելու համար: Քնելու համար անհրաժեշտ է ուղղակի օրվա մի մասը արթուն անցկացնել, սնվել եւ այլն, իսկ փողի բացակայության պայմաններում առաջանում են տոկոսով պարտքեր, կյանքը ծանրանում է, եւ երազները դառնում են տհաճ ու անհանգիստ: Ուրեմն երջանկության ձգտումը հաճախ ամրացնում է կապանքները, իսկ ծայրահեղ լուծումը՝ հեղափոխությունը, խժռում է իր զավակներին: Ստորումների այս լաբիրինթոսում մի հարց ինձ վերջերս հանգիստ չի թողնում.

«Այնուամենայնիվ, ինչո՞ւ է ձմերուկը շերտավոր»...

## Վիթխարի մի խելագար

### Աղասի Ավագյան

- Եթե խոշոր ձեռքի ափով սրբես գնդի մակերեսը, որ հողագունդ է կոչվում, եւ մարդկային ցեղը հավաքես-հունցես բռի մեջ, կավի նման մի նյութ կդառնա. սեւն ու դեղինը, մագեղն ու հարթը մի տարր կկազմեն, ու դա կկոչվի՝ մարդկություն... Մարդկության խմոր...

- Ինչպիսի դաժան պատկերացում...

- Չէ... Ես կասեի՝ պատկերացում վերից:

- Մի՞թե պղպջակ չի տա ... Որեւէ սեւ կամ սպիտակ գույն չի՞ ուզենա դուրս պրծնել այդ, ինչպես ասացիր, խմորից:

- Ո՛չ, ամենը միեւնույն նյութն է:

- Հիմա մեզ էլ որ ճզմես մի բռան մեջ՝ մե՞կ նյութ կդառնանք:

- Մեր մասին խոսք անգամ չի կարող լինել... Քանի՞ հոգի ենք... - Տանտերը հաշվեց: - Յոթ հոգի ... Եվ մենք, ինչքան էլ ներքին հակասություններ ունենանք, այնուամենայնիվ մի խումբ ենք կազմել՝ որոշ նմանության սկզբունքով:

Հյուրերից ոմանք խնդմուդում էին քթի տակ, ոմանք քթի տակ ոչինչ չկար, աչքերի խորքում էր նրանց կարծիքը, իսկ մեկը մաշկի տակ էր պահում իր անհամաձայնությունը մնացածի հետ:

- Այնուամենայնիվ՝ մենք մի նյութից չենք... Որքան էլ ընդհանրություն լինի մեր միջեւ, մենք, թեկուզեւ մարդկային այս խառնարանում, ընտրել ենք միմյանց, - ասաց պիկվիկյան կառուցվածքով, սեփական ինքնարժեքն իմացող տղամարդը:

- Հոգեբույժների կարծիքով՝ Դոստոևսկու բոլոր հերոսները կրում են հեղինակի հոգեկան հիվանդության խլայակները. յուրաքանչյուր հերոս իր համար վերցրել է Դոստոևսկու հիվանդության մեկ ախտանիշը... Եթե բոլոր ստեղծագործությունների գործող անձանց հավաքես մի մարմնի մեջ՝ կստացվի հիվանդ Դոստոևսկի, - ասաց տանտերը:

- Տոլստոյն էլ, կարծեմ, նույն հիվանդությամբ էր տառապում, - մրթմրթաց ոտքը ոտքին զգած աստեղիկ կառուցվածքով երիտասարդը՝ իր ինտելեկտուալ պաշարով տանտիրոջից ետ չմտալու հեղձանախանձ ավիշի թելադրանքով:

Տանտերը նենգամիտ ժպտում էր, եւ որովհետեւ նրա ժպիտը հստակ հորինվածք չուներ, շարունակական էր, ստեղծում էր մի ուրիշ մթնոլորտ:

- Ես վաղուց եմ հասկացել, որ մենք բոլորս մեկ խելթի ախտանշաններն ենք... Եթե մեզ էլ՝ ամբողջ մարդկությանը, ամփոփեն մի նյութի մեջ՝ կստացվի վիթխարի մի խելագար:

Բոլորը այլեւս լուռ մնացին, եւ յուրաքանչյուրն իր համար ուզում էր որոշել՝ կատակը մնում է կատակ, թե՞ արդեն անցնում է թեթեախոտության սահմանը:

- Կարծում եք՝ այդ գիժը Ադամն էր, - ասաց ինչ-որ մեկը, ու բոլորը միահամուռ ծիծաղեցին՝ որոշելով, որ կատակը ամփոփվեց այդ խոսքով, անհարմար թեման բոլորակվեց, վերջացավ:

Բայց տանտերը նպատակ չունեն այդքան հասարակի փակել իր բացած դուռը:

- Այն, որ հիմա պիտի պատմեմ՝ կվերջանա ձեր սուրճի հետ մեկտեղ... Կուզե՞ք լսել...

Նա պատասխանի չսպասեց եւ, տանտիրոջ իրավունքով, պարտադրեց իր պատմությունը.

- Պարոն Կ-ն անզգուշություն ունեցավ խեղճանոց ընկնելու... Պատճառը, թերեւս, աննշան էր. շարժումն ու դադարը չհամաձայնեցրեց իրար, սերն ու ատելությունը չզուգակցեց, կիրքն ու միտքը չդասավորեց համաչափ ու ընկալ հոգեբուժարան: Այնտեղ արդեն որոշակի կնիք է դրվում յուրաքանչյուրի վրա, եւ անձը մարդկության սովորական շարքից հանվում է՝ նույնիսկ սեփական աչքում: Մնացածը երեւակայության հարց է. եթե երեւակայությունդ վառ է, դու քեզ կարող ես թունդ խելագար զգալ, եթե տաղանդդ հերիք չի անում՝ կմնաս խելթության ստորին աստիճանին: Պարոնի, որի մասին պատմում եմ, երեւակայությունը բոցկլտում էր, եւ նա մտավ թունդ խելագարների շերտը: Այդպես նա տասնչորս տարի անցկացրեց հոգեբուժարանում... - Տանտերը աչք անծեց իր բարեկամների սուրճի բաժակները: - Սուրճը վերջացա՞վ... Իմ խոստման համաձայն՝ ես ընդհատում եմ պատմությունը:

Ընկերները տարակուսանքով իրար նայեցին:

- Հասկանում եմ ձեր տարակուսանքը, բայց, ինչ արած, խոսքը մնում է խոսք... Սա՛ է մեր փոքր բնակարանի, որ մարդկային շրջապատ է կոչվում, բարոյական դրվածքը ... Ըհ՞շտ է...

Ոչ ոք չհերքեց նրա ասածը, դա էլ կատակի տեղ ընդունեցին, եւ ամեն մեկը իր ձեռով փորձեց ծիծաղել: Հետո, կարծես մոռանալով գոյություն ունեցող խոսակցական խառաչոն, սկսեցին հիշել կանանց հետ ունեցած անցյալ շաբաթվա հարաբերությունները. հաջող կամ անհաջող, ավելի շատ՝ հաջող, անհաջողությունների մեջ էլ սեփական բարեմասնությունները պեղելով: Հետզհետե մթնոլորտը հավասարվեց, ստացավ հանրամատչելի բնույթ, ընդունված՝ Հայաստանում, ընդունված՝ Կովկասում, ընդունված՝ Եվրոպայում, ընդունված՝ Ասիայում եւ Ամերիկայում... Եվ ինչքան քիչ բան էր պետք, որ աշխարհում ընդունված այդ մթնոլորտը խառնտակվեր. ընդամենը՝ մի խոսք, որը դարձավ հետագա արսուրդի սկիզբ.

- Դուք գիտե՞ք՝ ո՞ր դռնով եք մտել գոյություն ...

Նորեն տանտերն էր:

Աշխուժությունը մարեց, բերանները սակեցին, եւ դեմքերին նեզատիվակերպ գրվեց. «Արդեն համը հանում է»:

- Սուրճ ուզո՞ւմ եք... - խոսքը փոխեց տանտերը, սակայն նրա բերանում «սուրճը» վերագանցական իմաստ պարունակեց:
- Բէ՛ր, - արտամղեց տմույն դեմքով, ատլետիկ կառուցվածքով տղամարդը:
- Դուք, երեւի, զարմացաք իմ հարցից... - ժպտաշուրթ ասաց տանտերը՝ լցնելով սուրճի բաժակները: - Բայց խոսքը շատ զվարճալի բաների մասին է... Ես կարող էի հարցնել՝ «Ո՞ր դռնով եք մտել այս բնակարանը»:

Այս խոսքերի մեջ կար հյուրասիրության կեղեղը հանելու երանգ՝ հատկապես գերզգայուն ու կասկածամիտ հայի համար, եւ պիկվիկը պատռեց քաղաքավարության հեղիեղուկ մարմաշը.

- Ասածդ ի՞նչ է... Որ դռնով դո՞ւրս գանք...
- Չէ՛... Իհարկե՛ն չէ: Իզուր ես քաջալի վրա մազ փնտրում... Գիտես որ՝ ձեր ընկերությունը ինձ համար ամենաթանկ բանն է... Ու քանի որ նորից սուրճ ենք խմելու. համառոտ վերջացնեն ընդհատված պատմությունը...

Ոչ մեկը ձայն չհանեց. նրանք բոլորը փշոտ անեության մեջ էին:

- Եվ ի՞նչ եք կարծում՝ ի՞նչ եղավ պարոն Կ-ի հետ... Եթե մտածում եք, որ պակասավորի թոշակի անցավ ու, փսիլեքները սրբելով, կուչ էր գալիս պատերի տակ՝ չարաչար սխալվում եք...
- Երեւի ակրոբատ դարձավ, - ձեռ անավ ատլետիկը՝ դրանով իսկ վրեժ լուծելով անհամացած երեկոյի համար:
- Դա ավելի հեշտ կլիներ, - տակը չմնաց տանտերը:
- Իմ սուրճը վերջացավ... - քմծիծաղեց աստենիկը: - Գուցե դո՞ւ էլ պատմությունդ վերջացնես:
- Ատլետիկի բաժակում դեռ մի երկու կուլ մնացել է...

Ատլետիկը գավաթը արագ հպեց շուրթերին. սա այլես վիրավորական էր: Բայց տանտիրոջն հիմա, այս՝ իր համար աստեղնային ժամին նման ոտնձգությունը չէր կարող վիրավորել, նույնիսկ՝ նկատելի լինել:

- Պարոն Կ-ն դարձավ ճարտարապետ...
- Վերջացրի՞ր...
- Էդքա՞նը...
- Ես սուրճի վերջին կուլն եմ կուլ տալիս... - խնդմնաջ ատլետիկը:

- Յալալ... Վերջին խոսքս հետեւյալն է. այս բնակարանը մուտք ու ելք չունի ... Սա պարոն Կ-ի կառուցածն է...

Սենյակը թնդաց ծիծաղից. հարաբերությունները տանտիրոջ հետ մեղմվեցին:

- Ես երբ հարցրի՝ որտեղի՞ց եք մտել գոյություն, դա՛ նկատի ունեի... Աշխարհը ելք ու մուտք չունի... Գոյությունը մուտք ու ելք չունի...

- Վերջացրո՛ւ... արդեն հետաքրքիր չէ... Կատակն էլ իր չափն ունի... - շվժվացնելով օդավորեց պիկվիկը: - Ես գնացի... Ռ՞վ է գալիս ինձ հետ...

- Մենք բոլորս էլ գնում ենք... Չէ՞... տղերք...

Նրանք աղմուկով բարձրացան աթոռներից ու բազկաթոռից եւ ուղղվեցին դեպի դուռը: Սակայն, շվարած, այս ու այն կողմ գնացին, եւ մոլար վերդարձան սենյակի կենտրոն: Դուռ իսկապես չկար:

- Ձեզ կատակ թվաց, որ աշխարհը ելք ու մուտք չունի... Մի՞թե մի խենթ եր պետք, որպեսզի ապացուցեր այդ հասարակ իրողությունը...

Ընկերները իրար էին նայում եւ մտածում՝ եթե սա երգը չէ, հապա ինչպե՞ս ներս մտանք, ինչպե՞ս հայտնվեցինք այս բանդագուշանքի մեջ...

Հայացքները սեւեռվեցին տանտիրոջ կողմը:

- Ասա՛ որտե՞ղ է ելքը... - մռտաց պիկվիկը: - Ես պահմտոցի խաղալու հավես չունեմ...
- Չգիտեմ, - ինքն իր մեջ արտաբերեց տանտերը:
- Արա՛... Դու ցի՞րկ ես... - ջղածգային խնդմնդուրով պոռթկաց աստենիկը:
- Չէ՛... արա՛... - ընդորինակելով աստենիկի խոսելածեւը՝ ասաց տանտերը: - Ես ցի՞րկ չեմ... Ես վիթխարի խենթի մի աննշան փշուրն եմ: Ինքս էլ անընդհատ որոնում եմ մուտքն ու ելքը եւ ոչ մի կերպ չեմ կարողանում գտնել...

## Լեննագանյան եռագրություն

[Սամվել Մկրտչյան](#)

Էջ [1](#) [2](#) [3](#)

### 1. ԼՈՔԻ

Դասարանն ինչխօր մեռելուուն էղնիր. սաղ հորանջեինկը, դաժե ընկեր Մարգոն, որ նոր էր մեզի ընդունել: Սրանք մեզի կընդունեին, ինչխօր նոր ապրանք ընդունեն: Դասասենյակը լենուրով էր, ինչխօր մեր գլխաքանակը: Ուրեմն, սաղ հորանջեինկը, իսկ ես քիչ կմար մեռնեի: Ընկեր Մարգոյի ծվլոցը ընձի չէր հասնի: Ախր, մորս ըսի որ էդ լոքին լավ բան չէ, մեկ էլ տեսար... «Բան չկա, կըսես՝ ընկեր Մարգո, կարելի՞ է մեկ թոպեով դուրս գալ»:

Բայց, էլ չեմ դիմանա...

- Ընկեր Մարգո, կարելի՞ է մեկ թոպեով դուրս գալ:

- Ինչո՞ւ:

- Դե, պետք է, էլի:

- Բայց ինչո՞ւ:

Կպատկերացնեմ ծամածռված դեմքս, փռթկալու համար միշտ պատրաստ էր բճերի հայացքները:

- Լավ, գնա, - ընկեր Մարգոն կըսե, Էս էլ՝ ճակատագրական դադարից հետո:

Կվագեմ ու դանը չհասած՝ կլսվի էր անտեր կրակահերթը: Սենյակն ինչխօր ցնցվի, վախկոտները խրամատավորվինկը, ընկեր Մարգոն գիտե, թե երկրաշարժ է, իսկ դուխով տղեքը, որ երկար ժամանակ օդը պահել էին իրենց թոքերի մեջ՝ կչկոցով արտամղեցին: Ստից հակահարված: Ընկեր Մարգոն չէր սպասե դեպքերի էսձեի գարգացում, իսկ իմ դուրս գալն արդեն իմաստ չուներ: Պապս կըսեր՝ օդու, Էղածն Էղած է, Էղածը չէղած չի դառնա: Բիձեն ճիշտ էր:

Ոտից գլուխ կարմրած՝ կաշեի դռանն ու մոքիս մեջ մորս կըրՖեի: Լավ: Ծիծաղեք, բճի տղեք: Սրանք հլը չիդեն, որ պայուսակիս մեջ նոր պատռոններ ունիմ՝ լոքով բրդուճ:

- Դո՛ւրս, - գոռաց ընկեր Մարգոն, - առանց ծնողի դպրոց չգաս:

Լացով մտա տուն ու քացով խփի Էն խեղճ կատվին: Մերս տաշտի մեջ լվացք կեներ: Հերս, սովորականի պես, թախտին շլթած էր:



- Ըսի չէ՞, ըսի չէ՞, - ու խո չե՛մ լա:

Յերս պատի կողմից շուռ եկավ ու ըսավ.

- Ծո, ի՞նչ ես բողբաց դրե:

- Դու սուս, - մերս ըսավ: - Ավելի լավ է գնա գործ ճարե, թե չէ մե օրըմ ոռ թախտին սվառկա կեղնի: - Յետո դարձավ ընծի:

- Յըմի հանգստացի ու ըսա, թե ինչ է եղե, Վարդանիկ:

- Տռեցի, - ու նորից գուլամ: - Ընկեր Մարգոն ըսավ առանց ծնողի դպրոց չգաս:

- Ի՞նչըն թե, - գոռաց մերս, - տռելու համար ծնող կկանչե՞ն: Յողեմ գլուխդ, ընկեր Մարգո: Բոզին աշե՞ս:

Մերս հազավ Էն միակ շորը, որ հատուկ առիթներով կհագնիր, ձեռք բռնեց ու գնացինք դպրոց: Դասամիջոց Էր: Մերս ընկեր Մարգոյին շատ քաղաքավարի դուրս կանչեց ուսուցչանոցից:

- Այստեղ հարմար չէ, - ըսավ ընկեր Մարգոն, - դուրս գանք դպրոցի բակ:

Դպրոցի բակում Էլ շրջապատված Էինք բոլոր դասարանցիներով. ուրեմս, շուխուն ընգել Է, սաղ գիղեն, եզուցվանից սաղ ընծի «տռան Վարդանիկ» կըսեն: ՉԷ, ես կկախվիմ, ընծի տոկի կուդամ, Շիրկանալը կգցվիմ...

- Ի՞նչ է եղե, ընկեր Մարգո քան, - ընչի՞ եք կանչե:

- Ինչպե՞ս ասեմ... Վարդանիկը...

- Յը՞:

- Դե, ինչպե՞ս ասեմ, Վարդանիկը մի բան է արել, որ ...

- Յը՞:

- Մի բան է արել, որ ...

- Յը՞, ըսա: Դասարանի աղջկա մագերի՞ց է քաշել, թքե՞լ Է, վա՞տ կտորվի, ձեզի չի՞ լսե, դասը կխանգարե՞:

- Ոչ, ոչ:

- Ա՛խ, հասկըցա, չեղնի՞ տռել է:

- Այո, - խիղճս եկավ ընկեր Մարգոն, նորահարսի պես կախեց գլուխը: - Բայց, ամեն դեպքում, դասարանում չի կարելի: Դրսում՝ թերեւս:

- Վա՛յ, մամա քան, - գոռաց մերս: - Աղջի, դու կյանքում տռած չկա՞ս: Կարո՞ղ Է հաց չես ուղե, կարո՞ղ Է պետքարան չես Էրթա: - Ես կքաշեի մորս ձեռից: - Իսօր աշեք, հրեշտակ կխաղա գլխըներիս: Օր ըդպես Է՝ Վարդանիկս ուրղեղ ուզեմա, երբ ուզեմա՝ կտռե, հասկըցա՞ր, օրիորդ Մարգարիտա: Թե չե՛ե՛ ...

- Ես հարցը կղնեմ մանկավարժական խորհրդի նիստին, - հանգիստ ըսավ ընկեր Մարգոն: Ծան աղջիկն ինչխօր չուզուն Էղնիր:

- Արի երթանք, տղա քան, - ըսավ մերս ու կռահեց միտքս: - Ես աղջիկը չուզուն Է:

Մանկխորհրդի նիստ չեղավ: Մերս խնայեց ընկեր Մարգոյին, ու ես ուրիշ դպրոց տեղափոխվեցի: Կըսեն, թե աշակերտները ընկեր Մարգոյի հետեւից «չուզուն» կգոռան: Սիրուն բան չէ: Ամենակարեւորն Էն Է, որ իմի լոբի կուղեմ մենակ շաքաթ օրերը:

## 2. 2. Բանաստեղծություն, որը կարող էր եւ չգրվել

Ես ինչ ցուրտ Է ու քամի.

Յըմի մեռա՞ծ եմ, թե կամ.

Չիղես՝ ո՞վ է թշամի,

Չիղես՝ ո՞վ է բարեկամ:

Չիղես՝ ո՞վ է բարեկամ,

Ո՞ւր են մայլի տղերքը.

Յըմի մեռա՞ծ եմ, թե կամ.

Կբուժե՞ք իմ յոթ վերքը:

Կբուժե՞ք իմ ՅՈՒԹ ՎԵՐՔԸ...

Ճողթթբերան բանաստեղծ,

Ո՞ւր են մայլի տղերքը՝

Ապականված ու անեղծ:

Ապականված ու անեղծ  
«Ուռած» մտավորական,  
Ազնիվ, տափակ, սուտ, անկեղծ,  
Լոթի-փոթի գողական:

Լոթի-փոթի գողական,  
Անունդ դեռ կթնդա,  
«Ուռած» մտավորական,  
Ցախ հավաքիր ու խնդա:

Էս ինչ ցուրտ է ու քամի.  
Յըմի մեռած էմ, թե կամ.  
Չիդես՝ ո՞վ է թշնամի,  
Չիդես՝ ո՞վ է բարեկամ:

**3. . Մի անգամ Ալեքսանդր Ավոյին սպասելիս (Աբսուրդ)**

Գինետուն: Կեսգիշեր:

Գործող անձինք՝ Պոլոզ Մուկուչ, Ծիտրո Ալեք, Միկիտան Վռազ:

Պոլոզ Մուկուչ (Միկիտանին) - Օղուլ, արաղ շատ խմինք, քիչ մեկ պիվա բեր՝ տեղն ընգնի:

Միկիտան - Մուկուչ ջան, ջանիդ դուրբան, ախր շատ ուշ է, Է՛, կնիկս ներս չի թողնի:

Պոլոզ Մուկուչ - Իմ էլ՝ մերս ներս չի թողնի, պատուհանից կմտնիմ ու վռազ կքնիմ: Խեղճ կնիկն ամեն անգամ կըսես՝ յա՛, էս Մուկուչս ե՛րբ էկավ, որ չտեսա: Դուն էլ պատուհանից մտի: Ծո, պիվա բեր:

Ծիտրո Ալեք (Մուկուչին) - Ծո, մենձ մարդ ես՝ մորիցդ կվախնա՞ս:

Պոլոզ Մուկուչ - Չեմ վախնա, տո ցռան, կամչընամ, օր մերս ընձի տեսնի խմած, հասկըցա՞ր:

Ծիտրո Ալեք - Յըբը ես ընչի՞ չեմ ամչընա: Յըբը, եդ բոյդ ընչի՞ համար է:

Պոլոզ Մուկուչ - Է, դու անամոթ, անաբուռ մարդ ես: Գետնի երեսին էլ չես երեւա: Կտեսնի՞ն, օր ամչըցնես:

Ծիտրո Ալեք - Յըբը ինձի հետ ընչի՞ հնգերություն կենես:

Պոլոզ Մուկուչ - Որդեւ անամոթ, անաբուռ մարդ ես ու անաղուհաց քրոյի շուն:

Միկիտան - Մուկուչ ջան, դուրբանդ եղնիմ, շուտ-շուտ խմե:

Պոլոզ Մուկուչ - Օղուլ, էս գործը հանգիստ կսիրե: Ինչքան շատ խմեմ, Էնքան շատ կըմնանք, ու Էնքան շատ կըմնանք, որ կնիկդ քեզի մե լավըմ դնգըստե:

Ծիտրո Ալեք - Ավոյից ի՞նչ խաբար:

Պոլոզ Մուկուչ - Ավոյիս տանձին Է՞: Շտը ման կուգա աշխարհքով մեկ իրա համար, մեկ-մեկ էլ Էս բանից կգրե, ինչը՞ն էր անունը:

Միկիտան - Ողանավոր:

Պոլոզ Մուկուչ - Չե, Էս մեգելը:

Ծիտրո Ալեք - Բանաստեղծություն:

Պոլոզ Մուկուչ - Յա: Ծո, հըբը մե՞նք ընչի չենք գրե օր: Յա, հասկըցա, հունար չունինք, մեր հունարը ուղեյ-խմելն է: Ավոս գա՛ մե լավըմ պաղիվ տամ: Էս օր կարդաց, Է՞, Էս օր կըսեր «ոգու սո՛վ-մոգու սո՛վ»: Կըսե, իրեք թվին է գրե: Չեղնի՞ խաբեզը:

Ծիտրո Ալեք - Ավոն չի խաբե, ծո: Մենք կմեռնինք, կերթանք, ինքը կմնա: Ավոն մենձ մարդ է: Մե՛նձ:

Պոլոզ Մուկուչ - Մեկ էլ դուն չես խաբե, տո Ալեքսանդրի մուկ: Ավոն իմ հընգերս Է՞, թե քու:

Միկիտան - Մուկուչ ջան, ախր վռազ էմ, ժամը ժամից անցել է:

Պոլոզ Մուկուչ - Ծո, յավաշ, որ ժամը ժամից անցել է, էլ ընչի՞ ես վռազ: Խմենք համբերանքի բաժակն ու երթանք: (ճոճվելով դուրս են գալիս) Ոգու սո՛վ-մոգու սո՛վ...

**4. Ներկա-բացակա**  
**Մարինե Պետրոսյան**

ՆԵՐԿԱ-ԲԱՑԱԿԱ

ա.

Փարիզն ինձ ասեց շուռ արի  
շուռ եկա Սենը ծիծաղում էր  
տեսա կորցրել էմ պայուսակս  
ու վախը մահից ու հիմարներից

ով որ եկել է մնում է  
մարմինը դառնում է փոշի  
ու փոշին մազերիս վրա է  
ու Սենը ծիծաղում է աչքերիս

սա է հավերժական ներկան  
որ ինչո՞ւ թվում էր անհնար  
մարմինը դառնում է փոշի  
մնում է քաղաքը այսինքն  
մնում է այն ինչ ապրեցիր

բ.

Սենը ախր ջուր է հասարակ  
ու դարն էլ հազիվ սկսվում է  
տխրության պատճառ էլ չկա  
որ լացեմ սիրտս չպայթի

ու Լեւոն վերջին թագավորը  
սրա հետ կարծես կապ չունի  
միայն թե ինչո՞ւ այս անձրեւը  
ոչ գալիս է ոչ էլ կտրվում

Սենը ախր ջուր է հասարակ  
ու դարն էլ հազիվ սկսվում է  
եւ ո՞վ քեզ ասաց որ վերջում  
դու նորից մնալու ես մենակ

գ.

ես այս քաղաքում  
ապրել եմ  
երբ դեռ չկայի

ու հաստատ դեռ ապրում է կատուն  
որ կտրեց ճանապարհս  
ու ես մահացա

մի օրով եմ եկել  
զնալու եմ  
բայց անձրեւ է գալիս  
ու պղտոր պղտոր է Սենը

երեք սեփ-սեւ կատու  
անձրեւի տակ թրջվելով հիմա  
վազեվազ գալիս են  
որ կտրեն ճանապարհս

ԵՍ ԿԵՆԴԱՆԻ ԵՄ ԲԱՅՑ ՉԵՄ ԽՈՍՈՒՄ

պատերազմն ավարտվել է  
հեռացողները հեռանում են  
նրանք որ չէին դիմանում մահացան

ես կենդանի եմ  
առավոտները դեռ ցուրտ է ցերեկներն արդեն շոգ  
այս ամառ Սեւանը չորանալու է - ասում է հարեւանս  
ես չեմ պատասխանում  
խոսելուց հոգնել եմ

բառերով դեռ հնարավոր է շահել դրամ  
իսկ երբ դրամ ունես կարող ես լռել  
որովհետեւ բոլոր բառերը օգտագործվել են ու մաշված են  
ու միակ բանը որ դրանցով դեռ կարելի է անել  
դրամ շահելն է

պատերազմն ավարտվել է  
հեռացողները հեռանում են  
նրանք որ չէին դիմանում մահացան

իսկ դու՞ -  
անհանգստացավ գրուցակիցս

ես ձրի եմ ուտում -  
ասացի

եւ գրուցակիցս  
ի նշան համերաշխության  
նորից ուրրեց  
պոչը

ՅՈՒՅԱՆԱԿ

փողոցը դատարկ էր  
խաղաղ  
օտար քաղաքում  
իջնում էր իրիկունը

լացս գալիս էր  
ցանկությունից  
ջղայնությունից  
որ չեմ կարողանա

անձրեւը կաթում էր  
հետո կտրվում նորից  
գունավոր աղյուսները շենքերի  
նման էին  
սպիտակ վիրակապի  
որ դնում են վերջին  
արյունոտ  
թեւե գիտեն  
որ իզուր է

ցուցանակները  
դատարկ փողոցների  
անկյուններում  
պահում էին անունները  
նրանց  
որ չկային արդեն  
ու չէին լինի  
այլեւս

ԴԱՐՉՅԱԼ ՊՈՆԵՉԻՎՅԻ ՇՈՒՐՉ

ո՞ր էիր կորել  
հարցրեց ինձ  
փողոցային մի կատու  
որի հետ  
արդեն մի անգամ  
գրուցել էիք

դու որտե՞ղ ես  
հայերեն սովորել  
տվեցի վերջապես հարցը  
որ մոռացել էի  
նախորդ անգամ

քեզանից  
թրթռուկի հոտ է գալիս  
ասաց ինձ  
գրուցակիցս  
ու ես չհասկացա  
թե ինչ էր ուզում  
ասել

ԴԱՐՉՅԱԼ ՊՈՆԵՉԻՎՅԻ ՇՈՒՐՉ - 2

դու սեւ ես  
ասացի  
սեւ կատուները  
դժբախտության նշան են  
բայց ես քեզ  
կարոտել էի

մեր երրորդ  
հանդիպումն էր  
այս անգամ  
խոսողը  
միայն ես էի

ես կենդանի եմ բայց չեմ խոսում  
առավոտները դեռ ցուրտ է ցերեկներն արդեն շոգ  
այս ամառ Սեանը չորանալու է - ասում է հարեանս  
գիտեմ - ասում եմ

#### ՉՈՐՔՈՏԱՆԻ

փողոցում ուր ապրում եմ  
բոլորը սիրում են չորքոտանի այս կենդանուն  
որի աղաչական հայացքը  
մահու չափ ատում եմ

փոխիր - ասում ես - փողոցը

փոխել եմ  
փողոցը քաղաքը երկիրը  
իզուր է  
ամեն տեղ կան շներ  
եւ մարդիկ սիրում են շներին

#### ԱՂԵԿՏՈՒՐ

գոռում էին  
աղեկտուր միալար անկանգ

ծեռքս փնտրում էր առարկա  
որ շոշափեր նրա կոշտությունը եւ  
պաշտպանվեր սարսափից  
բայց ոչինչ չկար

միայն ձայնը  
աղեկտուր միալար անկանգ

որ մահացու դանդաղությամբ  
քանդում էր մարմինս

#### ԵՐԿԵՆՈՍՈՒԹՅՈՒՆ ՊՈՇԻՎՅՈՒՆ ԵՆՈՒՐՁ

այս արեւ օրով  
ինչի՞ մարդ չկա -  
հարցրեց ինձ  
փողոցային մի կատու  
ի նշան գարմանքի  
ոլորելով պոչը

տներում ես -  
ասացի -  
կիրակի է  
հանգստանում ես  
որ հետո աշխատեն

որ ի՞նչ -  
համառեց գրուցակիցս

որ ուտեն -  
ասացի

## Բանաստեղծություններ

### [Եվա Մարտիրոսյան](#)

Էդ հայացքներն անմիտ չեն  
Ինձ շրջապատում են առարկաներ,  
որոնց չեմ ճանաչում:

Մարդիկ,  
որոնցից վախենում եմ:

Վախս քո նկատմամբ սովեր չունի,  
որովհետեւ լցրել է ամբողջ ներկաս ու շարունակում է դուրս  
սողալ:

Ես քեզից վախենում եմ:

Գիտեմ,  
որ մի օր կկատարվի:

Բարձի վրա կուչ եկած:

կատուները  
երեւի լուռ են  
երբ մտածում են

#### ՕՏԱՐԱԿԱՆԸ

որտեղի՞ց եք -  
հարցրեց գրուցակիցս  
փոքրիկ քաղաքի  
խաղաղ հյուրանոցում

իմ երկիրը չկա այլևս -  
ասացի -  
ես օտարական եմ

մերոնք դեռ ծնվում են  
այս երկնքի տակ  
բայց քիչ են  
գնալով ավելի քիչ են  
ու տխուր են բոլորը

Նրանք որ շատ են  
Նրանք որ գիտեն իրենք շատ են  
Նրանք բոլորը անսիրելի են ինձ  
ես օտարական եմ

որտե՞ղ էր ձեր երկիրը -  
հարցրեց գրուցակիցս  
փոքրիկ քաղաքի  
խաղաղ հյուրանոցում

այստե՞ղ - ասացի -  
իմ երկիրն այնտեղ էր  
ուր հիմա ես օտարական եմ

#### ԵՐԲԵՔ

այնտեղ ուր ես չկամ հիմա ձյուն է գալիս  
կամուրջների վրա կտուրների վրա եւ մայթերի վրա  
ու մարդ չկա  
միայն թաքուն բակերում  
հանկարծ ճոճվում են ճոճանակները թեթեւ քամուց  
հետո նորից լռություն է  
ու մարդ չկա  
երբեք

Աչքերս փակ:

Դռան բացվելու ձայնին նախորդող շունկներ ու լռություն:

Ներս մտած երեք ձայն, երկուսը ծանոթ, մեկը՝ չէ:

Լսում եմ՝ ինչ եմ խոսում,  
բայց չեմ ասի, չես հավատա:

Անծանոթ բառերի հայացքը բառերիս է ուղղված:

Չնացին:

Հիմա գիտակցում եմ,  
բայց եղ ժամանակ չեմ հասկանա,  
ինչի եմ գտնվում  
կեսգիշերային սարսփազդու աղաղակների,  
պատի վրա տեղացող կանոնավոր  
ու երբեմն անկանոն  
հարվածների մեջ:

Հիմա ես գիտեմ,  
որ եղ հայացքներն անմիտ չեն,  
իսկ աղաղակներն ու հարվածները՝  
պատճառաբանված:

Հիմա գիտեմ,  
որ կեղծ քնքազին,  
մարդու ձայնին անհամապատասխան բառեր եմ լսելու՝  
հանգստացնող,  
իրականում  
հոգիս կոռոզիայի ենթարկող,  
հավատացնող,  
որ ես այդ երեքից կազատվեմ սենյակում մի քանի ամիս  
մնալուց հետո:

## Ի՞նչ պիտի ընեմ կեսերը [Սովսե Պյաթեան](#)

Հիմա՝ երեկոյ,  
թաղեցիներս ազնուաբարոյ  
կը հանեն իրենց շունկերը պտոյտի,  
փոփոխութեան օդի,  
չունենալով շուն՝  
ինքզինքս է որ կը հանեմ փողոց.  
ես իմ շո՛ւնս եմ:

Կը հանեմ,  
արդէն փողոցներուն մեջն եմ,  
կը քալեմ,  
բնական պէտք մը գոհացնելով՝  
կու գամ ման գետիկները հոտոտալէն,  
ես սանձով արծակ,  
հոգեխառնութեամբ համարծակ՝  
ինձմէ աւելի խիզախ՝  
մեջի շունս կը նայի աջ, կը նայի ձախ,  
կը նայի հանդիպած շուներուն,  
կը կատարէ ընտրութիւն,  
ըլլալով շուն  
պիտի չունենայ նախընտրութիւն,  
ինք՝ շուն, միւսներն ալ՝ շուն,  
ուրեմն ի՞նչ տարբերութիւն,  
միւս շուները կպատասխանեն շունիս հրաւերին,  
ես ու շունս պահ մը կը շփոթուինք,  
ի՞նքն է որ հանած է զիս փողոց,  
ի՞նքն է որ կ'արծակէ սուլոց,  
սուլոցը կրնայ դառնայ յիշոց,  
մեզ իրարմէ զանազանել պիտի ըլլայ դժուար,  
նման ամեն փորձ պիտի ձախողի չարաչար:

~ ~ ~

Թաղեցիներս հիմա կ'առաջնորդեն շուները տուն,  
անսացողները կ'ենթարկուին անոնց կշտամբանքներուն,  
կ'ընդդիմանայ ի՛մս ալ,  
կը մերժէ վերադառնալ,  
շուն է, չի կրնար բռնութեան դիմանալ,

Դու ինձ մարդասպան ես դարձնում:

Դու որ աննշան օրվա աննշան պատահականություն ես:

Հումանոիդի առաջին չհաջողված մոդելներից մեկի տեսքով:

Դու ստիպում ես, որ ինձ նույնացնեմ կարդացածս վերջին վատ  
թրիլլերի զխավոր ու մուլագար հերոսի հետ:

Որը նվաղում էր հիվանդ բանականության ու տրորված  
երեւակայության արանքում գալարվող զոհի մարմնի հպումից:

Ինձ սկսել է հետաքրքրել մարդու ներքին կառուցվածքը,  
հատկապես հյուսվածքները:

Իմ մեջ մոռացած վախդ արդեն քամել եմ ու հյուսել խառնել օդի  
մանրագույն մասնիկների հետ:

Ստացված բալասանով պետք է ամբողջ մարմինդ շփես:

Իսկ եթե դրա ավելանալը համընկնի ծարավիդ հետ, կարող ես  
նաեւ խմել:

Բայց անպայման փոքր կումերով:

Հնարավոր են ջղաձգումներ:

Դու ինձ տալիս ես մարդասպան դառնալու բացառիկ  
հնարավորություն:

Բայց ես երեւի սպասեմ մինչեւ առավոտ:

Հիմա քնել եմ ուզում:

Խորհրդանշան  
Դրամատան հաշիւս՝ մէկ գերո,  
ունեւորիկը՝ մէկ, կողքին՝ վեց գերո,  
իմ կողմէ ո՛չ մէկ մտահոգութիւն,  
իր կողմէ մնայուն շահագրգռություն,  
մինչ իմ գերոս՝ հանդարտաբարոյ՝  
կը մնայ գերո,  
մէկ միլիոնը անոր,  
սիրուն գերոներով իր կլոր,  
տոկոս մը իր իր բարձունքէն՝  
կը զիջի քիչ մը ամեն օր:

Մինչ իմ գերոս կը մնայ անփոփոխ,  
անորը ամեն օր կը կորսնցնէ քիչ մը հող,  
դրամահոսութիւնը՝ պատրուակ,  
պատճառաբանութիւնը՝ վատորակ,  
ամեն օր կը կորսնցնէ քիչ մը աւելի,  
մինչեւ որ,  
որքան ալ թուի վիճելի,  
հաւանականութիւն կայ  
որ հազար տարի ետք երբ ունեւորը վերադառնայ,  
գտնէ իր հաշիւը իմ հաշիւին մերձակայ,  
ապա, հարիւր տարի եւս,  
նույնանան իրը եւ իմս՝  
հաւասարին,  
գերո եւ գերո:

Հաւասարի՞ն,  
բայց ամենեւին,  
նոյնանա՞ն,  
բայց պիտի ըլլայ ատիկա անբնական,  
պիտի ըլլայ անբարոյական:

Իմս՝ գերո մը պատուական,  
գերո մը անկեղծ, անմիջական,  
ենթակայ ո՛չ մէկ չարաշահութեան  
բնաւ յարափոփոխ, երբեք յեղեղուկ,  
գերո մը մի՛շտ վեհ, մի՛շտ մեծաշուք,

վստահ չեմ որ,  
օր մըն ալ,  
պիտի չէղի ոլոր ճանապարհներու վրայ,  
փողոցը մնայ,  
ես վերադառնամ տուն,  
շունս կորսնցնե գիս, մնայ անտուն,  
ես կորսնցնեմ շունս, մնամ անշուն,  
շունս կորսուի անհետք,  
դառնամ ես անպետք,  
տխրիմ, լամ, ողբամ,  
այլեւս բնաւ դուրս չգամ,  
ո՛չ երեկոներուն, ո՛չ գիշերներուն,  
ի՞նչ ընեմ ես կեանքը առանց շուն:  
Արեւը որոշած էր  
Երբ պատուհանէն դուրս նայեցայ առաւօտուն,  
գտայ երկինքը ամպամած, տմոյն.  
«անարեւ օր մը ես»՝ ըսի ես ինծի,  
երթալու համար աշխատանքի՝  
մտայ բաղնիք լոզանքի:  
Ապա ածիլուեցայ, հագուեցայ,  
ամեն օրուան պէս,  
պայուսակս կախած ուսես,  
դուրս վազեցի,  
ուղղուեցայ դէպի «Ռեյի-Տիտլո» փապուղի:

Երբ հասայ փապուղիի մուտքին,  
շլացած՝  
կանգ առի առաջին իսկ սանդղամատին:  
Դեմք մը կլոր, լուսահեղեղ  
կը բարձրանար  
աստիճանները խոռոչին:  
Հասկցայ անմիջապէս:  
Արեւը,  
այդ առաւօտ  
որոշած էր ծագիլ փապուղին:

իր գերո՞ւն,  
իր գերոն՝ սմսեղուկ, հեղձամղձուկ,  
նախատուած, նուաստացած,  
ամեն օր քիչ մը անելի խայտառակուած:  
Այսպէս,  
միկն վարկագուրկին գերոն  
կը դառնայ պայթելու դատապարտուած պղպշակ,  
կը դառնայ խլեակ,  
ես գիրկս կ'անեմ իմ աղուորիկ, իմ կլորիկ գերոս,  
իմ գերոս հաւասարութեան կարգախօս;  
կը խօսիմ անոր մասին մեծարանքով  
կը գնահատեմ զայն համբոյրով,  
հուսկ՝  
ընդդէմ ընչաքաղցութեան,  
ընդդէմ շուայտութեան,  
ընդդէմ բոլոր մոլութիւններուն համանման՝  
կը հռչակեմ պայքարի խորհրդանշան:

Տուրտէն եւ անանուկթենէն  
Նամա՞կ պիտի գրէք,  
թոյլ տուէք որ գոնէ ե՛ս հայթայթեմ թուղթը:  
Ունի՞ք թուղթ,  
ուրեմն գոնէ ես հայթայթեմ գրիչը:  
Գրի՞չ ալ ունիք,  
գոնէ ե՛ս դառնամ ձեր սեղանը, ձեր մելանը:  
Գրեցէ՛ք ձեր նամակը  
եւ թոյլ տուէք որ գոնէ ե՛ս հայթայթեմ դրոշմաթուղթը:  
Դրոշմաթուղթ ալ ունիք,  
թոյլ տուէք որ գոնէ ե՛ս գրեմ հասցեն:  
Գրած էք հասցէ՞ն ալ:  
Ուրեմն, վերջապէս, թոյլ տուէք  
որ գոնէ ե՛ս ձգեմ զայն նամակատուփը:

Ապա՛ եթէ մոռցաք  
մէկ անգամ գոնէ յիշատակելու գիս,  
մոռցաք տալու անուս,  
յիշելու գիս երախտագիտութեամբ՝  
թէ ե՛ս եմ որ ուզեցի թուղթ հայթայթել ձեզի,  
հայթայթել գրիչ եւ մելան,  
դառնալ ձեզի սեղան եւ յենարան,  
փակցնել դրոշմաթուղթ եւ տանիլ նամակատուն,  
չգտա՞յ ձեզմէ ճանաչում,  
ուրեմն ես կը մեռնիմ ցուրտէն, անանուկթենէն,  
ես կ'մեռնիմ ապերախտութենէն,  
ես ամենէն շատ կը մեռնիմ անտարբերութենէն:

Ու որպէսզի չպատահի այդ  
բարկաճայթ՝  
կու տամ ձեզ հավաստիք,  
կը ստանաք նաեւ երաշխիք,  
որ՝  
գործելով արարք մը վաւերական,  
արարք՝ համարժէք ձեր վատութեան,  
ճամբուն վրան նամակատան  
բզիկ-բզիկ՝  
ձեր նամակը ես կ'ուղարկեմ հասցէին յիշաչարութեան:

## Հոգեվերլուծություն

### Հարուստ Կրեյան

Անտանելի է, երբ զգում ու մեկնաբանում ես քո արարքներն ու զգացմունքները մասնագետի հայացքով... Վերլուծում եմ երազներս, հաճույքիս մանր գրգռիչները, ցանկություններս եւ, ի վերջո, զալիս այն եզրակացության, որ ես էլ մյուսների նման բնագոյային մի անասուն եմ եւ իրավունք չունեմ մնացածից ինձ բարձր դասել լոկ այն պատճառով, որ հոգեբանի մասնագիտություն ունեմ:

12 ապրիլ

Երեկ մի նոր այցելու գրանցեցի: Պարզվեց, որ խմբակային սեքսի երկրպագու է: Դրդապատճառները միանգամից պարզեցի: Պատմեց, որ երբ դավաճանում է ամուսնուն, ապա մեկ տղամարդը բավական չէ դավաճանության գիտակցությունը քաղցրացնելու համար: Մեկի հետ նա իրեն զգում է ինչպես ամուսնու գրկում: Իսկ երբ երկուսի հետ է, մեկին զգում է որպէս իր ամուսին, մյուսին՝ սիրելի: Այն մտքից, որ ամուսինը նույնպես կարող է կեղտոտ բաներ անել,

3 սեպտեմբեր

Գործերս հրաշալի են: Աշխատանքս նորից հետաքրքրում է ինձ, եւ ես այն անում եմ հաճույքով: Դա նկատեցին նույնիսկ հաճախորդներս: Մի երկու կին հաճոյախոսեցին: Իսկ օգնականս պարզապէս հարցրեց, թէ ով է նա: Ես չպատասխանեցի, եւ նա հարցրեց՝ լավ, ովքեր են նրանք: Ես զարմացա ու հարցրեցի, թէ ինչպէս զիսի ընկալ, ասաց, որ աչքերս փայլում են: Երկուսն էլ:

Ճիշտ է, նրան երկար ժամանակ է չեմ տեսել, բայց վերջերս եկավ նրա ընկերուհին: Ասաց, որ ուզում է ինձ հետ գրուցել: Ինչ-որ մի ծերուկ նրան ամուսնանալու առաջարկություն էր արել, եւ նա խորհուրդ էր հարցնում: Ասացի՝ ամուսնացի, եւ մենք պառկեցինք:

25 սեպտեմբեր

Ենթագիտակցականում հաճույք է ստանում. ամուսինը խոզ է: Բայց վերջերս, ինչպես խոստովանեց, ինքը հաճույք է ստանում, երբ երկրորդ տղամարդու դերում պատկերացնում է ամուսնու ընկերոջը, որի հետ նա ժամերով շախմատ է խաղում՝ ընկերոջը գերադասելով ջերմ ընտանեկան երեկոյից: Հետևաբար այս խնդրը կհնր գոհ է անտարբերության, անբավարարվածության եւ «շախմատային» խանդի: Բայց ինձ առավել զարմացրեց այն, թե որտեղ է նա գտել երկու երիտասարդի, որոնք լիովին բավարարում են նրա սեռական եւ հոգեկան անբավարարվածությունը: Դրանք, ինչպես ասաց, երկու ուսանող են, որոնք որոշակի գումարի դեպքում համաձայն են նույնիսկ միայն իրար հետ լինել:

Ողբալի վիճակում է երիտասարդությունը:

#### 5 մայիս

Գիշերը հիանալի էր: Մի տասնվեցամյա պոռնիկ եմ գտել, լրիվ ձեռավորված կազմվածքով ու գերծ ամեն տեսակ բարդույթներից, իհարկե, նա դրանցից զրկվում է անմիջապես, երբ ավել փող են տալիս: Ասեմ, որ հիանալի գործ են անում: Մինչեւ, որ մեր հասարակության մեջ ամենացանկալի, բայց ամենաարգելված երեւոյթն է, մեծ եկամուտներ է բերում նրանց: Երբ դրա մասին խոսք են բացում, այնպես են նեղանում, կարծես կուսանոցի վերջին շրջանավարտներն են: Բայց հենց բարձրացնում են վարձը, միանգամից այնպիսի էստուգիազմով են անցնում գործի եւ ընթացքում էլ այնքան են ջանք թափում, որ կասկածել նրանց ստացած հաճույքի բեմականացմանը մի տեսակ ստորացուցիչ է: Օրալ սեքսը հոգեվերլուծության մեջ նորմալ, օրինաչափ երեւոյթ է, ձեռավորված ծծկեր տարիքում:

#### 22 մայիս

Հին հաճախորդուհիներիցս մեկը եկավ մոտս ու հուզված բողբոջեց ամուսնուց, որ նրան ստիպում է ոտքերը չթրաշել:

- Ես արդեն մեկ շաբաթ կլինի, որ չեմ մաքրել, իսկ նա ինձ չի ցանկացել: Ամեն օր անկողնում քնելուց առաջ ստուգում է: Միգուցե գոթ է կպել, - լրիվ անկեղծ ու արտասովակալած ասաց երիտասարդ կինը: Ես նրան հանգստացրի եւ ասացի, որ ժամանակից շուտ ինչ-որ ենթացություններ անելը հիմարություն է: Նա այնքան էր հուզված, որ մի կողմ քաշեց շրջագցեստի փեշերը եւ նուրբ գուլպան իջեցնելով սկսեց ցույց տալ իր գեղեցիկ, բայց մազոտ ոտքերը:

Ահավորն այն է, որ գիշերը վեր թռա սարսափ երազից. փրչոտ ոտքեր էի տեսել: Տասնվեցամյա պոռնիկի փրչոտ ոտքերը:

#### 4 հունիս

Սարսափում եմ, երբ պատկերացնում եմ, որ մարդը ստեղծված է միայն սեռական բնագոյներից: Այդ դեպքում նրա առաքելությունը այս կյանքում չեմ պատկերացնում: Ցինիկ մնալու ուժ այլևս չունեմ, որ անդեմ, թե ոչ մի առա քելություն էլ չկա, եւ ստեղծված ենք միայն ամորթիներից ու հեշտոցներից եւ կամաց-կամաց, բայց հաստատուն քայլերով գնում ենք դեպի կատարյալ այլասերում: Ու հենց հասնենք կատարյալ այլասերման, կհոգնենք ու կզզվենք, եւ կսկսվի սեռական հարմոնիայի դարաշրջանը: Բայց սկսեցի ինքս ինձ վրա զարմանալ: Եթե այդպես է՝ ուրեմն մարդիկ կգիտակցեն իրենց առաքելությունը սեռական հարմոնիայի սահմաններում. միեւնույն է՝ անտանելի է:

#### 14 հունիս

Մոտս եկավ այն հաճախորդը՝ անթրաշ ոտքերով: Երջանիկ էր ու ինքնագոհ: Պատմեց, որ ամուսնու մեկշաբաթյա տարօրինակ պահվածքից հետո, կիրակի օրը նա երեխաներին տարել է ծնողների տուն: Կնոջը գայթակղելով մտցրել է լողասենյակ, որտեղ նախօրոք լցված է եղել լոգարանը: Սիրախաղով մտել են այնտեղ, եւ ամուսինը թրաշել է կնոջ ոտքերը, ապա լիզել է դրանք այնքան, մինչեւ կինը հասել է օրգազմի:

Ուրախ եմ՝ երբ հաճախորդներս իրենց լավ են զգում: Այժմ նա հպարտանում է իր ամուսնով այնքան, որքան ոչ մի կին իմ հաճախորդներից:

#### 21 հունիս

Հաճախորդուհուս պատմածը այնքան էր տպավորվել մեջս, որ որոշեցի փորձել: Մտովի պատկերացրեցի այն մանկահասակ պոռնիկին: Պատկերացրի, թե ինչպես եմ լեզվով շոյում նրա թարմ ոտքերը: Հայտ հանկարծ մտածեցի, թե ինչքան-ինչքան սերմեր են հոսել այդ ոտքերի վերից վար. սիրոս խառնեց,

Աշխատանքը առաջվա նման խեղդում է: Բայց անընդհատ փորձում եմ ժամանակ գտնել նրա համար: Ինչքան զանգում եմ՝ պատասխան չկա: Սակայն հենց այն, որ փորձում եմ նրան գտնել, ինձ բավարարում է ու հանգստացնում: Ինձ թվում է, թե նա ինձնից հոգնել է ու ձանձրացել: Ես նրա համար այլևս հետաքրքիր չեմ:

Փորձում եմ չմտածել նրա մասին, երբեմն ստացվում է:

#### 9 հոկտեմբեր

Երեկ գիշեր եկավ ինձ մոտ: Գիշերվա կեսին ջարդեց դուռս, բացեցի՝ հարբած էր ու զզզված: Ասաց, որ ահավոր հոգնած է, եւ որ միայն ես կարող եմ օգնել նրան: Լողացավ: Ես նրան տարա մյուս սենյակ: Երբ պառկեցնում էի, սկսեց քանդել վերնաշապիկիս կոճակները, ասաց, որ ինձ համար միշտ էլ պատրաստ է: Նրան մի կողմ հրեցի եւ թողեցի, որ քնի: Առավոտյան երբ արթնացա, նա այլևս չկար: Նույնիսկ երկտող չէր թողել, միայն լոգարանում, հայելու առաջ մոռացել էր ականջօղեղը: Ես այդ օրը չփորձեցի վերլուծել նրա վարքը, պատճառը երեկի հիասթափությունն էր ու ցավը:

#### 22 հոկտեմբեր

Սկսել եմ աշխատել դիսերտացիայի վրա, մի բան, որ ինձ ամենեւին պետք չէ: Պարզապես զբաղվում եմ: Հետաքրքիր է, նաեւ ձանձրալի, հոգնեցուցիչ: Անուս այն տարածում է գտել: Գրասենյակս մեծացրել եմ: Օգնականիս լրիվ անկախ լիազորություններ եմ տվել, եւ նա այժմ ինքն է օգնականներ պահում: Հաջողությանս գրավականը իմ կարծիքով ոչ են եմ, ոչ էլ մեթոդը, քանի որ հին այցելուներին, որոնք այժմ օգնականիս մոտ են հաճախում, ամենեւին էլ չեն հուզում իմ եւ նրա մեթոդների տարբերությունները: Պատճառը միջավայրն է՝ մութ կաբինետներ, կիսամութ միջանցք, գորշ ընդունարան, փափուկ աթոռներ, կաշվե բազմոց, հաստափոր հատորներ՝ շարված մեծ գրապահարաններում, ծխախոտի թույլ, մշտական ծուխ եւ հոգեբաններ՝ մեծ քթերին ակնոցներ: Այժմ այնտեղ լինում եմ շատ քիչ: Հիմնականում տանն եմ աշխատում:

#### 15 նոյեմբեր

Նրանից ոչ մի տեղեկություն չունեմ եւ չեմ էլ հետաքրքրվում:

#### 28 նոյեմբեր

Ցուրտը այս ձմեռ անտանելի է, բոլորի ուղեղները, բնագոյները, զգացմունքները ջուր են մտել: Ցուրտը սպանել է բանականությունը: Մարդիկ տներից դուրս չեն գալիս: Ամենասպառնալի ապրանքը դարձել է գինին եւ օդին: Մարդիկ պատրաստվում են Նոր տարվան: Ամբողջ տարի նրանք ինչ-որ բան են եւ գցել այդ օրվա համար եւ այժմ հեթանոսական մոլեռանդությամբ պատրաստ են զոհեր մատուցել «Նոր տարի» կոչվող աստծուն եւ նրա՝ հույս, առողջություն, առաջխաղացում եւ մյուս զավակների:

Չզվում եմ ձեռականություններից, որոնցով լիքն է ու լցվում է մեր կենցաղը: Երեկ փակեցինք գրասենյակը այն խորին համոզմամբ, որ քսան օրից շատ այցելուներ ենք ունենալու՝ նոր գլխաքաղցրով եւ լաց ու կոծերով:

#### 3 հունվար

Դեկտեմբերի 28-ից անջատել էի հեռախոսս: Անցան զոհաբերության օրերը: Հունվարի մեկին միանգամից կատարեցի բոլոր քաղաքացիական պարտականություններս՝ ծնողների տուն, քրոջ տուն, հորեղբայր, մորեղբայր եւ այլն: Մեկի երեկոյան արդեն վերջացրել էի բոլոր պայմանականությունները: Կեսգիշերին դուռս քերծեցին: Նա էր՝ հիմար ծախսող դեմքին: Լրիվ նորմալ էր ու մի տեսակ առույգ, թռավ գիրկս, եւ երկու օր ու գիշեր մենք երազի մեջ էինք: Հետո գնաց, էլի առանց ոչ մի բառ ասելու, նորից մոռացավ ականջօղեղը:

#### 7 հունվար

Բացել ենք գրասենյակը: Ամանորյա գինարբուքը ոչ բոլորի վրա է բարենպաստ ազդեցություն թողել: Կանայք բողբոջում են անհավատարիմ ամուսիններից, ամուսինները՝ իրենց անբավարարվածությունից: Առաջվա նման այնտեղ քիչ եմ լինում: Շաբաթը մեկ ծանոթանում եմ բոլոր գործերին եւ դրանց ուղղությամբ տարված աշխատանքներին: Դիսերտացիաս հիմնալի վիճակում է, սկսել եմ հավատալ, որ ինքս ինձնից ինչ-որ բան ներկայացնում եմ:

վազեցի զուգարան: Յետ տվեցի, մածուն խմեցի, եւ գիտակցելով, թէ ինչքան կեղտոտ ու փչացած մարդ եմ՝ մտա անկողին:

#### 21 հունիս, գիշեր

Շոգերն անտանելի են դառնում: Երեկ թափվեց իմ կարծիքով ամառվա վերջին անձրեւը: Ցերեկները շիկանում են արեւից, գիշերները պահում են այդ շիկացածությունը տաք քամիների շնորհիվ: Գիշերներն ավելի շոգ են: Փուքսի էֆեկտ է տալիս քամին: Չզվում եմ մշտական փոշոտ քրտինքից, որ համարյա չեմ կարողանում ջնջել վրայիցս:

Ինչեւէ, երեկ ինձ թվաց, թէ երեկոյան հով է լինելու, եւ դուրս եկա քաղաք: Լրիվ պատահական հանդիպեցի այն աղջկան՝ մանկահասակ պռնիկին: Եվ քանի որ անելու բան չունեի, առաջարկեցի զբոսնել. նա համաձայնվեց: Չբոսնեցինք ու զրուցեցինք, ինձ երբեք այդքան լավ չէի զգացել: Վերջում նրան տուն ճանապարհեցի, փոխանակեցինք հեռախոսահամարները:

#### 4 հուլիս

Գործերս նորմալ են: Ճիշտ է, հաճախորդներս պակասել են, ամառ է, բայց ապրելու համար փողս լրիվ բավական է, եթե հաշվենք, որ շատ ծախսող չեմ: Վերջերս բացեցի գրապահարանը՝ օգնականիս մասնագիտական գիրք տալու համար եւ ցավով հայտնաբերեցի, որ մոտ մեկ տարի է, ինչ ոչ մի գիրք չեմ բացել, ոչ մասնագիտական, ոչ էլ գեղարվեստական: Ցավալի է, երբ այդ մասին պատմեցի օգնականիս, ասաց, որ Սոկրատյան բարդույթ է մոտս, հասել եմ այն աստիճանին, որ գիտեմ, որ ես ոչինչ չգիտեմ, եւ հենց այդ մտքից ավելորդ եմ համարում ինչ-որ բան ընթերցել կամ ինչ-որ բանով հետաքրքրվել: Ինձ համարում եմ գիտուն, բայց միաժամանակ ցնիկաբար պատկերացնում եմ ոչնչությունս: Նա լավ մեկնաբանեց, բայց Սոկրատյան բարդույթի մասին ես երբեք չէի լսել, ասաց, որ ինքն էլ չի լսել: Խելացի տղա է:

#### 8 հուլիս

Գրասենյակս փակել եմ: Շոգ է, եւ մարդկանց ուղեղը ալարում է գիտակցել իր պրոբլեմներն ու անհանգստությունները: Մի երկու շաբաթից նորից կբացեմ: Երեկ չէ առաջին օրը հանդիպեցի այն աղջկան: Հիանալի ժամանակ անցկացրինք: Հիանալիին այն էր, որ օրը վերջացավ անկողնով, դա չէինք պլանավորել, ու ստացվեց ինքնաբերաբար, մազնիսի նման: Անկարագրելի զգացում է, երբ ինչ-որ մի կին քեզ ցանկանում է այդպիսի եռանդով: Առավոտյան միասին նախաճաշեցինք, եւ միայն նրա գնալուց հետո հիշեցի նրա ով լինելը: Կանգնած էի դռան շեմին եւ նայում էի, թէ նա ինչպես է իջնում աստիճաններից, երբ հանկարծ ինձ թվաց, որ ահա կանցնի մի երկու ժամ, ու նա կվերադառնա՝ ինչպես տուն: Յենց այդ ժամանակ էլ սթափվեցի ու հիշեցի, որ նա պռնիկ է:

#### 23 հուլիս

Վերջին հանդիպումից մի քանի օր հետո, լրիվ պատահական, անսպասելի դուռն ծեծեց եւ ներս մտավ նա: Խնդրեց, որ գիշերի ինձ մոտ: Քնեց մյուս սենյակում: Առավոտյան լսեցի փակվող դռան ձայնը: Խոհանոցում տաք նախաճաշ էր ու մի երկտող. «Հուսով եմ, կներեմ, երեկ շատ հոգնած էի, ու զլուխս պայթում էր, բայց քեզ շատ եմ կարոտել, մի երկու օրից խոստանում եմ գալ»: Ինձ մի տեսակ փախսի նման էի զգում, բայց կուլ տվեցի, ճարս ինչ:

#### 25 հուլիս

Վաղուց արդեն բացել եմ գրասենյակս: Հաճախորդները շատ են, համարյա ամեն օր նոր մարդիկ են գալիս: Ազատ եմ միայն կիրակի օրերը: Առավոտից մինչեւ ուշ երեկո զբաղված եմ: Գործի որոշ մասը տվել եմ օգնականիս: Գիշերները տանը լսում եմ վերլուծում եմ ձայնագրությունները, քանի որ ժամանակ չկա, մի այդքան գործ էլ տվել եմ օգնականիս, նա գոհ է ու երջանիկ, քանի որ գիտի՝ ոչ մի ուրիշ հոգեբան այդքան գործ չի տա իր տասնիննամյա օգնականին: Ավելացրել եմ աշխատավարձը, եւ այժմ նա ստանում է նորմալ մասնագետին վայել գումար: Իսկ եթե գումարենք փորձը, ապա նրա գործնական պատրաստվածությունը գերազանց է:

Նրանից, այն աղջկանից երկար ժամանակ ոչ մի լուր չունեմ: Փորձել եմ կապվել, բայց չի ստացվում: Ճիշտ է, ամսվա սկզբին զանգեց եւ խոստացավ գալ, բայց այդպես էլ չեկավ: Դե ես էլ առայժմ ժամանակ ամենեւե՛ն չունեմ:

#### 17 հունվար

Այսօր եկեղեցի էի գնացել: Վաղուց չէի գնացել: Ապշել եմ, որ մի պահ զգացի գոյություն: Ծարտաբապետական հարմոնիան, ինկարույրը, մոմերի ջերմությունն ու աղոթքի բարբաջը այնտեղ մի պահ ինձ համար ծնեցին Աստծուն: Ճիշտ է, դա տեւեց շատ կարճ ժամանակ, բայց մինչեւ հիմա դրա ազդեցության տակ եմ: Կարծեմ ժամերգություն էր: Քահանան ասաց՝ խաղաղություն ամենեցուն: Հասկացա: Յետո ասաց՝ օրհնյալ է տեր: Չհասկացա, ինչպես կարող է հենց ինքը օրհնությունը օրհնյալ լինել ինչ-որ մեկի կամ մի երեւոյթի կողմից, եթե խոսքը նույնիսկ Քրիստոսի մասին էր:

Մի խոսքով, շատ բան չհասկացա, բայց չեմ էլ ուզում հասկանալ, կարեւորը բառերը չեն, կարեւորը զգացողությունն է գերբնականի:

#### 28 հունվար

Երեկ գիշեր նորից եկավ՝ հարբած, ծեծված ու ցրտից կապտած: Երբ դուռը բացեցի ու տեսա նրան, սարսափեցի: Կանգնել էի շեմքին ու զարմացած նայում էի նրան: Այնքան էի զարմացած, որ նա չհիմացավ ու հարցրեց՝ կարո՞ղ է ներս գալ: Նորից լողացրեցի ու պառկեցի քնելու: Միակ բանը, որ ես այդպես էլ չսիրեցի մարդկային եուրթան մեջ, դիմացինի բարությունը սովորություն դարձնելն է: Առավոտյան երբ արթնացա, նա դեռ քնած էր: Արթնանալու միտք էլ չունեի: Միայն կեսօրին զարթնեց ու մտավ խոհանոց: Ինձ ձայն տվեց, եւ մենք միասին սեղան նստեցինք: Առանց իմ հարցի, քանի որ ես նրա հետ ոչ մի բան փոխանակելու ցանկություն չունեի, սկսեց պատմել ինչ-որ հեքիաթ: Երեկոյան կողմ հավաքվեց ու գնաց: Ականջօղերը նորից մոռացավ, ես էլ նրան չհիշեցի դրանց մասին:

#### 5 փետրվար

Մի պահ մեջս անասելի զգացում արթնացավ նրան փրկել, փրկել ամեն ինչից, իր այդ գիժ կյանքից, ծեծված ապագայից, պռնիկի հոգեվիճակից: Դա հուզական պոռթկում էր, սակայն մինչեւ հիմա էլ ինչ-որ հետք թողել է:

#### 10 փետրվար

Նորից եկավ, նորից ծեծված, հոգնած ու հարբած: Ես նրան պահեցի մեկ շաբաթ: Ուղիղ մեկ շաբաթ ես մոռացա նրա անցյալն ու ներկան ու իմ մտքում կառուցեցի նրա ու իմ համատեղ ապագան: Նա կարծես նույնպես մոռացել էր իր ով լինելը: Ամբողջ օրը կլանված աշխատում էի դիսերտացիայիս վրա, իսկ գիշերները ապրում էի նրանով: Գիտեի, որ դա երկար չի շարունակվի: Գնաց: Ասաց՝ մի քանի ժամով:

#### 28 փետրվար

Հաճախ եմ գնում եկեղեցի: Վերջերս նույնիսկ մոմ վառեցի, քանի որ լսել էի, թէ ինչ-որ մի հերթական սուրբ ասել է՝ նույնիսկ մեկ մոմ վառողը կարող է հավակնել ներման: Իհարկե տրամաբանությունս ասաց, որ դա ընդամենը եկեղեցական եկամտի գովազդ է, բայց...

#### 3 մարտ

Դուռը բացեցի զզվանքով, այս անգամ հարբած չէր, պարզապես երակն էր ծակել: Երեք օր մնաց, նրան մատով իսկ չկպա: Գնաց. ավելի շուտ փախավ կեսգիշերին: Վերցրեց ականջօղերից մեկը: Սկզբում ինձ թվաց՝ եթե վերցրել է մեկը, ուրեմն նրան այլևս երբեք չեմ տեսնի: Բայց հետո հասկացա, որ վերցրել էր վաճառելու համար:

#### 17 մարտ

Գիշերվա երկուսին դռան զանգը համառորեն ինձնից ուշադրություն էր աղերսում: Հաստատ գիտեի նրա մտքինը: Կես ժամ հետո էլ դուռը դեռ շարունակում էր իր լացը: Չդիմացա: Մոտեցա դռանը, նայեցի անցքից: Նա կանգնած էր՝ մաշված ու թռչած, լաց էր լինում: Հավանաբար զգաց, որ դռան տետում մարդ կա, եւ սկսեց խնդրել, որ դուռը բացեմ, նրա անցավ, որ այլևս չի գնա: Ես նստեցի գետնին ու լսեցի խոս լացը, մինչեւ հոգնեց ու հեռացավ:

#### 2 ապրիլ

Իմ ամբողջ գիտական գրականությունն ու աշխատություններս թողնում եմ օգնականիս, ինչպես նաեւ գրասենյակն իր կահավորումով եւ իրավունքներով: Տունս՝ ծնողներիս, ֆինանսական խնայողություններս նույնպես...



Երեկ գիշեր ժամը երկուսին դուռս ծեծեցին, բացեցի՝ ևս էր, ձեռքին մի շիշ շամպայն: Մենակ չէր, ընկերուհու հետ էր: Թռավ վզովս, համբուրեց: Երբ ներս մտան, հարցրեց՝ կարող է ընկերուհին գիշերը մնալ ինձ մոտ: Բավականին փոխվել էր, արտաքինին ավելի էր ուշադրություն դարձրել, քան առաջ, հարցրեցի, թե ոնց է, ասաց՝ հիանալի: Վրայից լավ օծանելիքի հոտ էր գալիս: Չրուցեցինք երկար, ապա գնացինք քնելու, ես նրա հետ, ընկերուհին մյուս սենյակում: Նոր էինք սկսել միմյանց վրայից շորերը հանել, երբ ներս մտավ ընկերուհին: Չհասկացա ինչպես, բայց նա միացավ մեզ: Գիշերը անցավ հիանալի: Առավոտյան երբ արթնացա եւ անկողնում գտա երկու տաք, թարմ մարմին, ինձ արտակարգ էի զգում: Մի կերպ գտա ոտքերս ու ձեռքերս ու ազատվելով գնացի խոհանոց: Զանի որ ուշանում էի, մի երկտող գրեցի ու վագեցի աշխատանքի: Ճիշտ է, հետո փոշմանեցի, որ տունս թողել եմ երկու համարյա անծանոթ պոռնիկի: Երբ երեկոյան վերադարձա, նա տանն էր: Ընկերուհին չկար: Նա հագել էր իմ խալաթը եւ բաց փեշերով մաս էր գալիս տան մեջ: Ընթրեցինք, հետո նստեցինք բազմոցին: Համբուրվում էինք՝ երբ զնգաց հեռախոսը: Նա տեղից վեր թռավ ու վագեց հեռախոսի մոտ, խոսեց ինչ-որ մեկի հետ եւ անմիջապես սկսեց հագնվել, ասաց, որ պետք է գնա, եւ համբուրելով հեռացավ, ինձ շվարած թողնելով բազմոցի վրա, գրգռված եւ դեռ տաք:

12 ապրիլ

Ես վատատես չեմ, ամենեւին, ես պարզապես ցույց եմ տալիս այն, ինչ մարդիկ վախկոտությամբ քողարկում են: Ի վերջո մեր կյանքը մի մեծ թյուրիմացություն է՝ գեղեցիկ ու պոետիկ: Եվ միայն գեղեցկությունն ու սիրելու անհագ, անիրականանալի ցանկությունը մարդուն կարող են դարձնել անհատ, ազատելով ստամոքսի ահագնացող չափերի հասնող պահանջներից:

11 մարտ 2000 թվական

## «ԲՆԱԳԻՐ» թիվ 1. Ազատագրում կողմնորված տաբուների բանտից Վարդան Զալոյան

Գրականությունը կրում է չհասկացվածության անջնջելի կնիքը: Այն, ի տարբերություն նամակի, չունի երաշխավորված հասցեատեր: Ճիշտ է, հաճախ տեղ հասնում է, բայց՝ առանց հետադարձ նամակի հույսի: Եթե նույնիսկ ընթերցողը պատրաստ է պատասխանել, ապա, լավագույն դեպքում, որպես ստեղծագործության հեղինակի լավ ծանոթ միայն: Ծանոթը, քանի որ բուն հեղինակն ապրում է ստեղծագործության մեջ ծնվում նրա վերնագրով, մեռնում՝ վերջակետի հետ: Դեռ չհաշված այն իրողությունը, որ գրողները, հատկապես՝ բանաստեղծները, վաղամեռիկ լինելու ավանդույթ ունեն/:

Իսկ ու՞մ համար է նախատեսված գրախոսի աշխատանքը: Ընթերցողի՞: Բայց հասարակական հարցման արդյունքի նա չի կարող հավակնել: Հեղինակի՞: Բայց նրա ինչի՞ն է պետք սղագրող քարտուղարի դերում լինել: Ազնվորեն խոստովանենք. հաղորդագրություն ուղարկողի ու ստացողների գրականության մեջ առկա խառնաշփոթում գրախոսը պղտոր ջրերի ձկնորս է: Նա որոշել է փոխարինել առաքիչ հեղինակին, ապացուցել, որ գոյություն ունի մեկ ուրիշ հեղինակ՝ շվարեցնելով ընթերցողին: Ընդ որում, պահպանելով ճշմարտանմանության հասարակական նորմը:

Բայց գիտությունը չի ներում գրախոսներին ուղղամտության պակասը, հեղինակները՝ իրենց ինքնության նենգափոխումը, իրենց մեջ մեկ ուրիշին տեսնելու, այսինքն, ի վերջո՝ երկերեսանի երեւացնելու մարմաջը:

Գրաքննադատն արժանի է կարեկցության: Նրա փրկությունը խելոք երեւալն է, որի համար պետք է չխախտել մի կարեւոր սկզբունք. չի կարելի խոսել այն գործերի մասին, որոնց անդրադառնալով հիմար վիճակի մեջ կհայտնվի: Խոսքը արձաթ է, լռությունը՝ ոսկի: Հանուն երաշխավորված արձաթի ես այս գրախոսականում շրջանցում եմ որոշ ստեղծագործություններ, թեմաներ կամ մանրամասներ: Լռության ոսկին վերջիններիս հատկացնելու մեջ խոսում է միայն ինքնապահպանման բնագոյ:

Ամփոփելով ավելացնենք, որ գրախոսը /քննադատը/, ծածուկ մի հեղինակի հայտնաբերելով, բազմացնում է հեղինակներին: Ուրիշ ի՞նչ կարող է նշանակել, օրինակ, «Ամեն մի գրականագետ բերում է իր Չարենցին» եւ նման այլ արտահայտություններ: Բայց առաջին եւ իրական քննադատը գրական պարբերականի խմբագրությունն է: Այն խմբագրությունը, որն ավելացնում է հետաքրքիր հեղինակների, հետեւաբար եւ՝ ընթերցողների թիվը: «Բնագիրը», որպես ինտերնետային հանդես, Էլեկտրոնային միջավայրի շնորհիվ ունի լրացուցիչ հնարավորություններ այս առումով: Հավանաբար Էլեկտրոնային միջավայրում ստեղծագործող հեղինակն էլ տարբեր է, քան՝ ձեռքով գրողը: Համենայն դեպս, այդպես են պնդում որոշ տեսաբաններ:

«Բնագիր» առաջին տպագիր հավելվածի առաջին հեղինակը Միեր Բեյլերյանն է: Նրա պատմվածքի վերնագիրն է՝ «Ձեռքերը գրպանում»: Ձեռքերը գրպանում թեթեւ բնավորություն է ունենում: Բայց այստեղ մոտիկից դիտելուց պարզվում է հակառակը: Մեր առաջ սեղմված, կյանքի վերջին հնարավորությունները կորցնող մարդն է, որը բացել է երակներն ու այդ պատճառով ձեռքերը գրպաններում է պահում: «Փորձում եմ հիշել, թե ինչու եմ արել այդ տափակությունը»:

- A. Կյանքն անխմաստ է
- B. Դժբախտ սեր
- C. Սոցիալ-տնտեսական ծանր կացություն
- D. Հայի բախտ
- E. Թիթիզություն...»

Մի կողմից այսպիսի դասակարգումն ինքը «Ե. Թիթիզություն...» է, մյուս կողմից ակնհայտ է, որ հերոսը հասկանում է կյանքի սոցիալական կողավորմամբ պայմանավորված անազատությունը: Թեև կյանքն ինքը հավանաբար ազատ է, մեր մտածողությունն ու լեզուն են անազատ: Իսկ լեզուն մեզ հրամայում է... Գրականությունը ձգտում է խաբել կողերին, դուրս գալ կրակից բանտից: Պատմվածքը, չնայած իր բովանդակությանը, կողավորվելով ծամծամված «A. Կյանքն անխմաստ է» կարգախոսով, ակնարկում է, որ այնուամենայնիվ տեղի ունի այդպիսի ազատություն: Դա է վկայում նրա վերջին արտահայտությունը. «...կյանքիս մեջ առաջին անգամ փակ աչքերիս խավարը ծպտում է ինձ»:

Հաջորդ, նույնպես երիտասարդ հեղինակի «Հայ պոեզիայի անթուղոգիան» ստեղծագործությունը /վե՞պ, պատմվածք, ֆելիետո՞ն, պոե՞մ/ բոլոր վերլուծություններից ավելի համոզիչ ցուցադրում է մեր ողջ պոեզիայի գաղափարական ծրագրվածությունը, նրա ինքնասահմանափակումը: Երեւի այդ տարածքում ապրող մարդն իրեն ապահով ու տաք է զգում՝ սոցիալական կորոզիոնատներում գտած լինելով իր տեղը: Իսկ Արփի Ոսկանյանի հերոսը «անորոշ գործունեությամբ զբաղվող, հիմնավոր կացարան չունեցող անձ է» /«Հայր մեր»/: Հայրը կամ արժեքը կամ հրամայականը նույն բանն են: Բայց Արփին ազատ է իր համար արժեք որոշելիս, եթե նույնիսկ այն կասկածելի է. «Հայր մեր, որ շում ես»: Սա ժեստ է կեղծիքի եւ ստորության դեմ, բայց ոչ երբեք՝ որոշակի հասցեագրված վիրավորանք:

«Ֆալկենշտեյն» պատմվածքի սկզբից Ադասի Այվազյանի հերոսը ցանկանում է պարզել, թե «սեւի մեջ ի՞նչ կա», քանի որ գերմանացի ուղեկիցները նրան համոզում են, որ այն գեղեցիկ է: Լիճը, ուր նրանք ուղեւորվում են «Ֆալկենշտեյն» նավով, բայց նրա ափին պառկել չի կարելի՝ «գետինը սոված է»: Կա նախապաշարում, որ ամեն մի հող ընդունակ չէ ներկայելու մեր մարմինը, ինչը հավանաբար հայելային արտացոլումն է այն բանի, որ մեզ որոշակի հողակտոր է ծնել: Հեղինակային բացատրությունը այսպես է հնչում. դա այն հողն է, «որի տակ էլի ինքն է, իր ենթագիտակցությունը՝ բազմաթիվ հաշտ ու իմաստալից շերտերով, որոնց ներքո անգիտակցականն էր, անվերջանալի...»: Միգուցե հեղինակը մղում է մեզ այն մտքին, թե մենելիս ու թաղվելիս առասպելական երկինքներ չենք առաքում մեր հոգին, այլ պարզապես ընկղմվում ենք ենթագիտակցականի ընդերքը, խորանում մեր մեջ: Չարմասալի բանաստեղծական ու խորհրդավոր այլաբանություն:

Հենրիկ Էդոյանի բանաստեղծական շարքի ամենահիմնական ու հաճախակի կրկնվող բառ-խորհրդանիշը «ապրել» է: Բայց ինչպե՞ս գրել ապրելու մասին, եթե «կյանքի պատասխանը կյանքն է», այնինքն՝ այն անհամեմատելի ու անասելի է: Հաջորդաբար առաջարկվում են հին ու նոր տարբերակներ, տևողվում են եւ մերժվում: Կյանքը, ապրելը այս կողմում են, ամեն մի բառ մնում է սահմանից անդին, ինչպես «գեղեցկության վերջին տոկոսները./ որ նրանց չեն պաշտպանում/ երբեք ոչ մի տեղ/ եւ շահույթ չեն բերում»: Հարկ է «հավասարվել իր խոսքին», քանի որ այդ հավասարությունը անշահույթ ու անտոկոս գեղեցկություն է:

Մեկ այլ բանաստեղծ՝ Տիգրան Չերազը /1960-1983/, առկայականի /կյանքի արտաքին ընթացք/ եւ բացակայի /կյանքի ներքին դրսևորումներ/ երկվության տարածքում է մշտապես: Խնդիրը բացակայի հաստատումն է ճշող առկայի հանդեպ. «ինձ տուր աստղը առավոտի - /քեզ պահիր շապիկը ծերտոտ» /«Օղակ-կոճակ»/: Այստեղից՝ փախուստի տրամադրությունը. «փախչում են ձեռքերս - կանեփի առավոտ /ինչպես գրպանահատի փոխ առած ոտք»: Հիշողությունը ջրային տարերք է /«հիշողության առու»/, որը հոսելով գրկվում է հանգստից /«ջրհեղեղը չունի հանգստի աթոռ», «փրկվեմ մատով ցույց տրվելու ջրհեղեղից...»/: Վերադարձը կամ ետ լողալը անհնար է, եթե չունես գրպանահատի ճարպկություն, որը օգնում է «փախցնել դիմագծերդ ամռան գրպանից» եւ «գրպանահատի փնտրող ձեռքերով /բառեր դուրս բերել հիշողությունից -», իմա՝ ինչ-որ մի բան ազատել ջրի համատարած հոսքից: Իսկ գողունի վերադարձի տեղը «տերեւի առավոտն է» կամ «Արցունքներ թաքցնել լուսաբացից - /կորչել, ապրել կանեփի դաշտում»:

Վահրամ Մարտիրոսյանի «Խախտումը» պատմվածքը ինձ հիշեցրեց Չիգմունդ Ֆրեյդի սոփեստական անեկտորներից մեկը: Ա-ն փոխարինաբար Բ-ից վերցնում է պղնձե կաթսա, որը վերադարձնելուց հետո դատի է տրվում Բ-ի կողմից, քանի որ ամանը ծակվել է: Ա-ն պաշտպանվում է. «Նախ՝ ես փոխարինաբար կաթսա չեմ վերցրել, երկրորդ՝ վերցնելիս արդեն անցքը կար, երրորդ՝ վերադարձրել եմ առանց անցքի»: Պատմվածքի հերոսը նույնպես իր ուշանալու համար մի շարք պատճառաբանություններ է հնարում՝ «սրճարանի աթոռ-սեղանները հավաքել էին», «սրճարանը ձմեռվանից դեռ չէր բացվել», «ինձ մեքենան խփեց»: Կոմիկականի գաղտնիքն այստեղ նրա մանկական արդարացումների եւ ամբողջությամբ մեջբերվող «Քրիստոսը Չիթենյաց լեռան վրա» վերամբարձ սոնետի միջև հակադրությունն է: Մինչդեռ եթե լրջորեն վերաբերվենք այդ

պատճառաբանություններին, նրանցից յուրաքանչյուրում կգտնենք մի-մի «Եմպիրիկ «Ես», որոնց մեջ իսպառ բացակայում է կոորդինացիան: Դրանք դիտակետեր են, որոնցից երեւում է հոգեկան իրողության միայն մի անդամը: Երեխան միայն «Ես»-ի ձեւավորվելուց հետո է կարողանում կոորդինացնել իր շարժումները, խոսել ու քայլել: Իսկ այդ փուլին նախորդում է մի ատյան, որտեղ նա սովորում է դա անել ընդօրինակելով եւ հայտնաբերում իր անդամների ամբողջականությունը մի մարմնի մեջ: Նշանակում է՝ սուբյեկտն ավելի ընդգրկուն է, քան՝ «Ես»-ը եւ այդ ատյանը: Սուբյեկտն արթնանում է իր «Ես»-ի համար. պատմվածքը սկսվում է «քնած էի խոր» բառերով: Դասական գրականության դեպքում գործ ենք ունենում միայն «Ես»-ի ու նրա մտածողության հետ. նոր գրականությունը կիրառում է ավելի լայն, միաժամանակ ավելի նախնական հասկացություններ:

Լեւոն Ջավախյանի «Տագնապ» պատմվածքի սկիզբը միանգամից մի քանի տարբեր հղումներ ունի: «Դեռահաս էինք» արտահայտությունը հիշեցնում է «Իմ ընկեր Նետոն», ուր «իրիկնամուտից» հեքիաթներ են պատմում, «վիթխարի ընկուզենու տակ»-ը՝ «Հին օրհնություն» բանաստեղծությունը, բայց ստեղծագործությունն ամբողջովին «Աղքատի պատվի» եւ «Սուտլիկ որսկանի» սիմբոլն է: Որսորդական պատմությունները մասկուլինային դիսկուրսի արտահայտություններ են՝ «որս/կին» փոխատեղման հարուստ հնարավորություններով: Երկու դեպքում էլ /թող ներվի ինձ ֆիզիոլոգիական համեմատությունը/ առկա է կրակող գենը: Բացահայտ է հեղինակային հեգնանքն ու հումորն այդ դիսկուրսի հանդեպ: Նկատենք, որ լռեցիական «Դեկամերոնի» շարժիչ ուժը, ինչպես եւ «Սուտլիկ որսկան»-ում, մանիակալ /մոլուցքային/ տրամադրությունն է: Սրան լրացնում է դեպրեսիվը, ձեւավորելով մանիակալ-դեպրեսիվ բարդույթ, բարձրացումների ետեւից բերելով անխուսափելի անկումներ:

Վահագն Գրիգորյանի «Հետքեր սառած մշուշում» վիպակի բաղադրիչները /ձախողված սեռական արկած, չիրագործված սիրային զգացմունք եւ այլն/ վերոհիշյալ դեպրեսիվ փուլի մարմնավորումն են: Ի դեպ, խոսքը ոչ թե գեղագիտության, այլ սեմիոտիկ կառույցների մասին է: Ե՛վ դեպրեսիվը, ե՛վ մոլուցքայինը մասկուլինային դիսկուրսի երկու՝ պարծենկոտ ու խոստովանական կողմերի տարբեր, բայց խորքում՝ միասնական, արտահայտությունն են:

Այս առումով ցուցադրական է Գարուն Աղաջանյանի «Բնապահպանական շտրիխներ» պատմվածքը, որտեղ ֆեմինիստական դիսկուրսն է իրեն բնորոշ ռազմավարությամբ՝ խուսափողականությամբ: Այն /տվյալ դեպքում՝ սեռական հարաբերություններից խուսափելը/ պատասխան է մասկուլինային ռազմավարության որոնողական-արկածային հարցապնդմանը:

Վահան Իշխանյանի «քայլ դեպի ամերիկա» պատմվածքը հայ լրագրողի մասին է, որն իրեն ստորացված է զգում կյանքի անարդարությունից, ոչնչությունից ու անհեթեթությունից, երբ իրականության ամեն մի դրսեւորում վերադաս ու հարցաքննող մարմին է: Դա նրան ստիպում է արդարանալ, ճողոպրել: Իրադրության լարումն իր գագաթնակետին է հասնում երիտասարդ «յանկի» աղջկա անցկացրած «հարցազրույցում», երբ, խոսակցական լեզվով ասած, հերոսը «կոմպլեքսավորվում» է: Հոգեբանական բախումը արտահայտվում է սեմանտիկ հակադրություններով՝ հեռանալ Հայաստանից / Ամերիկայից գալ Հայաստան /գալիս են կա՛մ այլմոլորակայինները, կա՛մ գերմարդիկ/, հերոսի անցնող երիտասարդությունը / «յանկի» աղջկա առասպելականացված երիտասարդությունը եւ այլն: Այս ամենից ենթադրվող ենթատեքստն է, թե՛ Ամերիկան հավերժ երիտասարդության երկիր է: Բայց այդպիսի երկրներ չեն լինում. հերոսի ֆանտազմ անհեթեթ է, ցանկությունը՝ անիրականալի: Անկարելիության այդ լարվածությունը լիցքաթափվում է ինվեկտիվայով, որը մեծ սեմանտիկ կարեւորությամբ, «Սեզամ, բացվիր» նշանաբանի նման կարծես տանում է հավերժ երիտասարդության երկիր:

Վիոլետ Գրիգորյանի զույգ բանաստեղծությունները բարձր վարպետությամբ արված ոճավորումներ են: Համեմատության եզրեր փնտրելիս առաջին հերթին հիշում ես Ռաբլեի անմահ վեպը, որը Լաբրյուերը կոչել է «զվարճանք տականքների համար», իսկ Վոլտերը՝ «լկտիություն» եւ «կեղտ»: Նման որակումներից մեր հայրենակիցներն էլ այսօր գերծ չեն մնում: Երկու հեղինակների մեջ ընդհանուրը կառնավալային, զվարճահանդեսային ոգին է: Ռաբլեի վեպը երկար ժամանակ փորձաքար էր գրականագիտության համար, անմատույց բերդ, մինչեւ հայտնվեց Բախտինը: Դա նախագգուշացում է բոլոր նրանց համար, ովքեր նահատականներ են կրակում: Այդ թվում՝ եւ ինձ: Ինքնապահպանման բնագոյը հուշում է, որ վերլուծությունս թողնեմ ավելի հարմար ժամանակի /եւ տեղի/ կամ էլ՝ ավելի հմուտ գրաքննադատի /ասենք՝ Մարկ Նշանյանին, որն այդպիսի փորձառություն ունի/: Եւ նաեւ հուշում է, որ ժամանակն է լռելու: Եւ ես լռում եմ...

աս

գուցէ

անդ տակաւին աստ անդ գուցէ

աստանդական

ինչպէս որ լեզուին տակ

անոնց թոթով

հանդիպեցայ փողոցը

բառերուն

իրենց ստահակ

կշռոյթով մայթին սալալատակի կոտրած

սրութեան վրայ

առանց հայրենական մեծավերջի

խառնածին

երբ չեմ գիտեր դէպի ո՞ր

ուղղութեամբ դիմել

դէպի ի՞նչ ելք

անոնք

աստ անդ

սրբուած ցուցափեղկի ապակիէն

լեռներ որ կը սահին քաղաքներուն

տակ կը փլչին

գերանի խուլ ու բեկուող ցամաքամասի

դրդիւնով յառաջացող միայն

չհասնող կոտորակելով ինքզինք

քար ու ջուր եւ օդ եւ հուր

թերեւս ուրիշ միավանկեր տակաւին

ցայտող շատրուանի ծեսէն որուն կը բախի

ոտքդ

ռիթմը անհաւասար

կը հատէ

լոյսը շեշտ

ամբողջը միշտ իր ընթացքով ներհուն սաքսոֆոնի

ներբողովը քայքայման

մեզ տանող մեծ գաղթի մը վայրավատին

կ'ըսեմ վայրավատին

կարծես միշտ վայրն ըլլար

վատնուած կամ գրեթէ

որ ձեռք կու տայ ձեռքուն եւ կը մնայ ինք անձեռք

անսահման կաղապար ոճի

քերթուածը քայլն է որոնող վայրը անցորդը կայքէ կայք

անշեշտ որ լքե

քէլէ քէլէ

կօշիկի գեղջ քէլքի մեռնեմ ռուլէրի գեղապար

Նոթը Տամի ցուիքներէն սահող ոստոստող սուրացող

մինչեւ քարափ եւ կիսաստուերը կղզիին

պարածածկող

քանի որ պէտք է

թռչիլ կամ լողալ Սենն ի վար

տանելով իր ետին գրքածեւ շէնքերը նոր

տնտեսութեամբ բարդուող

ապակիէ մետաղէ մետիայէ

օրը նոր իր ցնորքով յարանոր

որուն մտար

գետնափորէն

մամուռի գիծ որ ձգեց պատին ջուրը արդէն մեկնած

եւ աշխարհը

անտեսանելի շունչ ՚ու երեք երկար նօթեր սաքսօֆօնի

վերածուած

լուսամփոփի

որուն վրայ կ'որոտայ շանթերէն տարբաղադիր

ամպրոպը

կը պատռտին ծուէնները բլասթիքէ ծառերուն

ինչպէս բզքտուած աստ

անդուած

մարմինը Որփեոսի

արբանեակը ամենատես

կը հսկէ վրադ

երբ կը կարդաս ու կը սիրես

ձեզ կը զննէ

եւ հարիւր մեթր կը շեղէ ձեր իսկական տեղէն

կը գծէ ինչպէս

շարժագրութիւն երկրին ու բազկերակիս

կոխեցի գետեզերքի քարին

եւ քայլ մը վար

ճգմեցի մրջիններու շարասիւնը որ իջաւ մեթօ

ամբողջ Ափրիկէն խտացուած ու պարող իր թամթամը սովի եւ ռումբի

Ռուանտան

ցեղասպանութի՞նն է թէ՞

կը քալեմ

որ մտածումս գտնէ զիս

միանամ ես ինծի

քեզի

քաղաքը կազմակերպուի շուրջս

կարենամ ցատկել

այս քարափէն միւսը

կամուրջ Արուեստից

Աղեքսանդրի Ռիալթոյի Եւքինեան Նահր-էլ քելպի

բարակ թեթեւ բառա

փուչիկի պէս բարձրացող

վերջին կամար մնացող օդին մէջ առկախ

ինչպէս գնչու կին

որ կը միզէ ոտքի

եւ դեղին գետը կը դիմէ դեպի առաջ ու դեպի ետ

Պետք է ծամեմ որ չծխեմ ալելուիա միշտ կզակս շարժեմ

աղամ այս մտմտուքը անմիտ կենստիպի

ապրիմ այսպէս բնակիմ այս չհատնող ամբոխին մէջ

մետաղէ սրընթաց փողոցին մէջ խռնուած

ուտող քունող բանող

թոշակուած քրտնած մանաւանդ քրտնած ու յօրանջող

առանձին

հազար լեզուով եւ նոյն լեզուի

հազարաւոր բարբառներով

դեմք մարմին ինքնութեան թուղթ եւ վիճակագրութեան մէջ

ժամանակի տուեալ անուն մը նման

բոլոր անուններուն

առանձին գնացքին մէջ

բուժարանէն փախած մարդուկին պէս

որ նստարանին ընկողմանած

Կախ կլիրը կը մարծեր

դանդաղ ու երկար ու խորունկ ներշնչումով  
սեւեռելով հեռաւոր պատկերը որ թերեւս դուն էիր

դեռ

գոհերը կ'ապրին փլատակներուն տակ կը շնչեն մինչեւ ե՞րբ  
ինչպէս դուն քու պատերուն միջեւ տանդ

գոհ հնդկական չինական

նոր ճաշերու սիրուըտուքի համով գիտեդ

բնիկի պէս պատկերի

Հասարակացի անտառներուն մէջ բանտարկեալ

թէեւ թոքերը երկրին

սկսեր են խցուիլ եւ խլիրող պիտի բողբոջուն

իր գեղեցկութիւնը տարածէ կոկորդո ի վեր

պարմանութեանդ երազները սիրեններ կը գրաւեն քեզ տակաւին

ամեն տեսակ սեռ գիրք հեռաւոր ճամբորդութիւն մինչեւ

այլուր

երազները

աւազին մէջ հետքեր գարշապարի

երազները կը հետեւին ինծի

լքուած աստուածներու գործատուներու պէս

բացող մտքիս մէջ իրենց դատարկութիւնը թրթռուն

կամ կը կանխեն արտաքսումս իրենց

մեկնումով ինքնասպանութիւնը

կեցուածք մըն է որ կ'արդարանայ

եւ մինչեւ ո՞ւր

կը մնանք կարելի մինչեւ ե՞րբ

կամուրջին տակ պիտի

սաքսոֆոնի շունչը փչէ

իր կապոյտ

երեք նօթերը թաւ

անհունօրէն խոհուն

տարակայ կոչ

որ չի կրնար տակաւին հատել

մակերեւոյթն ու մաշուքը ժամանակին

հեռատեսիլին դեմ կը նստին  
ամեն մեկուն առջին ափսե մը վրան  
Ֆրիթ փիճա սուշի եւ դեռ մեքսիքական կծու միջատներ  
հետը քոլայի երջանկութիւն մը պաղպաղջուն  
իսկ հեռուն  
շարժուն հորի կոյր աչքին մէջ  
ցրցնուած  
ծափ ու հրացան անապատներ սովի քոլերայի ալիքներ  
այտի մը վրայ կրկնագրուած

որքան հոգի այնքան որդ

կգակաբաց քունի խրկոց

ատենն է որ խորդենիներս յօտեմ

կարմրեր են պրոնզ ու պղինձ քանդակուած

ապականութեան փոշիէն

թաղարներուն մէջ ճերմակ

ճծիները կ'աճին ինչպէս դեմքը շնչուած քերուղտուքէն

ամեն օր

քանի՞ թոննա մանրե կը տեղայ երկնքէն

եւ հաղորդալարերէն կ'անցնի պաստառ ու գոյութիւն

երբ կը քնանամ

աշխարհը կոպերս ի վար կը սուզուի ջուրի

մինչեւ ներկայութիւնը սնդիկոտ գիշերային ալիք մըն է յառաջացող

յառաջացող բայց երբեք երբեք

չմօտեցող

կ'ուզեմ մոռնալ

կ'ուզեմ մոռնան

կապ ու յօդ աշխարհը միայն կապ ու յօդ

պատուաստ

ձեռքի ոտքի կրտուած կլիրի ուղեղի

որ ինչի՞ կրնաս բաղդատել

ինքն իր վրայ դարձող մեծ-մամիկի իլիկի՞ն

սուրճ խամկող շրջըջիկ բանդագուշանային պտտամանի՞ն

մեզ խաշող ու պատերուն շարտող լուացքի մեքենայի՞ն

ոչ իսկ գլխատուած ոչինչ

աղանիին որ կը ծփար աւազանի մակերեսին

թեւերը բաց կարծես սուզման պահուն



լուսանկարուած սուրբ հոգի

պարզող մեզի իր յետոյքը փետուրի

ինչպէս մենք առկախ յիշողութեան մէջ մեր մարմնին

բայց աշխարհը

աստ անդ

միշտ աւելի է ինքն իրմէ

միշտ աննման ինքն իրեն եւ միշտ նման

սաքսոֆոնի թանձրաւուն երեք նօթին որ գացին եւ վերստին

կը յայտնուին

դարձած կապոյտ որոր

թռչկոտող վերիվայրող զիկզակագիծ թիւերու

թող տուարը բարձրանայ

քարիւղն ալ կ'աժանանայ

Wall Street Journal

աշխարհ մըն է քեզի պէս

դուն ալ սիրելիս քունաշխարհս ես

ամեն ինչ աշխարհ մըն է աշխարհի մը մէջ իր կարգին

համաշխարհացող

որքանութիւն անքննելի

աննախատիպ միութիւն կամ առաջին համաշխարհայնացում

Աստուած

յարմար տեղ մըն էր

խախուտ սեղան անոր կը

վերապահեինք բոլոր անունները զբօսաշրջիկ

շրջուն լուսանկարիչ

պոռնիկ շրջահայեցութեան

սակարկող յաճախորդին հետ վարանոտ

պոռնիկումէ~ հիմա

մայրամուտն է սանձարձակ սեռին

պետք է հաշուել խորհիլ չափել յետոյ մտնել եւ միայն

ապահով վստահելի առանց ճիսքի սերեր safe sexe

որ քեզ երբեք չփոխեն

մնաս բարեաւ

Պուա-տը-Պուլոնյի անդրասեռային ծպտեալ

(ինչպէ՞ս կ'ըսեն travelօկամ travesti

քանի որ կարելի է փոխել ճակատագիրը մարմնին

դառնալ ինքզինք ու միանալ

Ներքին պատկերին որ ես ունիմ իմ մարմնես

ըլլալը պատկերանալ է միայն)

մանրեն

մտաւ մարմնէդ

համակարգիչի ուղեղին մէջ

խորտակեց

դիմադրութիւնը ոսկրացանցին

մրջիւնի սիւնաշարին վրայ կը դնես քանի մը կաթիլ եւ ահա

մրջնոցն ամբողջ կը քայքայուի

ալզհայմըրի նմանատիպ

եւ ոչ ոք կը յիշէ ոչինչ

օ բարեկամ

այս մարմնով տրուած արդէն այլուրին

կլլող ամեն արեւծագին 36 գոյն դեղահատ

եւ սպասող գեղեցկութեան

որ երերուն կարծես գինով քալուածքն է նրբանցքին մէջ

տարերային զահանդական

դանդաղօրէն մօտեցող կապոյտ հազ

սաքսֆօնի նօթերուն պէս որ անանունը փչեց դեմքիդ

զայն փայլեցուց ու փախաւ

պատկերները կը պայթին

կը փլչին մի առ մի բոլոր

պատկերա

ժամերը որ անցուցիր հոն

զամուած բազկաթռռի խորքին

վերջին հրախաղութեան ցայտքերուն

չեռնապիլեան ծուէններուն պէս շողարծակ

## Ընդմիջում

### [Լիլիթ Վահանյան](#)

Շուտ զարթնեց: Ինքն էլ չհասկացավ՝ ինչու: Գիշերը շատ էր աշխատել ու չորսի կողմերը հազիվ կարողացել էր իրեն անկողին գցել: Շուտ զարթնելը դեռ ոչինչ, առաջ այդպէս շատ էր եղել: Բայց երբ զգաց, որ անկողնում մնալու ամենափոքր ցանկություն անգամ չունի, մի քիչ զարմացավ: Այդպէս չէր լինում: Երբեք: Իրեն մտար՝ տասնմեկ օր անկողնուց դուրս չէր գա: Երբ իրեն գտավ բաղնիքում՝ հայելու առաջ, ավելի քան մանրամասն սափրվելիս, չկարողացավ զսպել ծուռ, հեգնական ժպիտը, որը վերածվեց թանձր, կարմիր հեղուկի՝ ներքին ծնոտի վերին ձախ անկյունում: Հուսահատ փորձեր կատարեց հիշելու համար, թե ինչու ինքը պետք է այդ օրը սափրվեր: Չմտաբերեց:

Հետագա գործողությունները՝ կուշտ նախաճաշելը, տենդագին անհանգստությամբ մաքուր վերնաշապիկի հետախուզություն կազմակերպելը, կոշիկները գետնի վրա փայլող հայելիներ դարձնելը, ավելի ու ավելի էին զարմացնում:

«Ինչ է հետս կատարվում», - քառասունչորսերորդ անգամ հարցրեց ինքն իրեն եւ դուրս եկավ փողոց:

Կանգառում, ինչպես ամեն անգամ, հիմա էլ որոշեց սպասել իր ամենասիրած երթուղայինին: Ինչպես ամեն անգամ, հիմա էլ, թեկուզ աշխատանքից ուշանալու զնով: Արդեն կանխավայելում էր սիրած ռոք խմբի ձայներիզի լսելը եւ հաջորդ կանգառում նստող կապույտ մազերով աղջկա անհասկանալի զուգահիշությամբ իր կողքին հայտնվելը:

Հեռվում, ռեւմատիկ ցավերից անխուսափելիորեն տառապող, ծեր դինոզավրի պես քարշ գալով, հայտնվեց իր, այդ երթուղու ամենաչսիրած մեքենան: Հարյուր տարվա մեռելիս վեր թռցնող մեծադիր մոտորային աղմուկը սպառնալիորեն մոտենում էր: Դեմքին բնագոյաբար նկարեց ամեն անգամ այդ «մեխանիկայի սխալի» հայտնվելուն նվիրված արհամարհական ժպիտը: Չզգաց, թե ինչ խղճուկ ստացվեց այն: Երբ ընկալեց, որ նստած է դինոզավրի ամենանահարմար, իր փափկությամբ գրանիտ քարակտոր հիշեցնող նստարանին եւ ընթացքին համապատասխան մոլեգին կերպով ճոճվում է բոլոր հնարավոր եւ անհնարին ուղղություններով, զարմանքը աննկատելիորեն վերածվեց տագնապի: Չմտածելու համար սկսեց դուրս նայել: Մեքենայի ճաքած լուսամուտի վրայի չգիտես ինչու հանկարծ հայտնված անձրեւի զարմանալիորեն կաթիլները ապրում ու մեռնում էին կողքից սլացող մեքենաների գույներով:

Աշխատավայրի աստիճաններով բարձրացավ բավականին վախվորած քայլերով: Ներս մտնելով այդ ցավալիորեն ծանոթ միջավայրը՝ առաջին անգամ լինելով ուրախացավ, որ այստեղ ամեն ինչ նույնն է մնացել:

Վստահ քայլերով մոտեցավ իր գրասեղանին:

Անհասկանալի գույնով ներկած, կայծակնային արագությամբ թափվող մազերով կինը քայլերի ձայն լսելով՝ հետ նայեց: Իր աշխատակիցներից մեկն էր. միշտ կոկիկ, քաղաքավարի, միշտ պարկեշտ: Չգիտես ինչու մեխավածի պես կանգնել էր եւ խեղահեղ հայացքով նայում էր: Կինը չկարողացավ իրեն զսպել ու նայեց նույն ուղղությամբ: Այն ամենը, ինչ տեսավ, իր ընդամենը մեկ այլ գործընկերն էր: Առանձնապես չէր խելագարվում այդ մարդու համար: Միշտ թափթփված, միշտ չսափրված, միշտ կոպիտ, մարդկանց երեսին մտածածը շարտելու ապուշ սովորությամբ: Նա, ինչպես միշտ, վայրենու տեսք ուներ: Կինն ու սեղանին մոտ նստածը միաժամանակ հայացքները դարձրին մեխավածին...

«Ո՞վ եմ, ո՞վ ես, դու ես եմ, ես եմ դու, մենք մենք ենք, մե՞նք...»

Նստած մարդու անթաթ հայացքում կիլոմետրանոց նեոնային տառերով գրված էր. «Ես մարդկանց համոզել եմ, որ գոյություն չունենմ»:

Ընկնող մարմնի թրմփոցին հաջորդեց կոտրվող ապակու վախեցած զրնգոցը:

Սեղանին մոտ նստած մարդու միայն իրեն հասկանալի ժպիտում կիլոմետրանոց նեոնային տառերով արդեն ուրիշ բան էր գրված...

«Հուսով եմ՝ մյուսին եսքան երկար չեմ սպասի», - մտածում էր նա՝ աշխատատեղի ճաշարան գնալիս: Ընդմիջում էր:

Նրանք: Թե՞ մենք:

Չորս պատ: Առաստաղ: Սովորական քառակուսի սեյյակ: Պատուհան չկար: Բայց լույս էր: Շատ հաճելի, փափուկ լույս, որ հենց պատերից ու առաստաղից էր հորդում: Ինչու պատուհան չկար: Ինչու ինքը երբեք ոչ մի բանի կարիք չէր զգում: Որտեղից էր ծնվում այդ լույսը: Ինչու էր ինքն այստեղ: Այս հարցերից ոչ մեկը երբեք չարթնացավ նրա մեջ: Տասնինը տարվա մեջ ոչ մի հարց: Լավ էր: Նա սովորել էր: Նրա համար դա սովորական էր: Նրա համար ամեն ինչ միեւնույն էր: Նա թքած ուներ: Եւ նման շատ այլ հոմանիշներ՝ տարբեր նրբերանգներով: Նա գիտեր, որ արդեն տասնինը տարի այդ սեյյակում է, բայց չգիտեր՝ ինչու: Գիտեր, որ հայելու մեջ արտացոլվող կերպարանքը իրենն է: Բայց չգիտեր ինչ գործ ունի հայելին բոլորովին դատարկ սեյյակում: Գիտեր, որ իրեն հետեւում են, բայց չգիտեր՝ ով է ինչու: Չգիտեր: Չգիտե՞ր: Չէր ուզում իմանալ: Այն օրը, երբ լրացավ քսաներորդ տարին, նա հանկարծ հիշեց, որ քսան տարի առաջ ինքը սովորականի պես արթնացավ, լվացվեց, սափրվեց, հագնվեց, նախաճաշեց, համբուրեց կնոջը, ժպտաց որդուն, մաքրեց կոշիկները եւ դուրս եկավ տնից: Սովորականի պես նստեց No5481 ավտոբուսը եւ հասավ իր աշխատավայրը: Սովորականի պես դուռը ծածկեց իր հետեւից, բայց հայտնվեց ոչ թե աշխատասեյյակում, այլ՝ այստեղ: Սկզբում վախեցավ. անսովոր էր: Երկու ժամ 24 րոպեից հանգստացավ: Արդեն սովորական էր: Ու հիմա հանկարծ անսպասելիորեն սկսեց մտածել, անհանգստանալ: Քսան տարին քսան րոպե թվաց: Պատերը ատելի դարձան, եւ սկսեց դեսուդեն նետվել՝ պատուհան գտնելու ավելի քան հիմար հույսով: Ինչու՞ է ինքն այստեղ, ո՞վ է հայելու մեջ արտացոլվող կերպարանքը, որտեղից է այս անտանելի լույսը: Հարցերը ծնվում էին նրա գլխում եւ միմյանց հերթ չտալով շարունակ, բզզում, զրնգում, ոռնում: Եվ հանկարծ միանգամից հասկացավ: Հասկացավ, որ խելագարվելու չափ կարոտել է արելը, առանց մարտկոցների այդ դեղին տաք հրաշքը: Երկինքն է կարոտել: Առանց պատերի այդ կապույտ առաստաղը: Կարոտել է արելին երկար նայելուց առաջ եկող կուրույթանք: Երկնքին երկար նայելուց հետո ամեն ինչ երկնքի կապույտով տեսնելը: Դեղին հրաշքի ճառագայթներից ջերմացած իր իսկ մազերը: Ձեռքը տարավ գլխին: Մազերը սառն էին ու անձրեւորդի պես լարծուն: Ամուր փակեց աչքերն ու գոռաց խելագարի ոռնոցով: Երբ աչքերը բացեց, թվաց՝ չի բացել: Մուր էր: Գծի նման ուրախացավ մթությանը, որից առաջ մեռնելու չափ վախենում էր: Մի քայլ արեց եւ ոտքի տակ ինչ-որ բան զգաց: Մեխ էր: Մեծ, ծանոթ, սուր: Առանց երկար մտածելու, ասես հազար անգամ ծամծամված գործողություն, հանեց իր ծանր կոշիկը, մեխը պահեց իր կանգնած տեղից ամենամոտ պատին ու սկսեց խփել: Ուշքի եկավ միայն բացված փոքրիկ անցքից սողոսկած լույսի շողը տեսնելով: Շողի անթերի երկար գիծը խախտվում էր միայն նրա մատներից հոսող արյունով: Այդ բարակ, երկար ճառագայթը նրա չմեռած հույսն էր, վերածնված կյանքը, հեռացող մահվան հայիոյանքը եւ այլ տարբեր հոմանիշներ նման նրբերանգներով: Որոշ ժամանակ անց, երեւի հաջորդ օրը, նա մեռավ: Մեռավ, որովհետեւ հանկարծ ընդհատվեց, անհետացավ շողը, եւ չարախիտը հռչակեց վերադարձավ մթությանը, որից նա մեռնելու չափ վախենում էր: Նա ընկավ՝ մատներից դեռեւս հոսող արյունով, պատին գրելով գլխում ծնված վերջին բառը: Նրա ընկնելուց որոշ ժամանակ անց հայելու միջից դուրս եկան նախկին երկու նա-երի հոգիներ ու քարշ տվին նրա դիակը իրենց մոտ՝ հայելուց այն կողմ: Նրանցից մեծը վերադարձավ՝ մաքրելու նախորդի հետքերն ու արյունով գրվածը: Նա քթի տակ երգում էր «Թրպ Կօ, Ռիոօ, ՌՅԱԲՉօ» երգը ու մաքրում: Մեխը վերցնելիս մտածեց. 'Այն ապուշին ասել ս պետք, որ իրա հայտարարություններն ուրիշ տեղ կպցնի': Գրվածը մաքրելիս արհամարհական ժպտաց. 'Հետաքրքիր ա, կգտնվի մեկը, որ ուրիշ բան գրի: Սպանեցին թողին էլի':

Նա, այդ սենյակի առաջին նա-երից մեկը, մոռացել էր, որ ինքը այդ նույն բանն էր գրել լույսի շողը կորցնելուց հետո: Գործը վերջացնելուց հետո գնաց դեպի հայելին, եւ նրա՝ այնտեղ անհետանալուն պես անսպասելի հայտնված դռնից ներս մտավ նա...

## **Պատարագ** Սուսաննա Հարությունյան

Երբ հացը սկսում է թանկանալ, եւ մարդիկ դադարում են զարմանալ, ուրեմն պատերազմ է: Մեզ մոտ էլ էր այդպես. պատերազմ էր:

Ծանր էր ապրել սահմանամերձ գյուղում, թեեւ մենք վաղուց արդեն ընտելացել էինք արկերի պայթյունի եւ կրակահերթերի աղմուկին, անընդմեջ եկող զինակոչիկների հոսքին, անհասկանալի ու ցնցող քաղաքական իրադարձություններին, որոնց պատճառով դասերն ընդհատվում էին կամ արագացվում էր բերքահավաքը: Իսկ ընդհանրապես այդ ամենի հանդեպ մեր հոգին բթացել էր, եւ երիտասարդ զինվորների մահը ցավ չէր պատճառում անգամ երիտասարդ աղջիկներին: Նաեւ մենք՝ գյուղի երեխաներս, գեղքից չէինք վախենում: Դեռ ավելին. մենք գրագ էինք գալիս, թե ո՞ր արկի պայթյունից քանի զինվոր կզոհվի:

Պատերազմի տասներորդ տարում այն մեզ համար դարձել էր սովորական առօրյա, իսկ սահմանամերձ մեր գյուղում՝ կյանքի ընթացք: Եւ երբ մեր գյուղացի Նախշունը՝ մի շաբաթ սոված մնալով, հավաքեց իր միակ հավի ձվերն ու թուխս դրեց, մենք հասկացանք, որ պատերազմը եւս ապրելու ձեւ է:

Չնայած այս ամենին, մայրս վախենում էր եւ միշտ ստիպում, որ դասից դուրս գալիս վազելով տուն վերադառնամ: Ես, իհարկե, խոստանում էի, որ այդպես էլ կանեմ, բայց անում էի ճիշտ հակառակը: Ամեն օր տուն էի վերադառնում դանդաղաքայլ ճեմելով եւ աչքի պոչով հաշվում, թե ու՞մ բակում քանի հավ է ավելացել. կամ ու՞մ խնձորենին է մերից փարթամ ծաղկած: Եթե պատերի տակ անգործ ծերուկներ էին լինում նստած, ես նրանց բարեւում էի: Երբեմն հարցնում էի՝ ո՞նց եք, եւ նրանք ինձ պատասխանում էին...

Այդ օրը մնացած օրերից տարբերվում էր նրանով, որ ես ոչ թե քայլում, ոչ թե վազում, այլ սլանում էի տուն՝ այդ ցնցող լուրը մորս հայտնելու: Արկերը պայթում էին մոտիկ ինչ-որ տեղ, եւ երկարամյա պատերազմի ողջ ընթացքում առաջին անգամ վախենում էի. հանկարծ արկը կընկնի ինձ վրա ու ես չեմ հասցնի մորս հայտնել այդ տխուր լուրը: Ապա հուսադրում էի ինձ. այդպիսի բան չի կարող պատահել: Արկը կարող է ընկնել իմ թիկունքում, իմ կողքին, իմ առջեւ... Բայց ինձ վրա՝ երբեք. ես տուն պիտի հասնեմ:

Կուրախանա՞ր, թե՞ կտիւրեր մայրս իմ հայտնածից, Աստված գիտե: Մենք էլ էինք պատերազմոտվել, մեր մեջ կյանքն ու մահը միախառնվել էին, դարձել անքակտելի եւ դժվար էր դրանք ընկալել առանձին-առանձին: Մենք սովորել էինք միաժամանակ եւ՝ լալ, եւ՝ ժպտալ, եւ՝ կյանք տալ, եւ՝ սպանել, եւ՝ մեռնել, եւ՝ ապրել: Իսկ եթե հաշվի առնեք, որ ես ու մայրս ցերեկները ապրում էինք բոլորի նման՝ պատերազմի թոհ ու բռնից բթացած հոգով, իսկ գիշերը գունավոր թղթերից ու կտորներից արհեստական ծաղիկներ էինք պատրաստում, որոնք մարդիկ գնում էին թաղումների համար, ուրեմն մայրս կուրախանար:

- Մա, - պայուսակը դռան ետեղ շարժելով՝ ձայն տվեցի ես, - գիտես ի՞նչ է պատահել, - իմ ձայնը հնչեց այնքան բարձր, որ սեղանի մոտ նստած մայրս ցնցվեց, եւ թելն ու ասեղը գունավոր կտորի հետ վայր ընկան նրա ձեռքից: - Դպրոցի տնօրենը մահացել է, - հայտարարեցի ու շտապեցի խոհանոց:

Երբ ես խոհանոցի սեղանից մի կտոր հաց ճանկելով ետ եկա սենյակ, մայրս նստած էր շվարած ու թշվառ, կարծես անշարժացել էր: Ասեղն ու թելը՝ գունավոր կտորի վրա խրված, շարունակում էին ընկած մնալ հատակին:

- Տեսար ի՞նչ ահավոր բան պատահեց, - համարյա շշուկով արտաբերեց նա:

- Է՛, - հացը ծամելով ասացի, - առաջին գո՞հն է, ի՞նչ է, ավելի երիտասարդներն են զոհվում եւ ավելի դաժան մահով: Մեղք էր, իհարկե, բայց լավ է. բացի այն, որ մենք մի քանի օր կսզանք ու դաս չենք անի, նաեւ՝ շքեղ առետուր կանենք: Մա, - ես բռնեցի մորս ձեռքը, - մենք կարող ենք, չէ՞, մեր կողմից նրան մի պսակ կտրեմ: Նա նաեւ քո ուսուցիչն է եղել:

- Նրա մահը ինձ համար անչափելի վիշտ է, - պաղ ձայնով խոստովանեց մայրս, - իմ ձեռքը չի բռնի գործ անել, - նրա աչքերը խոնավացան, բայց արցունքի կաթիլներ չգլորվեցին ցած:

- Նա քո սիրեկա՞նն է եղել, - վշտաբեկ մորս նայելով՝ փորձեցի հասկանալ:

- Ոչ, ի՞նչ ես ասում, - մորս վշտաբեկ ձայնին զայրույթ խառնվեց, - նա ավելի կարեւոր մարդ էր իմ կյանքում:

- Առաջին անգամ եմ լսում, որ նա քո կյանքում այդքան կարեւոր մեկն է եղել, բայց նույնիսկ այդ դեպքում պետք չէ այդքան վշտանալ: Մեղք էր, իհարկե, բայց մահը նաեւ մեր բլին է չոքած՝ ամեն վայրկյան: Նա գոնե հասցրել էր այդքան ապրել եւ նույնիսկ աշակերտներ ունենալ, իսկ մենք ընդամենը շքեղ առետուր կանենք:

- Ըհը, - համաձայնեց մայրս, - գեներալները ամեն օր չեն զոհվում, իսկ զինվորներն այնքան շատ են, որ գյուղացիները նրանց համար ծաղիկներ չեն գնում:

- Տնօրենը հռչակված մարդ էր: Նրա թաղման օրը երեւի տարվա ամենահաջող օրը կլինի մեզ համար:

- Առանց դրա էլ մենք վատ չենք վաստակում, - չոր կտրեց մայրս:

- Ավել պատառը երբեք էլ փոր չի ծակել, - ոգեւորված շարունակեցի ես, - մենք շատ շքեղ հագուստ կգնենք իմ ավարտական երեկոյին: Մա, բարություն չանես, - սաստեցի, - եւ անգամ մեր գյուղացիներին ապառիկով ոչ մի ծաղկեփունջ չտաս:

- Թաղման ծաղիկները ոչ ոք չի գնում ապառիկով: Մահը միակ դեպքն է, երբ մարդիկ վճարում են կանխիկ, - ասաց մայրս, - բայց

դժվար թե քո ասած առեւտուրը լինի: Նա այնքան մեծ մարդ էր, որ նրա համար թարմ ծաղիկներ կբերես:

- Ճիշտ ես ասում, - համաձայնեցի, - բայց մի մոռացիր, որ նոյեմբերի վերջն է, եւ անգամ այդքան հարգելի մարդու համար ոչ ոք չի բարձրանա սարերը: Իսկ քաղաքից բերված ծաղիկները կթառամեն կես ճամփին: Յեռու ենք ախր...

- Իմ թեւերում ուժ չկա աշխատելու, - համարյա ճշարտ լաց եղավ մայրս, - հիմա ի՞նչ եմ անելու: Նա ինձ խոստացել էր իմ մահախոսականը գրել, բայց փոխարենը մեռավ: Հիմա ես որտեղի՞ց գտնեմ այդքան պատկառելի ու գրագետ մարդ: Առանց նրա իմ մահը էժանանում է:

- Մա, - ծիծաղյալ կարողացա զսպել, - դու ընդամենը երեսունհինգ տարեկան ես: Ի՞նչ մահվան մասին է խոսքը:

- Ի՞նչ անենք, - նեղացավ մայրս, - ես հողի վրա մարդիկ նույնիսկ իրենց մոր արգանդում են մահանում:

- Ես գիտեմ՝ ով կարող է գրել քո մահախոսականը, - փորձեցի մխիթարել:

Մայրս մի պահ դադարեց ողբալը.

- Ո՞վ:

- Մեր հայոց լեզվի ուսուցիչը: Շատ գրագետ է եւ սիրում է օգնել մարդկանց. չի մերժի, - վստահեցրի:

- Դու գովե՞ր ես, - հանկարծակի ճչաց մայրս, - շարքային ուսուցիչ՞ը պետք է փառաբանի իմ կյանքը կամ մահը: Եւ բացի այդ նա ինձանից փոքր է, չի տեսել իմ հորն ու մորը, իմ ծնունդը: Ի՞նչ պիտի ասի իմ մասին, - նա դժգոհ թափ տվեց ձեռքը:

- Դե, քանի որ դու դեռ մահամերձ չես, - ժպտալով ասացի ես, - կարող ենք սպասել, մինչեւ հիշենք քո ասած ազդեցիկ մեկին:

- Իսկ դա ե՞րբ կլինի, - վշտաբեկ փնթփնթաց մայրս, - եւ ի՞նչ է նշանակում մահամերձ չես, երբ ամեն րոպե արկը կարող է ընկնել քո տան վրա: Մենք սպասելու ժամանակ չունենք: Մենք չենք կարող այդպիսի սխալ թույլ տալ, երբ մեր ապրելու ժամանակը հաշվված է փշրանք առ փշրանք, - մորս ձայնը կոպտացավ, ապա խզվեց. թվաց՝ հիմա կսկսի հեկեկալ:

- Գտա, - խղճահարությամբ մորս նայեցի ես, - դա կարող է անել տեր հայրը: Իմ կարծիքով նա ավելի ազդեցիկ է, քան՝ դպրոցի տնօրենը, եւ այնքան պարկեշտ, որ չի համարձակվի մեռնել առանց քո մահախոսականը գրելու:

- Չնայած դու ինձ ծաղրում ես, - ասաց մայրս՝ ամուլկով քիթը վեր քաշելով, - բայց չեմ նեղանա, քանի որ խելոք բան ես ասում: Ես կխնդրեմ տեր հորը:

Այդ մտքից հանգստացած՝ մայրս գնաց հարեւան սենյակ եւ այնտեղից վերադարձավ գույնզգույն կտորների մի ողջ բլուր գիրկն առած:

- Արագ փոխիր հագուստդ, - ասաց նա, - ես սկսում եմ ծաղիկները ձեւել, լավ կլինի գիշերն աշխատենք ու վերջացնենք:

- Ինչնեղի՞ս է պետք այդքան շտապելը, առանց դրա էլ կհասցնենք, - դժգոհեցի:

- Ուզում եմ, որ հենց այսօրվանից ծաղիկները պատրաստ լինեն: Թեեւ տնօրենը չարժե այդքան հոգատարության, նա ինձ խաբեց, հույսով արեց ու մեռավ, բայց չեմ ուզում, որ քաղաքից եկողները մտածեն, թե ընկել են այնպիսի խուլ վայր, որտեղ նույնիսկ արհեստական ծաղիկները դժվարությամբ են ճարվում:

Մինչ ես հագուստս էի փոխում՝ մտածված ձգձգելով վերնաշապիկի իմ փնտրտուքը, նա վերադարձավ մեր նախկին խոսակցությանը.

- Տեր հայրը չի խաբի, դու ճիշտ ես ասում, - նա գոհունակ ու հպարտ նայեց ինձ: - Ինչպե՞ս ես գլխի չեի ընկել: Նա Աստծո մարդն է, նրա մեջ ճշմարտությունը շատ է:

- Ճշմարտությունն ինչի՞դ պետք եկավ, - ես մտածեցի, որ մայրս իր մահախոսականը շքեղ դարձնելու նոր տարր է մտածել:

- Կյանքը միակ իրական ճշմարտությունն է: Իսկ երբ քեզ մի անգամ խաբում են, եւ դու քո կաշվի վրա ես զգում խաբեության դաժանությունը, ճշմարտությունը ավելի է թանկանում:

- Մամ, բայց խեղճ տնօրենը քեզ չի խաբել ու ինքնասպան եղել: Պարզապես նրա մահը եկել է: Ի՞նչ աներ, ասեր՝ գնա, վաղը ծնողիդ հետ կգա՞ս, - ես ծիծաղեցի: - Մահը նրա աշակերտը չէր, նա չէր կարող դա անել:

- Իսկ ինչու՞ պիտի չաներ, - ոչ մի կերպ տնօրենին հասկանալ չէր ուզում մայրս:

- Տուր, տուր տանեմ օսլայեմ ձեւված տերեւները, - ասացի ես ու սկսեցի ծղոտե զամբյուղի մեջ հավաքել սեղանին թափթփված գույնզգույն տերեւիկները: Իմ ձանձրացած ձայնից մայրս զգաստացավ.

- Շատ եմ զայրացած, - խոստովանեց նա, - բայց կարելի է գոնե մի անգամ ասել. «Աստված հոգին լուսավորե, լավ մարդ էր »:

Հաջորդ օրը դեռ լույսը չէր բացվել, երբ նա բոթեց կողս.

- Վեր կաց հագնվիր, գնանք տեսնենք տեր հորը:

Ես ձգվեցի անկողնու մեջ ու վերմակը քաշեցի գլխիս.

- Մամ, դեռ լույսը չի բացվել, գուցե՞ թույլ տանք, որ նա արթնանա ու աղոթի...

- Վեր կաց, թե չէ մենակ կգնամ, - սպառնաց նա:

Դրսում ցուրտ էր: Մի երկու տեղ գրնգում էին աքաղաղները, բայց ոչ մի շուն չէր հաչում: Մայրս արագ էր քայլում: Ես համարյա վազում էի նրա ետևից: Շտապելուց նա մի երկու տեղ ոտքը խփեց քարերին, բայց չդժգոհեց: Գուցե ցավ չզգաց: Եկեղեցու դռան մոտ իմաստնացած ասաց.

- Ո՞նց էլ ապրես, վերջին հաշվով վերադառնում ես դեպի քո Աստվածը: - Զույսով լի հայացքով նայեց ինձ, - դու այստեղ սպասիր, ես շուտով կգամ, - ասաց:

- Զլա տեսնենք դուռը բաց է, - խորհուրդ տվեցի:

- Եկեղեցու դուռը երբեք փակ չի լինում, - տեղեկացրեց մայրս, - այստեղ ինձ սպասիր, տեղ չգնաս:

Եկեղեցուց նա դուրս եկավ պատերը բռնելով, անկենդան հայացքով: Իսկ երբ եկեղեցու պատն աճարտվեց, նա ճոճվեց, թվաց՝ խարխափում է ու կանգ առավ: Ես մոտ վազեցի.

- Ի՞նչ է, տեր հայրն էլ է մահացել, - նրա դժբախտ տեսքից եկաթադրեցի ես:

- Ոչ, - հուսախաբությունից մորս ձայնը վերածվեց շշուկի, - նա աղոթում էր, եւ ես էլ միացա նրան:

- Ըհը, - կռահեցի, - նա քեզ մերժեց, - ես բռնեցի մորս ձեռքը, որը սառն էր ու փայտացած:

- Ոչ, չմերժեց, խոստացավ...նա ինձ միայն աղոթեց խոստացավ:

- Ի՞նչ անի խեղճ մարդը, երբ կարգն է այդպիսին, - նրա սառած ձեռքը շփելով փորձեցի տաքացնել ես, - աղոթելը միակ բանն է, որ նա կարող է անել գնացողի համար:

Մայրս շվարած նայեց ինձ.

- Զիմա ես ի՞նչ անեմ, ու՞մ դուռը գնամ:

Լույսն ուզում էր բացվել: Ցուրտ էր: Պարզկա սարսուռ կար օդում, եւ ես մրսում էի:

- Արի տուն գնանք, - սրտնեղեցի, - մեզ պե՞տք է՝ սրան-նրան խնդրենք: Եթե մենք կարողանում ենք մեռնողի համար ծաղիկներ պատրաստել, մահախոսական էլ կգրենք, ի՞նչ է պատահել: Չեմ էլ կարծում, թե ծանր գործ է: Պատկերացրու մենք ավելի լավ կգրենք, քան որեւէ մեկը, որովհետեւ մենք քեզ ճանաչում ենք նույնքան լավ, որքան քո մայրը:

Մորս աչքերում կրակ հայտնվեց, քիչ մնաց ճչար ուրախությունից.

- Դու իրո՞ք կարող ես դա անել:

- Կարող եմ, իհարկե, ինչու՞ չեմ կարող, - հավաստիացնում էի ես, թեեւ կյանքում ոչ միայն չէի գրել, այլեւ անգամ չէի լսել որեւէ մահախոսական: Միայն գիտեի, որ դա բառերի կույտ է, որն արտասանվում է վախճանվածի շիրմի մոտ եւ փառաբանում նրան: Փառաբանում է անկախ այն բանից, վաստակել է հանգուցյալը դա, թե՞ ոչ:

- Դա ցնցող կլինի, - ոգետրվեց մայրս, - աղջիկը գրում է մոր մահախոսականը: Նման բան ես դեռ չեմ տեսել:

- Այո, - շարունակում էի ոգետրել, - ես կարող եմ ցնցող գրել, - թեեւ հավատացած չէի դրանում:

Ուղղակի լույսը նոր էր բացվում, ցուրտ էր, համ էլ սոված էի եւ շատ էի ուզում տուն վերադառնալ:

- Այո, - ինձ թեւանցունկ արեց մայրս, - կյանքը դաժան բան է: Միշտ էլ պետք է հույսդ քեզ վրա դնես: Ուրիշներից իզուր ենք նեղանում, պատերազմի տարում քո մահով ոչ ոքի չես վշտացնի ու չես զարմացնի: Արի գնանք տուն. հենց վաղը էլ կգրես իմ մահախոսականը:

- Ըհը, անպայման, հենց լույսը բացվի...

- Մի շտապիր, - խրատեց նա, - լավ մտածիր, անհամ բաներ չգրես: Լաց ու կոծ չդնես, չնվնվաս եւ ամենակարեւորը՝ չհորինես: Կգրես պարզ ու հպարտ:

- Այդպես էլ կանեմ, - շտապեցի հավաստիացնել ու տաքանալու համար ամուր փաթաթվեցի նրա թեւին:

- Զանի որ դու շատ ջահել ես, առաջին տողը ես կմտածեմ քո փոխարեն, - ասաց նա, - պատկերացրու՝ ես այն վաղուց ունեմ գլխումս:

- Իսկ ինչու՞ միայն առաջին տողը, կարող ես բոլոր տողերն էլ դու գրել: Իսկ ես կասեմ՝ համաձայն եմ, թե՞ ոչ, - առաջարկեցի:

- Իզուր ես ծաղրում: Եթե այս անգամ լավ ստացվի, հետագայում կարող ես մահախոսականներ գրելով էլ գումար վաստակել, - ասաց նա:

- Թու՛հ, ինչ տհաճ գործ գտար ինձ համար, - զզվանքով վեր քաշեցի քիթս:

- Լավ, դա քո գործն է, - չուզեցավ վիճել մայրս, - բայց այս տողը լսիր: Ես այն քեզ եմ նվիրում որպես սկսականի: Ի միջի այլոց, ես այս տողը տնօրենին էլ էի հուշել, եւ նա գոհ էր մնացել: Լսիր, - նա մի լավ մաքրեց կոկորդը, ինչպես երգելուց առաջ, ապա հստակ արտաբերեց, - Մահը միակ դեպքն է կյանքում, երբ մարդը վճարում է կանխիկ, իսկ նա տվել էր ավելին, քան ստացել էր, եւ պետք է նրա մահը գար ժամանակին:

- Որքան հասկացա, դու ուզում ես երիտասարդ մեռնել, - ասացի՝ ի պատասխան նրա հարցական հայացքի:

- Վատ չէր լինի, - հաստատեց, - ոչինչ այնքան չի ժամանակում մարդուն, որքան կյանքը: Ես ուզում եմ թանկ լինել:

- Ոգում ես, դարձիր, - ի միջի այլոց փնթփնթացի քթիս տակ: Բայց մայրս դրանից ավելի ոգեւորվեց.

- Այ, հիմա հավատում եմ, որ դու կարող ես գրել իմ մահախոսականը, - ինձ փաթաթվեց նա, - վաղվանից ես ոչինչ չեմ վաճառի, այլ կբաժանեմ մարդկանց, լաց կլինեմ անհայտ զինվորի շիրմին եւ մոմ կվառեմ կոպտացած հոգով մարդկանց համար: Ես մարդկանց կստիպեմ այդպես մտածել իմ մասին: Անունը միակ բանն է, որ մենք թողնում ենք մեզանից հետո. իմ անունը պիտի փայլի:

Դեռ տուն չմտած, նա իր պայուսակից հանեց գրիչն ու մեկնեց ինձ.

- Նստիր սեղանի մոտ, հիմա թուղթ կբերեմ, - նա նետվեց խոհանոց ու սկսեց դարակները փորփրել: - Ես այստեղ տետր ունեի, որի մեջ գրանցել էի, թե ո՞վ ինձ ինչքան է պարտք, չե՞ս տեսել:

- Չէ, չեմ տեսել, - դժգոհ մրթմրթացի, - գնում եմ թեյ դնեմ:

- Չէ, չէ, ոչ մի դեպքում, - կտրուկ ու խիստ արգելեց նա, - ըհը, թուղթը գտա, արի գրիր, վերջացրու, հետո նոր թեյ կխմենք:

Նա սեղանին դրեց տետրից պոկված երկու էջ:

- Թե ինչու՞ ես շտապում, չեմ հասկանում, - տետրի էջերը վերցնելով՝ նեղսրտեցի ես, - այնքան եմ սառել, աչքերս արդեն մրմռում են, բա որ հիվանդանա՞մ: Չէ՞ր լինի, թեյը խմե՛իք՝ հետո...

- Հասկանում ես, - զուրիս սկսեց շոյել մայրս, - կյանքը գրաֆիկ չէ, երբեք չես իմանա, թե ո՞վ է առաջին գնացողը հատկապես այն պահին, երբ աչ ու ձախ ռումբեր են պայթում: Ո՞վ կսպասեր, որ խեղճ տնօրենը կմահանա: Գրիր, թող ամեն ինչ պատրաստ լինի, - կմկմաց նա, - հանկարծ ու ես չեմ առաջին գնացողը:

Մորս խոսքերից փշաքաղվեցի: Վզիս վրա երակներս սեղմվեցին, թվաց՝ արյունը ցամաքեց: Ապա ձգվեցին նվվոցով ու արյունը թափով հորդեց դեպի գլուխս: Դեմքս տաքացավ: Հետո հանկարծ սառեցի, ու իմ հայացքը պաղեց մորս դեմքին.

- Մա, որտեղի՞ց քո մեջ այդքան դաժանություն, - ինձ անծանոթ ձայնով հարցրեցի ես:

Մայրս իմ ձայնից քարացավ, ապա շվարած նստեց աթոռին, ու նրա ձեռքերը կախ ընկան.

- Պատերազմ է, - մեղավոր շշնջաց նա, - պատերազմ է, աղչիկս...

## Առանց ռեմարկների

### Այնպես, որ Հոյակապ

Բեն- Ողջո՛ւյն...

Այբ- Ո՞վ եմ ես...

Բեն- Ո՞վ ես դու...

Այբ- Ո՞վ ես դու...

Բեն- Ո՞վ եմ ես...

Այբ- Չգիտեմ, չեմ հիշում...

Բեն- Ի՞նչ...

Այբ- Օտար ենք մենք իրար, անծանոթ...

Բեն- Ի՞նչ...

Այբ- Երգ է... Երգի խոսքերն էի արտասանում... Ով եմ ես, ով ես դու... Ես Այբն եմ...

Բեն- Իսկ ես Բենն եմ...

Այբ- Ես առաջինն եմ, դու՝ երկրորդը...

Բեն- Դրա համար էլ դու տղամարդ ես, իսկ ես կին...

Այբ- Իսկ երրորդն ո՞վ է...

Բեն- Մենք ենք, որպես զույգ...

Այբ- Իսկ հետո...

Բեն- Նույն բանը. մեկ, երկու, երեք...

Այբ- Այս ինչ սիգնալներ են... Օ~, պարոն, շչակներ...

Բեն- Հարասանիք է...

Այբ- Միթե այսօր շաբաթ է...

Բեն- Այո... Ինչ արագ են թռչում օրերը...

Այբ- Էլ դու սուս...

Բեն- Ջրհեղեղից առաջ էլ մարդիկ հարսանիք էին անում, ուտում, խմում, ուրախանում էին, իսկ Նոյը իր տապալի համար ծառեր էր ընտրում...

Այբ- Բիբլիական երկզգիսակի այս գեղեցկության դիմաց նստած Այբն ու Բենը էլ ինչի մասին պիտի խոսեն որ...

Բեն- Գիտես, թե այն ժամանակ, թե հիմա այս սարը չգիտի, որ

Այբ- Մենք ինքներս մեզանից ամաչում ենք ու մեզ դրանից մեղավոր ենք զգում...

Բեն- Ուղեղի անբուժելի հիվանդություն...

Այբ- Հենց այդ պատճառով էլ մենք չենք բավարարվում մեր քնական պահանջներն ու կարիքները բավարարելով: Ուղեղից ծնված ցանկությունների գետը նետվելով՝ ամեն կերպ պատճառաբանում, հիմնավորում, արդարացնում ենք այդ ցանկությունները ու ամեն կերպ ձգտում ենք իրականացնել դրանք...

Մատուցող- Կայենը, որի հայրը օձն էր, սպանեց իր եղբորը՝ Եվայի արգանդից ծնված Աբելին, Ադամի որդուն...

Այբ- Կոնյակ կխմե՞ս...

Բեն- Կարելի է...

Մատուցող- Երկու կոնյակ և... Եվ ոչինչ...

Այբ- Աստծու ծրագիրը հենց սկզբից ձախողվեց... Մեր նախահայրը դարձավ ոչ թե Աստծու երկրային որդին՝ Ադամը, այլ օձի որդին՝ Կայենը... Ու մարդիկ սկսեցին սպանել իրար... Բեն- Ու պատվիրեցին. «Մի՛ սպանիր»...

Այբ- Սկսեցին թալանել իրար...

Բեն- Ու պատվիրեցին. «Մի՛ գողացիր»...

Այբ- Այո...

Բեն- Սկսեցին շնանալ ու պատվիրեցին. «Մի՛ շնացիր»...

Այբ- Ուրիշ սուրբ գրքերում այլ պատմություններ են նկարագրված, բայց ամենուր պատվիրանները նույնն են մնում. «Մի՛ սպանիր, մի՛ գողացիր, մի՛ շնացիր»... Եվ այն... Եվ այն... Բեն- Եվ այսօր մեր հիվանդ ուղեղից ծնված քաղաքակրթության մեջ նստած մենք ի՞նչ ենք անում...

Այբ- Երևի մարդ-կենդանի մեր տեսակի երկարածիզ հոգեվարքին ենք մասնակցում...

իր անունը Արարատ է...  
Այբ- Եվրոպայի մայրցամաքն էլ մինչև օրս տեղյակ չէ, որ իրեն  
Չևսի կնոջ անունն են դրել...  
Բեն- Իրոք որ...  
Այբ- Ամերիկայի մայրցամաքն էլ չգիտի, որ իրեն մի իտալացու  
անունով են կոչում...  
Բեն- Փիղը, մոծակը, առյուծը, թիթեռը, ձուկն ու արևը, լուսինը,  
Մարսը, Յուպիտերն էլ տեղյակ չեն, որ մենք նրանց բոլորին  
անուն ենք դրել...  
Մատուցող- Ու շարունակելով նորանոր անուններ դնել, մենք  
բաժանում, մասնատում, բզկտում ենք անսկիզբ ու անվերջ  
ամբողջությունը, անծայրածիր տիեզերքը... Ողջույն, կներեք, որ  
ուշ մտտեցա... Լսում եմ...  
Բեն- Սուրճ և հանքային...  
Այբ- Գարեջուր...  
Մատուցող- Վե՞րջ...  
Այբ- Վերջ...  
Բեն- Դու հասկանում ես, թե մենք որտեղ ենք գտնվում...  
Այբ- Երևանի սրճարաններից մեկում, որտեղից Արարատ լեռն է  
երևում...  
Բեն- Որը չգիտի, որ իր անունը Արարատ է...  
Այբ- Իսկ մատուցողը ամեն ինչ գիտի...  
Բեն- Իրոք որ, նա ճիշտ է, անուն դնել նշանակում է բաժանել...  
Այբ- Ավաղ, այդպես է... Նույնիսկ բացարձակ ճշմարտությանը՝  
Աստծուն, մենք բաժանել, տարբեր անուններ ենք տվել,  
պատկերացնում ես...  
Բեն- Իրոք որ, անուն դնելով նույնիսկ Աստծուն ենք  
մասնատել... Աստվածների ինչքա՜ն անուններ գիտենք...  
Այբ- Նրանց մեծամասնությունը իրենց ուժը կորցրել է... Մի  
քանիսն են մնացել՝ Կրիշնա, Բուդդա, Հիսուս, Եհովա, Ալլահ...  
Եվ... Եվ... Եվս-ևս, մտեք թևս...  
Բեն- Մի ժամանակ ես շատ, շատ էի մտածում Հիսուսի մասին:  
Բավական եր մի քիչ ալկոհոլ ընդունեի, անմիջապես տեսնում  
էի Աստծու որդուն, զրուցում էի նրա հետ...  
Այբ- Աստվածները մեր ուղեղի պրոյեկցիան են...  
Կրիշնայականը Կրիշնային է տեսնում, բուդդայականը՝  
Բուդդային, հուդայականը՝ Եհովային և այլն, և այլն...  
Բեն- Աստվածները մեր ուղեղի պրոյեկցիա՞ն են...  
Այբ- Այո, մեր ուղեղի... Դենց նա է այս ամեն ինչին անուն  
դնողը...  
Մատուցող- Այդ հիվանդությամբ մարդն այն օրը վարակվեց,  
երբ օձից գայթակղված Եվան, իսկ հետո էլ Ադամը համտես  
արեցին իմացության արգելված պտուղը...  
Բեն- Շնորհակալություն...  
Մատուցող- Խնդրեմ...  
Այբ- Ադամն ու Եվան հենց կերան արգելված պտուղը,  
անմիջապես իրենց մերկությունից ամաչեցին ու շփոթված  
սկսեցին ամեն ինչին անուն դնել...  
Բեն- Ու Աստվածը, որը չգիտեր, թե իր անունը Եհովա է, դուրս  
արեց մարդկության առաջին զույգին Եդեմի այգուց՝  
դրախտից...  
Այբ- Իրոք որ, արգելված պտուղն ուտելուց հետո մարդը  
դարձավ կենդանական աշխարհի միակ մտածող ու խոսող  
էակը...  
Բեն- Ու մեզնից բացի ոչ մի կենդանի իր մերկությունից չի  
ամաչում...

Բեն- Երևի... Բայց ինձ թվում է մատուցողը ավելին գիտի...  
Այբ- Տեսնենք... Մատուցող...  
Մատուցող- Լսում եմ...  
Այբ- Ով ենք մենք և ինչ ենք անում այստեղ...  
Մատուցող- Դուք Այբն եք, դուք՝ Բենը, ես՝ մատուցողը... Զանի  
որ Այբը առաջինն է, դուք տղամարդ եք...  
Բեն- Զանի որ Բենը երկրորդն է, ես կին եմ...  
Մատուցող- Այո, բայց ես երրորդը չեմ... Երրորդը ձեր զույգն է,  
իսկ ես հազար ու մեկերորդն եմ...  
Այբ- Եվ ինչ ենք անում մենք այստեղ, այս սրճարանում...  
Մատուցող- Կոնյակ, սուրճ, գարեջուր եք խմում ու մեր  
հեղինակի կարծ, երեք էջանոց նյութն եք դառնում... Այդ նյութը  
նրանից մի նոր ամսագրի համար են ուզել...  
Բեն- Եվ ի՞նչ է ուզում մեր միջոցով ասել հեղինակը...  
Մատուցող- Ուզում է ասել, որ մենք մեր ուղեղի գերիներս,  
պատրանքներ ստեղծող, վերացող բիոմեքենաներ ենք...  
Բեն- Ու վե՞րջ...  
Մատուցող- Այո՞...  
Այբ- Իրականում ես իմ «Այբ» անվան հետ կապ չունեմ...  
Մատուցող- Կապ ունեք, բայց որոշ չափով...  
Բեն- Իսկ ե՞ս...  
Մատուցող- Դո՛ւք էլ...  
Այբ- Իսկ մեր հեղինակը նույնպե՞ս որոշ չափով կապ ունի իր  
անվան հետ...  
Մատուցող- Այո...  
Բեն- Իսկ նրա հեղինակը...  
Մատուցող- Նույնպե՞ս... Որոշ չափով...  
Այբ- Եվ այդպես մինչև վե՞րջ...  
Մատուցող- Այո, մինչև վերջ... Բայց ոչ առաջ, այլ ետ...  
Այբ- Ե՛տ... Այսի՞նքն...  
Մատուցող- Վերջը սկզբի մեջ է, Էֆը՝ այբի, օմեգան ալֆայի մեջ  
է...  
Բեն- «Ե՛ս եմ սկիզբն ու վերջը, Ե՛ս եմ Ալֆան ու Օմեգան»...  
Ասում էր Հիսուս անունով մի հեղինակ...  
Այբ- Աստծու երկնային որդին...  
Բեն- Ադամը Աստծու երկրային որդին էր...  
Այբ- Այո՞...  
Մատուցող- Սկիզբն ու վերջը մի տեղում են, նշանակում է՝ չկա  
ոչ սկիզբ, ոչ վերջ, չկա ոչ անցյալ, ոչ ապագա... Կա ներկան,  
այստե՛ղ, ա՛յժմ, հի՛մա՛... Այնպես որ, ուղեղներիդ գոռ մի տվեք,  
ոչ առաջ ընկեք, ոչ ետ... Եղեք պահի, ակնթարթի հետ...  
Այբ- Այստե՛ղ և ա՛յժմ...  
Մատուցող- Այո՞... Ի՞նչ կցանկանայիք...  
Այբ- Այստեղ և ա՛յժմ... Կոնյակ...  
Բեն- Եվ մի՞րգ...  
Մատուցող- Ուրի՞շ...  
Այբ- Ուրի՞շ...  
Բեն- Ուրի՞շ ոչինչ...

## Այլակերպման մոլուդը

### [Յուա Բայադան](#)

Էջ [1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#) [12](#) [13](#) [14](#)

### ՄՈՒՏՔ

Արդի տեխնոլոգիական հոլովույթը Հայաստանում յուրովի հակասական, խճճված մի կացություն է ստեղծել: Կարողանալ մտածել այն՝ ահա հրամայականը: Տեխնոլոգիաների առկայության կամ բացակայության, արդյունաբերացման կամ տեխնիկականացման ընթացքի պարզ գրանցումից տարբեր բան է, իհարկե, պահանջվողը: Արեւմտյան փորձառության ուսումնասիրությունը խնդրի մի կողմն է միայն՝ ինքնին անբավարար տեղական յուրահատկությունը որսալու, սրա թելադրած խնդիրները տեսնելու համար: Հարկ է այս նոր գիտակցությամբ անդրադարձ կատարել տեղական մշակութային ավանդության վրա, պեղել, հայտնաբերել նրա այն եզրերը, որ վերամեկնաբանվելով՝ կառնչվեին տեխնոլոգիական հոլովույթի հարուցած խնդիրներին: Թերեւս ոչ հարցերի պատասխաններ գտնելու, այլ առնվազն եւ առաջին հերթին



հարցադրումներ անելու հնարավորություն ընձեռելով:

Խնդրո առարկան՝ տեխնոլոգիական հեղափոխությունը, եթե համառոտ ձևով բնութագրելու լինեմ՝ նոր ժամանակի ամենավճռական գործոնը, Հայաստանում լիովին դուրս է մնացել վիճակագրական-ընկերաբանական, հոգեբանական եւ փիլիսոփայական լուրջ ուսումնասիրությունների տեսադաշտից: Թերեւս՝ իր որոշակի մասով ընկալվելով իբրեւ Խորհրդային համակարգի «ինքնին հասկանալի» բաղադրիչներից մեկը, կամ ուրիշ պատճառներով: Ինչեւէ, այսօր այդ իմացական անվորով պարապը մեզ ստիպում է հայացք դարձնելու մշակույթի ավելի ավանդական մարզի՝ գրականությանը: Ինչ խոսք, նման կեցվածքի օրինավիճակն ինքը մնում է առայժմ չպարզորոշված, իսկ հարցումի, դիմումի իրավասությունը՝ խնդրական:

#### ԱՌԱՋԱԲԱՆ

Շատ ժամանակ չի բաժանում այսօրվա ընթերցողին Հր. Մաթեոսյանի գրական արտադրությունից՝ հիմնականում ամփոփված Երկհատոր եւ «Տերը» ժողովածուներում: Բայց պատահել է մի բան, որ մեզ դուրս է դնում այդ գրականության ժամանակից, գրության հաստատած շրջանակներից: Ինձ շատ կարեւոր է թվում այս բաժանվածության, միջնորդվածության գրանցումը, որ այժմյան ընթերցումը կորցրել է իր նախկին անմիջականությունը, եթե կուզեք՝ անմեղությունը, որ այն վերադարձ է դեպի գրություն եւ իբրեւ այդ՝ իր մեջ պարունակում է սահմանախախտման արարք, ուստի եւ՝ այդ սահմանի արձանագրումը:

Ներկա ընթերցումի համար մեկնակետ են ծառայել Հր. Մաթեոսյանի, պայմանականորեն ասած, երեք «գրական հանգանակները»: Նկատի ունեմ Թխ 1980, N12-ի ծավալուն հարցազրույցը, Երկհատորյակը ուղեկցող «Երկու խոսք ընթերցողիս»<sup>1</sup> եւ «Ի սկզբանե եր բան...»<sup>2</sup>ը, (ինքնակարի փորձը)<sup>2</sup>: Մեզ հետաքրքրող գրողական արարքի հստակորեն միայնակից գանգալվող երեք որոշադրումներն են, դրանց փոփոխման ընթացքը հարուցող ներհայտ մղումը: Վերոհիշյալ հարցազրույցում Ա. Մարչենկոն հիշատակում է ավելի վաղ շրջանի մի հարցազրույց, որտեղ Մաթեոսյանն իրեն անվանում է Ծմակուտի «լուսանկարիչ» ու «ակնարկագիր»: Սա առաջին ինքնաբերականն է: Գրականությունը կոչված է փրկելու անհետացող հայրենիքը. «Լոռին (ե՛ւ որպէս աշխարհագրական, ե՛ւ որպէս հոգեւոր-բարոյական հասկացություն) չպետք է անհետանա երկրի երեսից»<sup>3</sup>: Երկհատորյակի առաջաբանում կարդում ենք. «Օհանեսի փորձն ուզում եմ կրկնել գրականության մեջ. ուզում եմ նոր մի հովիտ փռել եւ բնակեցնել նոր մարդկանցով ու կենդանիներով եւ կարծես թէ հաջողում եմ. Ծմակուտ մի գյուղանուն, մի երկու բնակիչ ու կենդանի արդեն ունեմ»: Եվ ապա «... ստիպված եմ լինել իմ ժամանակի տարեգիրը»<sup>4</sup>: Հայրենի երկրի նկատմամբ պարտականությունը փոխակերպվում է: Շեշտադրության փոփոխումը հստակ է. եթե խոսքը վերստին Լոռին կորստից փրկելու մասին է անգամ, ապա՝ «նոր մի հովիտ» փռելու միջոցով, եւ միանգամայն նոր հրամայական՝ լինել ժամանակի տարեգիրը: Հետեւյալ մեջբերումը արդեն «Ինքնակարի փորձ»ից է. «Եվ ուրեմն ինչ գեղեցիկ են նրանք, ովքեր մարդու համար գրում են ի՞ր խոսքը, մարդու մեջ բացում են ի՞ր լույսը, արձակում ի՞ր ձգտումը»<sup>5</sup>: Այլակերպության ակնարկագիր- տարեգիր- գրող շղթայի ողջ երկայնքին գրելը մնում է որդիական պարտքի ընդհանուր շրջանակում («Ես նրանց որդին եմ...»), բայց ակներեւ են եւ տարբերությունները: Եթե գրողական արարքը առաջին դեպքում առնչվում է տեղանքին, երկրորդում՝ առավելապես ժամանակին, ապա վերջին բնութագրման մեջ այն դուրս է գալիս տեղի ու ժամանակի որոշակի սահմաններից եւ իր գործադրումը գտնում վերացական մի հավաքականության մեջ, որ ընդգրկում է Ղուկասի ավետարանի Սիմոնին, Պլատոնովի պատմվածքի եւ Գողարի ֆիլմի հերոսներին, հողի այսօրվա մունջ մշակին եւ այլն: Այլակերպումների այս փուլերի մեջ գրանցվում է գյուղական համայնքի Մենքից դուրս ելած եւ իրենց ինքնությունը որոնող գրողի ու գրության տեղափոխությունը: Կտեսնենք, որ այս տարագրության բուն ազդակը անմիջական կապ ունի տեխնիկականացման հողովույթի հետ:

Անհրաժեշտ է ընդգծել այն հանգամանքը, որ այս երեք հանգրվանները առաջադրվել են Հր. Մաթեոսյանի մինչեւ օրս հրատարակված բոլոր գրություններից հետո: Ժամանակագրական առումով առաջինը հարցազրույցն է, որտեղ խոսվում է ոչ միայն մեզ հայտնի գրությունների, այլեւ նոր վեպի («Տախը») հետ կապված բարդությունների մասին: Նպատակ չունեմ այսօր արդեն հետին թվով ի հայտ բերելու գրողի՝ այս փոխակերպումների շարքում նշմարվող հետագա «լույթությունը», բայց այս տեղաշարժին զուգահեռ այլակերպումի մի ուրիշ շղթա ենք գտնում Հր. Մաթեոսյանի արտադրության մեջ՝ «Անհիճոր»ից մինչեւ «Տերը»: Տեխնիկական, տեխնիկականը նախ իբրեւ պարզ միջոց, ապա՝ օտար, մերժվող ու կործանարար, փոփոխվելով՝ միշտ հայտնվում է գաղափարաբանական որոշակի կառույցում՝ մնալով լծորդված Հայրենիքի հետ: Ստորեւ կհետեւենք Հայրենիք-տեխնիկա զույգի փոխակերպումներին, որ ուղեկցվում են ուրիշ համընթաց փոփոխություններով:

Վերջապես, առավել ընդհանուր ձևով հարցումը կարելի է ձևակերպել այսպես. Մաթեոսյանի գրականության մեջ ինչպե՞ս է ընկալվում՝ ընդունվում-մերժվում տեխնիկականը, այսօր այն մեզ ի՞նչ հնարավորություն է տալիս հարցադրումներ անելու կամ տեխնիկայի մասին խոսք բացելու:

#### ԱՇԽԱՏԱՆՔ

Աշխատանքը՝ Մաթեոսյանի առաջին շրջանի ստեղծագործության մեջ («Անհիճոր», «Մենք ենք, մեր սարերը», «Բեռնաձիեր»), ունենալով առանցքային նշանակություն, միաժամանակ տեղն է, ուր գտնում ենք տեխնիկան՝ աշխատանքային հմտություններ ու կարողություններ, հին ու նոր գործիքներ, արդի տեխնիկական միջոցներ: Համապարփակ բնույթը, որ ունի այստեղ աշխատանքը, խոյս է տալիս մեզ հայտնի սահմանումներից: «Աշխատանք», այո՛, նշանակում է նեղություն ու տանջանք եւ այդպես էլ՝ իբրեւ անխուսափելի եւ անփոխարինելի, ընդունվում է: Այն սոսկ կենսական անհրաժեշտ միջոցների արտադրությունն է, եւ ոչ էլ այդ աշխատանքով կարելի է հարստանալ: Թվում է՝ շնչված են աշխատանքի հետ կապված հեթանոսական պաշտամունքային ծեսերի ու սովորույթների բոլոր հետքերը: Երկիրը գործելու, մշակելու աստվածային պատվիրանի՝ որպես սկզբնական մեղի համար փոխհատուցելու մասին, այստեղ չեն հիշում: Իսկ ավետարանային պատգամը՝ «Ով չի աշխատում, նա չի ուտում», որով պարապությունը ծանրագույն մեղք է դիտվում, նույնպես տեղին չի հնչում. այստեղ մարդիկ աշխատում են մինչեւ ուժասպառություն:

Միատարր համայնքը՝ գրեթե զուրկ որեւէ շերտավորումից, իր հարափոփոխ կառուցվածքը, գոյության իր եղանակը գտնում է աշխատանքի մեջ, որ բաժանված ու անկախ չէ բնությունից: Աշխատանքը սահմանափակված չէ գուտ աշխատանքային պարագաներով պարտադրված շրջանակով: «Հողի ու մարդու բարեկամությունը», որ հղում է նաեւ բարոյական ու մասամբ գեղագիտական սկզբունքների, հեռու է բնության շահագործում լինելուց: Հանդն ու գյուղացին, գետը, ամպը, արտը, եզը, ձին

գոյակիցներ են: Երկրի վրա մարդը աշխատանք ունի անելու, կանչված է ներկա գտնվելու: Առանց մարդու աշխարհն անավարտ կլինի. «Անտառամեջքին ձգտում է հանդերը դարձնել... ավարտուն»<sup>6</sup>: Հողի տնօրնի ակազն դնել, աղբյուրների ակունքները բաց պահել, հանդը ավարտուն դարձնել՝ տարվա եղանակների թափափված ըջվող իր նպատակը իր մեջ ունեցող ակվերը հովվույթ, որ մարդուն մասնակից է դարձնում գոյի եության երեսնումին: Աշխատանքն իբրև համակեցություն:

Մարդը իր գործիքներն ունի՝ արոր, սայլ, բահ, եղան, փոցխ, գերանդի, կացին, երկանք՝ մարդու գործակիցները, նրա ներկայության անխոս վկանները: Պարզ ու գեղեցիկ, զնգուն գերանդին, որ մարմնավորում է հնձվորի ընթացքի խորհրդավոր կշռույթը: Աշխատող աստվորի քայլը երկնքի ու երկրի միջև - դաշտ ու մարգագետին, սարավանջ ու արահետ, մարգ ու առու, տուն, դեզ, աղբյուր - շարժմունք ու կեցվածք՝ տարածություն բացող, այն տարածող: Գործիքները կենդանություն են առնում աշխատանքով, երբ գործում են մարդու ու բնության հետ համատեղ: Միաժամանակ մասնակիցներն են մարդու հմտությունների, «տեղեկությունների ու կարողությունների», որ անհնարին են առանց գործիքների ու աշխատանքի ընթացքի: Անհատական կատարման հետեւում այս հատկություններն ունեն համայնքային գոյության համապարփակ եղանակը: Սրանք առանձնացված չեն աշխատանքի տեղից ու պահից, սպառիչ ձեւականցման ու նկարագրման չեն ենթարկվում, այլ աշխատելու կարողություններ են և հենց աշխատանքի մեջ են կայանում իբրև արարք, մարմնով կատարվող գործողություն: Մարմնական կարողություններ-տեղեկություններ, որ ունեն տարածական ծավալում ու տեղություն, ունեն կատարման եղանակ՝ տարվա եղանակների մեջ եւ այսպես անբաժանելի են եղանակների շրջապատույթից: Այս տեղեկություններն ու կարողությունները տեղի են ունենում, ի գործ են դրվում՝ վայրը փոխակերպելով տեղի, ուր աշխատող մարդը տեղացի է:

## ՉԱՐԳԱՑՈՒՄ

Ավանդական գործիքների ու հմտությունների կողքին այստեղ ներկա է եւ արդի տեխնիկան՝ տրակտոր, կոմբայն, մոտոցիկլետ, հեռախոս, ռադիոընդունիչ եւ այլն, տեխնիկական գործելակերպը: Թե՛ն ժամանակակից տեխնիկական միջոցները դեռեւս ուղղակիորեն չեն հակադրվում հին գործիքներին ու հմտություններին, բայց նշմարվում է այդ հակադրության հնարավորությունը եւ տազնապը՝ այդ հնարավորությամբ հարուցված. «... ասում են նորը՝ սավառնորդի արիեստը, բերում է քամահրանք հողագործության նկատմամբ: Աստված չաներ»<sup>7</sup>: Հակադրությունն առայժմ չկա, քանի որ «Լորությունների էլեկտրական եւ ոչ էլեկտրական այդ միասնությունը գյուղն արագ յուրացրեց...»<sup>8</sup>:

Այսպիսով տեխնիկայի իսկությունն աննկատ է մնում, թե՛ն գուշակվում է ակնարկագրի տարակուսանքում՝ «ճրագթաթ ծմակը փայտ է եղել, հասկանում եք: Իսկ ես կարծում էի վայրի գեղեցկության խորհրդանիշն է եղել այդ բարդված անտառը... Ծրագթաթը նկարից դարձավ միլիարդ»<sup>9</sup>: Տեխնիկական ընկալվում է իր ցանկալի օգտակար նշանակությամբ, որպես զարգացման, առաջընթացի ճանապարհին աշխատանքը թեթեւացնող ինքնին հասկանալի միջոց: Իր կործանարար նշանակությամբ այն մնում է ճնշված, չճանաչված: Ուրեմն տեխնիկայի միջոցով «մարդու աշխատանքի թեթեւացումը» առանց աշխատանքի իսկությունը խաթարելու, թվում է հնարավոր: Գործն այստեղ մնում է զարգացման խորհրդային գաղափարաբանության հունում, թե՛ն «զարգացումը» միայն զարգացած սոցիալիզմը նշանավորող խորհրդային գաղափարաբանական մենաշնորհը չէր: Այսօր էլ աշխարհը բաժանված է զարգացած, զարգացող ու թերի զարգացած երկրների: «Չարգացումը»-ը համամոլորակային հաճախանք էր: Գաղափարաբանական այս կաղապարը հեռվում փնտրելու կարիք չկա. «Անիծոր»-ում այն ներկա է եւ անբացահայտ ձեւով գործում է ակնարկի ժանրի տեսքով: Ակնարկը պիտի պատմեր-գեկուցեր աչքի տեսածը, որ հիմնականում կարող էր միայն նվաճում լինել, ասելը՝ «աշխատանքային նվաճում»: «Նվաճումը», «զարգացումը» պատմող խոսքը չէր կարող նկատել ու արձանագրել հակադիր ընթացքը՝ փլուզումը: Տեխնիկայի, ավելի ընդհանուր ասած՝ օտարի ընկալումը, երբ այն նկատվում է, հարցումի ոլորտ տեղափոխվում ու մեկնաբանության փորձի ենթարկվում, կատարվում է գործական փոխակերպման միջոցով: Տեխնիկականացման հովվույթը իր խորին իմաստով կարձանագրվի միայն ակնարկի սահմանների հարթահարմամբ, գրության եղանակի այլակերպմամբ, նրա նոր կորագծի երկայնքով:

## ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՀՈՒՄՈՐ

Ո՞վ է ձեռքով անում...

Հովի. Թումանյան

Տեսանք, որ աշխատանքը զուտ գործնականությունից ավելի անչլածություն է բնության տարերքին: Աշխատանքով կերպարանափոխված տեղանքը, «հովիտը» կամ «բացատը» բնակարան է, որտեղ մարդու կողքին օթեւան են գտել ձին, կովը, ոչխարը, շունը, մեղուների ընտանիքը, աղբյուրը, արտը, ծառը: Այստեղ են եւ գործիքները՝ այս բացատի բանալիները: Մարդու տունը նրան չի բաժանում հովիտի մյուս բնակիչներից. տան պատերը թափանցիկ են: Տունը այնտեղ է, ուր աշխատանքն է. «գյուղություն հանդերում ավելի շատ կա, քան բուն Անտառամեջ գյուղում»<sup>10</sup>: «Ավարտուն» հովիտը կամ բացատը տառապագին աշխատանք է եւ հովիտի կենվորների խորին մերձավորություն: Տեղանքը ավարտուն դարձնելը բնության ձայնին ունկնդրելն է, նրա կանչին ընդամազ գնալը՝ ինքը քեզ բացելով նրա համար: Օգնել, որ գոյն ի հայտ գա դեպի ներկայություն եւ կենալ այդ անխուսափելի հարեւանությամբ: Լսել լուսնի զնգոցը, ծորիղների համերգը, հողի ձայնը, ծառի տնքոցը, գետի մրմունքը, որսալ սամիթի սերունդ հողին պահ տալու պահը, փեթակները շրջելու կամ հունձը սկսելու օրը...

«...Ես նստել էի գրելու իմ նամակը եւ չէի կարողանում: «Սարերի կարկուտը հավե՞լ է », գրում էի եւ եւ ջնջում: «Շները ո՞նց են», գրում էի եւ եւ ջնջում: «Արտերը դեղնե՞լ են, մոռը հասե՞լ է, հետո, որ կարկուտները հավեցին ու գետը վարարեց՝ մեր լողալու տեղը ավագ չի՞ լցվել, թուրքն ու Վանին չե՞ն կռվել, պապն այգում կանգնած է, Աբովյենց բալը չի՞ կարմրել, Ներին հոտը քաշում է, Ասատուրի անունը դեռ մայրո՞ր է, Արտեմ քեռին չի՞ նվազում, Էն հեռու լանջի երկու հատ կարմիր կակաչը դեռ էնպես կարմիր են կանաչի մեջ, լոբին ծաղկե՞լ է, շները ո՞նց են...»<sup>11</sup>: Ի՞նչ է անում ինքը, ի՞նչու սրանց կողքին չէ:

Գրությունը հաճախ կազմվում է իբրև նկար, իբրև նկարագրություն, որ գրում, վերարտադրում է բնության մի պատկեր: Այս նկարագրություններում գրեթե ամենուրեք գտնում ենք լույսը (պայծառը, շողքը, փայլը, կայծկլտոցը եւ այլն) եւ լուռը, որ հղացքի նշանակություն են ստանում. պայծառ են արեւածաղիկները, լուսավոր՝ ցորենի արտը եւ տանձի ծառը, լուռ է ամպը, արեւը... Բնության ներկայությունը մարդուն հայտնվում է լույսի եւ լուռության միջոց: Աշխարհը երեսում է լույսի մեջ: Այն լույս է տալիս՝ «լույս աշխարհը», եության լույսով բռնված ու լուռ՝ այստեղ լուռությամբ կենում են տանձի ծառը, արեւածաղիկը, ճանապարհը, արեւը, արտը, «թեթեւ լինը»...

Հովիտի վերջին ներկան՝ Ռոստոմը («Տերը»), պարտավոր էր լինել «փոքր հայրենիքի» կործանման բոլոր մանրամասնությունների ակնատեսը: Նրան ենք պարտական բազմաթիվ կարեւոր դիտողությունների ու եզրահանգումների համար. «Այդ փոքր հայրենիքի,

փոքր հայրենիքում մարդու ազատության եւ օտար վայրերում մարդու անազատության ժամանակներն անցել էին. ոչ ոք այստեղ օտարության չէր քաշում, օտարը թերեւս մենք էինք, որ մեր հին ժամանակներից ընկել էինք նոր ժամանակներ»<sup>12</sup>: Ներկայության հովիտը՝ փոքր հայրենիքը, տեղն է մարդու ինքնության, նրա ազատության: Մարդու ինքնությունն անբաժան է փոքր հայրենիքից, նրա տեղից ու ժամանակից, սահմանափակված է նրա շրջանակով: Լինել՝ նշանակում է լինել այստեղացի: Աշխատել այստեղ, աշխատանքով ստեղծել այս տեղը եւ աշխատանքով ամփոփվող համակեցության, աշխատանքի ծավալման ոլորտում՝ լինել ազատ: Եթե որոշ կտրական շեշտ տալու լինեմ, ապա կարելի է ձեռնկերպել ավելի հստակ. ազատ լինել՝ նշանակում է աշխատել, ներգրավված լինել տեղանքն ավարտուն դարձնելու գործի մեջ: Այնիչ գոյի հետ ամենավաճառության կորստին հետեւում է տեղի, բնիկության, ազատության, ինքնության կորուստը: «Երկրախույզերը եկել մեր սարերում ծակիչը դրել, երկիրը ծակում էին: Անհայրենիք ժողովուրդ է, այս վայրենի օտարության մեջ էլին նեղվում, իրեց տերուտնօրեն էին գում... »<sup>13</sup>: Ոչմիտեղացի լինելը չգոյությունն է հենց, բացակայությունը ներկայության փակ շրջանից: Կարիք կա՞ ընդգծելու, որ անհայրենիքությունը, բնիկության կորուստը ուղեկցվում են, ավելի ճիշտ՝ առաջնորդվում են տեխնիկայով: Երկրախույզերը խախտում են տեղանքի ավարտունության սկզբունքը, ծակում ու քանդում են երկիրը՝ որին հետեւում է նվիրական ոլորտի կազմալուծումը, համահարթեցումը: Ռոստոմն ինքը վերջին ազատն էր («Իմ ազատ ախպերը»<sup>14</sup>):

#### ԱՆՅԱՍԿԱՆԱԿՆԵՐ

Վաղուց է նկատված, որ «Անիծոր»ում ներկա են Մաթեոսյանի գրականության բոլոր հիմնական թեմաները: Տեսանք, որ այստեղ արձանագրված է տեխնիկայի մուտքը: Ավանդակի անորոշ, անհամարձակ (անհամարձակ՝ վտանգի ահագնության առջև) անհանգստությունը հռետորական բացակասելու միջոց հստակորեն ձեռնարկում է. «Ճրագթաթ ծակը փայտ է եղել, հասկանում էք»: Տազնապը նշմարվում է անզամ այնտեղ, ուր շարադրվում են գյուղի հաջողությունները: Տազնապի նշաններն են թե՛ տեխնիկայի մերժումը. «Չեմմաչափը Այստեղ ոչինչ է»<sup>15</sup>, թե՛ խուսափողական շեշտով վնասագրեծվող հակադրությունը. «...ասում են, թե դժվար է Նույն ժամանակահատվածի մեջ տեղավորել հողագործի ու սավառնորդի արհեստները»<sup>16</sup>: Այսուհանդերձ զարգացումը թվում է հնարավոր եւ գյուղն, իհարկե, զարգանում է: Սակայն հիմնական իրադարձությունները ծավալվում են Անտառամիջոց դուրս, գյուղը աշխարհից բաժանող սահմանից ակոխ: Սա արդեն հուշում է՝ եկել է գյուղի ինքնուրույնության, ինքնաբավության վերջը: Ավելի կարեւոր է դառնում ելումուտը, գյուղ- աշխարհ- գյուղ երթուղով անցուղարձը: Սահմանից ակոխն է, որ որոշակիանում է տեխնիկականի ներկայությունը, հստակվում են նրա ներկայության առանձնահատկությունները, գուշակվում են հետեւանքները: Ճանապարհորդների թվում են Գիքորն ու Ալխն, Արայիկը, Գոմեշը, դատարան գնացող հովիվները:

Ղազախ՝ ցորենի գնացած Գիքորը տեսնում է կոմբայնի, տրակտորի, մոտոցիկլետի եւ ուրիշ բաների միջնորդությամբ փոխակերպված կյանքը՝ «հեշտ կյանքը»: մարդիկ փոխված են, ավելի շատ՝ պարապ, աշխատանքը քնացել է, դրան հակառակ՝ հացը շատացել է այլև: Անհասկանալի է, բայց եւ վճռակարգ են անընդունելի, մերժելի: Բայց առաջին ճամփորդը Չավենն էր, նրան են առաջին միանշանակ ու անբեկանելի եզրահանգումները: Քաղաքում «Օթելլոյի ցերեկային ներկայացումից» ավելի տպավորիչը Ծառուկյանն էր՝ հանձին նրա ներկայացող նորը: «Ծառուկյանի հինգ թիզ հողը քիչ առ քիչ, կարող տախտակի չափերով, տրված էր կոտեմիկին, սամիթիկին, թարխունիկին...Այդ հողակտորին նայելով մարդ մտածում էր, որ սանտիմետրերը դառնում են հեկտար»<sup>17</sup>: Բնության ու մարդու խորին մերձավորությունն անհետացել է, նոր մարդու նպատակը տիրապետությունն է: Տեխնիկական միջամտությունը, որ միջնորդում է բնության ու մարդու հարաբերությունները, անխուսափելիորեն իր իրագործման եղանակը, Չավենի բառերով ասած՝ հաշիվը է պարտադրում այդ հարաբերություններին: Բնությունը ոչ միայն հաշվելի է դառնում, ինչպես ճրագթաթը՝ միլիարդ, այլեւ հաշիվը՝ առաջնային: Ավարտուն բնությանը հաջորդում է բնության ավարտը: Բնության իսկությունը փոխարինվում է հաշվով, ինչպես մարդը՝ կենսագրությամբ: Ծիշտ Աղունի ասածի պես. «Ամեն մարդ էս է դառնում ինչ որ ուզում է»<sup>18</sup>: Մարդու ինքնությունն այլեւս իրականացվում է իբրեւ անհատական ծրագիր, նախագիծ: Այն ուղղված է դեպի ապագան եւ քիչ առ քիչ իրագործվելով՝ վավերացվում է զանազան փաստաթղթերով (պատվոգիր, գովասանագիր, հողված եւ այլն), որ արհիվ է կազմում: «Հաշվապահ եք, հաշվապահ... Ձեզ հետ գլուխ դնել չի լինի, մեղալ եք հավաքում, պատվոգիր եք հավաքում...» եւ առավել անհասկանալի «...կենսագրությունն եք հավաքում ու դառնում տեր»<sup>19</sup>: Կյանքի նախագիծը իշխանության նախագիծ է:

#### ՈՐ ՄԱՐՄԻՆ

Արդիականի դրսեւորումներից մեկն էլ՝ դարձյալ անմիջապես անընդամենն տեխնիկային, նոր մարմինն է: Շատ ավելի ուշ, առաջացած տեխնիկականացման արդեն ակնհայտ կողմերից մեկը՝ մարմնի ձեռքբազատումը աշխատանքի, սովորությունների, վարքի կանոնների կազմավորած շարժումներից, կձեռնարկվի այսպես. «...խոտհարքից երեւում է գործարանի ծուխը. սեւ, դեղին ու սպիտակ՝ ձորից ելնում, կծկվում, ծավալվում, հալվում ու տարածվում է - նրա շոգ մշուշը ամբողջ հորիզոնը սվաղել է. քաղաքը նաեւ իրենց՝ հենց ժողովրդի մեջ է՝ այդ առջիկների ու տղաների հագուստի, շարժումների, սանրվածքի. տղաները շատ ավելի ֆուտբոլիստ են քան խոտ հավաքող, առջիկները շատ ավելի հավաքելու պարային ձեւ են անում, քան հավաքում...»<sup>20</sup>: Բայց արդեն «Բեռնածիբ»ում գետափի որձաքարերին մեկնված Վիթխարին իր հետ բերել էր այդ թեման: Պատմվածքից պատմվածք տեղափոխվող, տարբեր մարդկանց դեմ երբեմն հեռվից, երբեմն մոտիկից հայտնվում է գյուղական բնակարգ խաթարող կանացի կիսամերկ մարմինը: Կնոջ մարմնից, նրա գայթակղությունից է՛լ ավելի, թվում է, անհանգստացնում, տազնապ է հարուցում պարապ, հանգստացող մարմնի ամկայությունը, գոյության իսկ հնարավորությունը:

Նույնիսկ առանց գործիքի կատարվող աշխատանքը, ասենք՝ կիթը, եւ ուրեմն կենդանու ներկայությունը, թելադրում է որոշակի կեցվածք, շարժումների հերթականություն, տեղություն ու ռիթմ: Գործիքով կատարվող աշխատանքը նույնպես՝ կրկնվելով ու տեւելով, տարիների հետ առանձնահատուկ գծագրությամբ է օժտում մարմինը, կրթում է այն: Գերանդին ու մանգաղը, մուրճն ու ուրագը, երկանքն ու իլիկը սոսկ գործիքներ չեն՝ ձեռքի տակ լինելու եւ անհրաժեշտ պահին գործի դրվելու: Ավարտուն հանդի, տան կարասիի, մարդու մարմնի մեջ նրանք ներկա են: Բայց եթե մի կողմից մարդ-գործիք աշխատող զույգը անընդմեջ է բնության տարերքին՝ բնության խնամքը ստանձնած, եւ կարող է իր միասնությամբ աշխատանքի մեջ կատարելության հասնել, ապա մյուս կողմից՝ աշխատանքը անմիջականորեն մարդու կամ կենդանու ուժի վատնում է, հոգեցուցիչ, հաճախ ուժասպառ անող ճիգ ու ջանք: Մշակի մարմինը կաշկանդված է անվերջորեն կրկնվող միապարզապ շարժումների անընդմեջի հետքերով: Պարզապես քայլելու (զբոսնելու) կամ հանգստանալու համար հնարավոր չէ թթափել այդ բեռը: Հանգիստը որպես ինքնուրույն մարմնական փորձառություն բացակայում է: Մարմինն, այսպիսով, անբաժան է տեղանքից, կրում է աշխատանքի հետքերն ու հնարավորությունները: Սրան հակառակ, օտար, «անհասկանալի» մարմնի մուտքը խախտում է տեղանքի տարածական հավասարակշռությունը: Այդպես անհասկանալի են թզուկի թիկնապահները («Տերը»), «...կաշվի բաճկոններով բաճկոնավորված երեք անհասկանալի գոյություն» ում չգիտես հանցագործ համարյա, թաքուն միլիցիա թե սպորտմեն»<sup>21</sup>, ի միջի այլոց՝ պատրաստ ամեն պահի ուժ գործադրելու: Բռնություն է Վիթխարու ներխուժումն Անտառամիջի բնապատկեր, իսկ «Տերը» ում նրա ամկայությունն իբրեւ սպառնալիք միանգամայն հստակ է: Անհասկանալի եղանակով կազմակերպված անհասկանալի մղումներով

մարմին: Միջավայրի ներդաշնակությունը խախտվում է մարմնի չափերի անհեթեթությամբ, կեցվածքի անկաստությամբ, գծագրության ու տեղաշարժի սպառնալի անկանխատեսելիությամբ: Այս նոր մարմնի կարեւոր հատկանիշը խոսքի պակասությունն է, գրեթե բացակայությունը: Վիթխարին միշտ լուռ է: Եթե գոյի հետ անչլածությունը մարդուն լեզու է տալիս, ապա Էությունից օտարումը նաեւ օտարում է լեզվից. «դե նրանց ճակատին էլ պարապություն է գրած, անոշ,- ասաց,- գրած է, որ պտեն քաղաքացի ու պարապ ըլիլ, իրենք ի՛նչ անեն, գան կո՛վ կթեն, կոփի լեզուն ինչ են հասկանում՝ որ գան»<sup>22</sup>: Բնության լեզուն իմանալը մարդուն լեզու է տալիս, իսկ նրա կորուստը նաեւ «դեմքի, խոսքի, խելքի» կորուստ է: Ուրեմն լուռը այստեղ ավելի վաղ ընդգծվածից տարբեր իմաստ ունի: Լուռը, լռիկը, անշուկը, անծայնը, մուսնը, համրը, պապանձվածը բազմիմաստ մի հանգույց են կազմում: Այս հղացքը առանձնապես կարեւոր նշանակություն է ստանում, քանի որ առնչվում է գրողական արարքը որոշադրող ստանձնումին. «Ուզում եմ տեսնել՝ այդ ապին իսկապե՞ս գրաստ է, նրա հոգին իսկապե՞ս համր է »<sup>23</sup>:

#### ՊԱՅՊԱՆՈՒՄ

Տեխնիկականացման աղետալի ընթացքի դրսևորումներին մեծապես տարբեր իրադրություններում կհանդիպենք «Խումհար»ում եւ «Տերը»ում, բայց արդեն «Գոմեշ»ում մեզ հետաքրքրող նյութը բռնված է ողջ հնարավոր խորությամբ ու բազմապիսուքությամբ:

Անտուն, անօթեան, բնագուրկ ու ակունքներից օտարված տարերը ու արարածներ, ոչմիտեղացի մարդ՝ ապավինած տեխնիկային, մարդու ու բնության ուժերի «զորահավաք»։ «Հայտնի էր, թե ովքեր են նրանք, որտեղից էին գալիս այդ լճի ջրերը, որտեղից էր բերված ավազը, ինչից էր հյուսվում ու գալիս-մտնում խոհանոցի վառարան էլեկտրահոսանքը եւ որտեղից էին սնվում նրանց ուղեղները՝ որ կարողանում էին գնդել փափուկ ենթագիտակցություններ... Նրանց զգայարաններում՝ այդ լիճը ճիշտ տեղին էր բացված, ավազը հարմար էր փռված, հեռու դաշտերում մեքենաները հաց ու ձկնկիթ էին անում, բժշկուհիների սպիտակ գունարտակները խածում էին երեխաների թմբլիկ թեւերը, դեսպանները թարմ թաշկինակներ էին խորում բաճկոնների գրպանները, գազամուղները գազ էին քշում տափաստաններով ու կիրճերով...»<sup>24</sup>: «Նրանց զգայարաններում» աշխարհը հենց կազմված է իբրեւ այդ եղանակով ի դեպ բերված բաղադրիչների համադրություն: Անտես սկզբունքին հնազանդ՝ գունարտակներ են կազմում ու պատրաստ են ի գործ դրվելու բուժքույրեր ու դեսպաններ, մեքենաներ ու եռանդի աղբյուրներ: Թուլեք կափարիչի տակ, մետաղյա խողովակների մեջ, ասֆալտի ու բետոնի շերտով ծածկված, կալանված է բնությունը, վերադասավորված ըստ անձանոթ ու անհասկանալի սկզբունքի: Սրանք թվում է ինքը՝ մարդը: Երկիրը ոչ թե խնամվում է, այլ բզկտվում, կորզվում, շահագործվում, փոխակերպվում ու տեղափոխվում պահանջվող ուղղությամբ՝ գործարան, Սպանդանոց եւ այլն: Այս պատկերի ցանցով ծածկված, դիմակավորված է հայրենիքի դեմքը՝ տեսարժան վայրերի հավաքածու զբոսաշրջիկների համար: «Բնապաշտությունը» հերթական պարապ անունն է, եւ գոմեշի հղիացումը ընդամենը սփոփանք պիտի լիներ ընթերցողի համար, եթե չունենար ուրիշ նշանակություն: «Գոմեշը» սկսվում է հետեյալ պատկերով. «Սարի գլխին մի կտոր սպիտակ սառույց կար, սառույցի վերելը խանձարուրի կապերը քանդում էր մի փոքրիկ ամպ: Ամպի տակ հրճվում էր արտուտիկը, իսկ ամպի վրայով, նախիրների վրայով, բազեի, սարերի, ուրթերի, ուրթերի և անտառների վրայով ուրիշ աշխարհների մաքուր քամիները հուրհրալով տանում էին մի մեծ արեւ»<sup>25</sup>: Տարիներ անց Մաթեւոսյանը կձեւակերպի «ստեղծագործական սկզբունքը» այն արվեստագետների, «որոնք նախաստեղծ քառուր տեսքի ու հավասարակշռության են բերում՝ իրենց վերաստեղծվող աշխարհից վտարելով վթարային հնչյունը, գույնը, ձեւը, ասես նույնիսկ վախենալով վթարային իրավիճակի ընկալումից եւ առավել եւս արտացոլումից»<sup>26</sup>:

Այստեղ մեզ հետաքրքրողը «ստեղծագործական սկզբունքը» չէ, այլ նրա գործադրումը իբրեւ սկզբունք ձեւակերպվելուց տարիներ առաջ: Գրության («Գոմեշը») սկիզբը ազդարարող բնականորեն սկզբից եւեթ իր մեջ է առնում, «հավասարակշռում է» բոլոր հնարավոր երեւումները, վնասագերծում վթարները: Հայրենիքի պատկերը՝ ապահով տեղավորված «կայուն» աշխարհի մի անկյունում: Գոմեշի հղիացումը հաստատում է այդ աշխարհի անսասանությունը. «Աշխարհը դարձավ աշխարհ... Աշխարհը կայուն էր նրա գնացքի տակ...»<sup>27</sup>: Տեխնիկականացման կործանարար միջամտությունն այսպես առկախվում է պահպանումի (ստեղծագործակա՞ն) սկզբունքով:

«Գոմեշում» գտնում ենք գրողի եւ գրության երկրորդ կերպարանափոխությունը: Անտառամեջի փոխակերպվումը Ծմակուտի սոսկ անվան փոփոխությունն չէ, անշուշտ: Ծմակուտը փորձում է իր մեջ առնել այն, ինչ Անտառամիջում տեղ չունեի, նրա սահմանից դուրս էր՝ անհասկանալի ու տազնապահարույց օտարը (տեխնիկականը): Նորը, նոր ժամանակը պահանջում է գրողի, ինչպես գրության, «ընդլայնում»-այլակերպում: Հարց է սակայն, թե պահպանում-այլացում ներհակ մղումների ճնշման տակ ինչ եղանակ է ստանում ինքը՝ կերպարանափոխությունը: Ինչէն, այսպես դարձյալ լծորդվում են տեխնիկան ու Հայրենիքը, այս անգամ կործանող ու պահպանող սկզբունքների բախմամբ: Արդյունքն առաջինի չեզոքացումը, վնասագերծումն է երկրորդի միջոցով:

#### ՀԱՐՄԱՐԸ

Վերը մեջբերված լճափի պատկերի մեջ առաջին անգամ գործածվում է «հարմար» բառը, որով անվանվում է իրականության բացահայտման նոր ձեւը: Տեխնիկականը դադարում է առանձին գործիքների կամ ցաքուցրիվ հաստատությունների՝ ավանդական միջավայր մուծվող եւ այն խզող, խախտող միջամտություն լինելուց: Դառնում է գերակշռող, գերիշխող առկայություն ու միջավայրի վերակերպարանավորում: Բնության նախաստեղծ ամբողջը տրոհվում է բաղադրիչների՝ ձեռնածվելու, համակարգվելու ու վերահամակարգվելու ենթակա առարկաների, որոնց իրականությունը վավերացվում է մարդու զգայարաններում: Նոր միջավայրում տնօրինում է հարմարը, որի առջեւ իսկականը ընկրկում է ամենուրեք. վերանում է ցորենի կրեւիկ տեսակը, իսկական կոնյակը, մահանում է թեղին... Հարմարության առջեւ պատասխանի է կանչված նաեւ Արմենակ Մնացականյանը («Խումհար»): Համամոլորակային ընդգրկմամբ՝ հարմարությունը վերակերտում է մարդու զգալու, մտածելու կերպը, միջանհատական հարաբերությունները, բնության ուժերը: «Հարմար են այս գորգերը, ապակիներից դենը՝ փափուկ ձյունը, մարմարե այս աստիճանները, կոշիկների այս չոր քնքշությունը: Հարմար են Պաուստովսկին, սկանդինավյան թախիժը, Անգլիայի Էլիզաբեթ թագուհին»<sup>28</sup>: Հարմարի իշխանությունը անդեմ իշխանություն է: Իշխողները չեն երեւում ու չեն անվանվում:

Հին ու նոր ժամանակները, իրականության բացահայտման հին ու նոր եղանակները գրության մեջ բռնված են գոյակցության համեմատաբար ամփոփ միջավայրերի նկարագրությամբ, որտեղ նկարագրելը պետք է հասկանալ գրեթե ուղղակիորեն՝ գրվում է նկարը, պատկերը: Դարձյալ կարեւորը համատեղ գոյության եղանակն է, աներեւոյթ սկզբունքը՝ այս կամ այն դեպքում համակեցությունը որոշադրող: Երկու եղանակ՝ միանգամայն տարբեր, չասելու համար՝ հակադիր: Ընտրում եմ մեկական նմուշ այնպես, որ որոշ իմաստով իրադրությունը լինի ընդհանուր: Երկու ճաշի սեղան՝ մեկը ջարդացի բակում, մյուսը՝ կինոյի տան ռեստորանում: Առաջին հատվածը «Ջաղաց»ից է, եւ պատկերի ամբողջականությունը պահպանելու համար այն միացնում եմ բակի պատկերին, որ նկարագրված է մի քանի էջ առաջ: «Երիտասարդը գառիվորը ելավ, եւ հիմա նրա դեմ Նոյն նկարեն պատկերներն են՝ խաղաղ կանգնած ձին, ուռիների շարքը, գառների կույտը, գետի կինը եւ, գետաջարե ցանկապատի եզրով, արեւածաղիկների շարքը:

Արեւածաղիկների շարքից դենը Օհան ամու ջաղացն է: Երիտասարդը ետ տարավ ցանկապատի հյուսածո դուռը եւ այդ տաք, լուսավոր, այդ խնամված, մաքուր ու գեղեցիկ բակը մտավ կարոտով ու ականածանքով: Նրան սիրելի էին եւ գետաքարե այդ ցանկապատը, եւ հյուսածո դուռը, եւ ջաղացահոսան դարավանդի տաք լուսավոր պատն ու պատամիջի մաքուր խաչքարը, եւ ծաղկած լողուտը, արեւածաղիկները, վարունգի ածուները, սիմիսդրի թփերը, եւ խաչքարի կողքին՝ դարավանդի պատին հենած երեք հատ հին, բարակած ջաղացքարը: ...Պա թրիստուներեն գեղեցիկ սուփրա էր - տղամարդկանց թվով կավե ամաններ՝ յուրաքանչյուրի մեջ մեկ ձուկ, կենտրոնում կավե ամանի մեջ՝ տասը հատ ձու, կավե աղադրիի մեջ աղ, կավե ափսեի մեջ՝ պանիր, սպիտակ թաշկինակի մեջ՝ լավաշ: Հարսը ելավ սփրոցի վրայից, ծերունու ձեռքից առավ համեմունքի ծղիկը, երկու դարսով դրեց սփռոցին»<sup>29</sup>: Երիտասարդը՝ Ավոն, Ա. Իսահակյանն է, «Հովի. Թումանյանի ընկերը», բանաստեղծը:

Մյուս մեջբերումը «Խումբար»ից է, մի կտոր ռեստորանի երկար հատվածից: «Ծնոտս հենած ձեռքիս, խաղաղ այրվող ծխախոտը ճակատիս մոտ՝ ես մտածում էի: Իմ ճակատը գեղեցիկ էր, իմ աչքերը մտածում էին, իմ մատները գունատ էին, իմ ծխախոտի թմրանյութը քամված էր, կնգուղածե սպիտակ անձեռնոցիկը իմ ամսեի ձախ կողմում հանգիստ կանգնած էր, Օսվալդ Օգերովը մոտեցրում ինձ հարգում էր չափավորապես, ես իր նկատմամբ ամենց հարգանքի չեմ, մենք երկուսս էլ բարեկիրթ ենք այնքան, ինչքան մաքուր է այս ափսես, այս անձեռնոցիկը, չճանգոտվող պողպատից բուլբ դանակը,- քունքս շփելով ես մտածում եմ: Պատերազմից հետո ծնված տղաների խումբ եկավ, անկաշկանդ ու չափավոր անփույթ տեղավորվեց հարեան սեղանի չորս կողմերի կաշվե չորս հատ բազկաթոռին, պատվիրեց որոշակիորեն չորս հատ հարյուր գրամ լեհական օղի, երկու շիշ հանքային ջուր, մտով ու լրբիով չորս բաժին սառը խորտիկ եւ սուրճով պաղպաղակ»<sup>30</sup>:

Այստեղ էլ ներկա է բանաստեղծը՝ Սիմոնի բանաստեղծ Արմենակը՝ միաժամանակ տեսարանի մասնակիցն ու դիտողը:

Մի դեպքում պատկերը բնորոշվում է լուռ, խաղաղ, լուսավոր, տաք, խնամված, մաքուր, գեղեցիկ, պայծառ ածականներով, իսկ երկրորդ միջավայրը նկարագրվում է խաղաղ, գեղեցիկ, գունատ, հանգիստ, չափավոր, մաքուր, բարեկիրթ, չճանգոտվող, բուլբ եւ այլ որակումներով: Միջավայրը կազմող առնչությունների էլեւէջումներին հետամուտ հայացքը որսում է ոչ միայն բնորոշումների կազմի, այլեւ «նույն» բառի իմաստի կտրուկ փոփոխություն՝ ուղեկցվող, երկրորդ դեպքում, գունային փնջի գույնով ու չափավորմամբ, նախնական ուժի, մղումի կորստով: Եթե առաջին միջավայրը ներդաշն է («Չխախտելով բակի այդ ներդաշն լռությունը»<sup>31</sup>), ապա երկրորդը՝ չափավոր («բարեկիրթ ենք այնքան ինչքան...»): Առաջին պատկերը բակ է: Ջաղացի բակում՝ սփռոցի շուրջ, տղամարդիկ: Հարսը հեռացել է, բայց ներկա է, քանի որ հացը ինքն է գցել, սուփրան ինքն է բացել: Այդ բացվածության մեջ են երեւում սեղանակիցները, կավե ամանները, լավաշը, աղադրիս, համեմունքի ծղիկը: Սեղանը անկարելի է առանձնացնել բակի մնացած իրերից, ջաղացից, ցանկապատից, ոչխարների կույտից, գետից: Պատճառը միայն այն չէ, որ սեղանին այդ ոչխարների պանիրն է, գետի ձուկը, ջաղացի հացը: Աշխատանքի գործիքների նման կավե ամանները եւ ներկա մյուս իրերը մարդկանց հետ ներհայտ ձեւով կապված են տեսական գործածությամբ, համատեղ գոյությամբ, վարքի կանոններով ամրագրված հարաբերություններով: Տարածությունը հագեցած է եւ կազմավորվում է իրերի, կենդանիների, բույսերի ու մարդկանց միջեւ գործող աներեւույթ կապերով, լարումներով, մղումներով: Ծերունին ականջ է դնում ծիծեռնակներին, վարունգներին, ծաղիկներին: Արեւածաղիկի պայծառ երեսով հմայված մնում է. «Խոտը՝ խոտ ես, բայց նայում ես, չէ: Նայում ու տեսնում ես, չէ: Նայում ու ի՞նչ ես մտածում, ի՞նչից ես մտածում, քու միջից ո՞վ է նայում, մեր մասին ի՞նչ է մտածում: Տե՛ր աստված»<sup>32</sup>: Համակեցության այս ավարտուն բացատրում ներկայությամբ շաղկապված արարածներից ու իրերից անկարելի է գատել որեւէ բան: Կեցվածքը, շարժումները այնպես անմնացորդ ձեւով է հղում ամբողջին, որ գրեթե զուրկ է գուռ ենթակայական որեւէ հանգամանքից, որպեսզի հնարավոր լինեք անջատել միջավայրից, մասնավորեցնել այնպես, ինչպես դա արվում է երկրորդ տեսարանում. «Ծնոտս հենած ձեռքիս...»: Բայց այստեղ էլ կեցվածքը, շարժումները միջնորդված են, կորցրել են իրենց անսեղությունը: Պատմողը իրեն պատկերացնում ու պատկերում է, ինչպես վաղօրոք տեսած ծանոթ պատկեր, լուսանկարում կամ կինոնկարում («տեխնիկական պատկեր») արդեն մի անգամ պատկերված-ներկայացվածի նման: Ուստի հայտնի է՝ «Իմ ճակատը գեղեցիկ է...»: Կինոյի տանը ներկայությունը փոխարինվում է ներկայացվածության առկայությամբ, իրականությունն ու կեղծը կազմում են անտարանջատելի խառնուրդ, որ անպտուղ է, սուտ, անարու, անկյանց: Եթե առաջին դեպքում «Երիտասարդը լսում ու նայում, մի տեսակ՝ ընկալում էր այդ խնամված բանջարանոցը - մաս-մաս, մաս առ մաս՝ արեւածաղիկները, դդումը, խաչքարը, դարավանդի խնամքոտ պատը»<sup>33</sup>, երկրորդ պատկերը հենց մասնատված է: Արմենակը գրում է մաս առ մաս այդ խճանկարը՝ սրա հանգույցներում փնտրելով ու կեղծիքից զատելով իսկականը: Հացը, օրինակ, առանձին է, կարելի է զատել ամբողջից, որսալ իր միայնակ իսկությունը՝ գրել հացի հացությունը. «Մաքուր սփռոցին, իր սառնության մեջ հանդարտ՝ կեցած էր սպիտակ գինին, դանդաղ ալիք էր տալիս թառափի բուրմունքը, կամացուկ այրվում էր աշորա հացի ուժը, Իմամիտ պայծառությամբ ինքնամատուցվում էր սպիտակ հացը...»: Այստեղ է՝ եւ կարելի է որսալ ժամանակը, իր հետ էլ՝ վաղանցիկ մանրամասնը: Ամեն ակնթաթը փոփոխվող մարմինը, որը ձեռքազատվել է սովորությունների, ավանդական շարժումների պատմունակից, մատնում է իր թաքուն ընթացքը. «ոչինչ բանի վրա դանդաղ սպառվում էր Տրապիզոնի արեւային թուրքները եւ վայրկյան առ վայրկյան թուլանում էր այդ կնոջ հուսանուտը, մարում ու պառավում էր հրճվանքով լեցուն նրա մարմինը, ինչպես ժամանակն է հեռանում, ինչպես հոգնում է արյունը...»<sup>34</sup>: Այստեղ միջոցը ավելի հարմար է ազատ հաղորդակցության, անցուղարձի համար: Չկան տարածությանը կոշտ կապակցվածությունն հաղորդող կայուն հարաբերություններ: Դրանք կարող են ամեն պահ հաստատվել, ապա ջքանալ եւ այլն:

### ՀԱՅՐԵՆԻԻ ՊՍՅՈՒՄԸ

(Հայրենիքն իբրեւ պատկեր)

Փոքր հայրենիքի՝ Ծմակուտի եւ մեծ հայրենիքի՝ Խորհրդային Միության միջեւ ինչ-որ տեղ գտնվում էր Հայրենիքը: Ո՞րն էր այդ տեղը: «Խորհրդային Հայաստանը», շեշտը դնելով «Խորհրդայինի» վրա, բավարար չէր հայրենիքի իրականությունը վավերացնելու համար: Խորհրդայինը որպես Հայաստանի ինքնության հնարավոր տարագ կամ խորշ, որպես նրա օրինականացման հնարավորություն մնում էր գաղափարաբանության ոլորտում: Այնինչ հարցումն իր պատմությամբ հղում է գրականության, ավելի ճիշտ՝ գրության:

Իր ինքնակարգ գրելիս, եթե նմանեցնեմ հետեւյալ մեջբերման ձեւակերպմանը՝ իր ինքնակարի պատահիկներն ի մի բերելիս Մաթեոսյանը նման դեպքերում անխուսափելի է. Տոլստոյից ու Հովի. Թումանյանից բացի, ի թիվս ուրիշների, անդրադառնում է Նաե Մ. Սարյանին. «Հետեղեռնյան ու երկրի խորհրդայնացման հատկապես առաջին տարիների սարյանական յուրաքանչյուր ու բոլոր կտավները ձգտում են միայն մի բանի՝ կայուն ներդաշնակության, հավասարակշիռ այնպիսի ներդաշնակության, որ կործանված մեծ ամբողջի պատահիկներից ի մի եկող Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության գերբը, որի նկարիչը ի դեպ հենց Սարյանն է, ասես թե հառնում է նրա յուրաքանչյուր բնապատկերից, ինքը Սարյանն է ասես նախագահ ողջ Հանրապետության՝ նրա բոլոր բնակիչների ու լանդշաֆտի վրա»<sup>35</sup>: Ընդգծենք հատկապես բնապատկերը, որ մեկնաբանվում է

իբրեւ Յայրենիքի պատկեր. իբրեւ մի տեղ (եւ միակ տեղը), ուր Յայրենիքն ի մի է բերվում, կառուցվում-հաստատվում ( իբրեւ պատկեր): Բայց թվում է, ինչ էլ նկարեր Վարպետը, տեղծագործության մեջ ներհայտորեն գործում էր հայրենիքը պատկերելու- հաստատելու մղումը. ծաղիկները՝ Յայաստանի՝ ծաղիկներն են, լեռները՝ Յայաստանի՝ լեռները եւ այլն: Թերեւս հարկ է հենց այստեղ փնտրել Սարյանի «մոնումենտալության» ակունքը. հայրենիքի պատկերի՝ իբրեւ կոթողի, հաստատում:

Իր հերթին հայ գրողը պատկերացնում եւ ներկայացնում է («Ե՛վ ինձ վրա: Ե՛վ ձեզ վրա») Յայրենիքն իբրեւ «Մեծամոր», իբրեւ գրություն. «Այս այսպես է ու կմնա այսպես, քանի դեռ բետոնը տասը կանգուն շերտով մինչեւ վերջին թիզը չի ծանրացել այս ցնորական երկրի կավին: Ե՛վ ինձ վրա: Ե՛վ ձեզ վրա»<sup>36</sup> (ընդգծումն իմն է՝ Յ. Բ.) հատվածում, որով ավարտվում է «Մեծամոր»ը: Ու՛մ կամ ինչի՞՞ է հղում այդ «այս»ը: Հղումի երկիմաստությունը՝ «ցնորական» մի կողմից եւ «կավին» մյուս, նաեւ հեղինակի եւ ընթերցողի ներգրավումը գրության պատկերի մեջ ոչ միայն աներկիմաստորեն հերքում է «այս»ի եւ հորիորդային Յայաստանի նույնացումը (արդեն վերնագիրն է մերժում այդ հնարավորությունը), այլեւ, կարծում եմ, աներկբայորեն հաստատում այն ենթադրությունը, որ «ցնորական երկիրը» հենց «Մեծամոր»ն է, գրությունը: Գրությունն է Յայրենիքի (իբրեւ պատկերի) առավել վավերական ներկայության տեղը: Այս մասին ավելի մանրամասնորեն կխոսվի հաջորդ բաժնում:

Յայրենիքի պատկերի ծանոթ օրինակ է «Յայաստանը թանգարան է բաց երկնքի տակ» հաստատումը: Պատկեր-միթոս, պատկեր- գաղափարաբանություն, որով հաստատվում-վավերացվում էր հայրենիքը: Այստեղ գաղափարաբանությունը ոչ թե ներկա եղողն է դարձնում «անտեսանելի» ու այդպես ինքնին հասկանալի ու ընդունելի, այլ բացական դարձնում է պատկեր ու որպես պատկերվող՝ իրական: Կամ կարելի է ասել՝ գաղափարաբանությունը «անտեսանելի» է դարձնում հայրենիքի բացակայությունը: Բաց երկնքի տակ գտնվող թանգարանը իր մեջ վարպետորեն միաձուլում է մշակույթն ու քնությունը, ժամանակավորն ու հավերժականը: Թանգարանի՝ «մշակութային արժեքների» տեսքով առարկայացած պատմությունը, հետզհետե ուժճանալով ու միաժամանակ բացվելով երկնքին, բռնում է ողջ երկիրը: Պատմությունը եւ երկիրը այսպես միատեղվում են այս պատկերում ու հղելով իրար՝ մեկը մյուսի միջոցով հաստատում իր հավաստիությունը: «Մեծամոր»ում Մաթեոսյանը քողագերծում է այս գաղափարաբանությունը, բառացիորեն ջարդում է այն, ինչպես կոլտեստության նախագահը՝ Արգիշտիի կարասները: Երբ պատմությունը սկսում է բոլոր կողմերից թանձրանալ, զսպաշապիկի պես կաշկանդելով անկարողության մատնել ներկան, հարկ է «մոռանալ» պատմությունը, չհիշել՝ Արգիշտիին, վերացնել՝ նրա կարասները: Յայրենիքը (իբրեւ պատկեր) անհնարին է առանց հորիորդային համակարգի: Այս համակարգի ներկայությունը Մաթեոսյանի գրության մեջ զգալի է առաջին հերթին գաղափարաբանական պարտադրանքի տեսքով: Համակարգի իշխանությունը գործում է, միջամտում է գրությունը հիմնականում գաղափարաբանական թելադրանքի ձեւով: Այս թելադրանքը դիմադրության է հանդիպում ոչ միայն, ասեսք, Արմեն Մնացականյանի կողմից («հումար») , այլեւ հենց գրության կողմից: Բայց այդ դիմադրությունն ուղղված չէ համակարգի սասանմանը: Համակարգի անշրջանցելիությունը գիտակցվում է հստակորեն, եւ դիմադրությունը կարող է մեկնաբանվել որպես համակարգի բարելավման ճիգ: Տեխնիկայի ներխուժումը կործանարար է հայրենիքի համար, բայց միանգամայն պատշաճ է Համակարգի ներսում: Համակարգի հնարավորությունը տեխնիկականի հնարավորությունն է: Արդի տեխնիկայի ծավալումը որոշակիորեն համակարգվելու ընթացք է ենթադրում, եւ փոխադարձաբար՝ համակարգի կազմավորումը անկարելի է առանց տեխնիկականացման հուղվույթի: Սրանք անբաժան են, որովհետեւ նույն սկզբունքի դրսեւորումներն են: Այսինքն՝ տեխնիկականի մերժելի այլությունը է՝ միանգամայն համակարգի այլությունը, որ մուտք է գործում Անտառամեջ տեխնիկական միջոցների, գործելակերպի ու մտածելակերպի տեսքով: Առհասարակ տեխնիկականացումը համամուրաբանային երեսույթ է, ուստի համակարգվածությունը լինելիության միակ եղանակն է թվում: Քանի որ հայրենիքը անծանոթ է համակարգման սկզբունքին եւ անկարող է ինքն իրեն համակարգելու, (ինչպես ինչ ժամանակ հայերը չգիտեին «նիգակից ու մարդուց վաշտ կապելու շատ մեծ գաղտնիքը»)՝<sup>37</sup>, ապա ստիպված է ապավինել Համակարգին:

Վերստին, համակարգը մեղմում է նոր ժամանակի կործանարար ընթացքը՝ ինքը լինելով նրա մարմնացումը: Հնարավոր՝ է հարմարվել այս ներհակ կացությանը: Հայ գրողին դա հնարավոր է թվում եւ այն էլ՝ պահպանելով «անխառն», «գուտ» հայկականությունը: Ինչպե՞ս:

#### ԳՐՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞նչու եւ ի՞նչպես է հնարավոր հայրենիքը համակարգի ներսում: Պատասխանը գուցե անսպասելի, բայց հստակ է. քանի որ եւ ճիշտ այնպես, ինչպես գրությունն է հնարավոր: Համակարգում գրությունը հնարավոր է եւ հայրենիքը պատկերել-գրելը գրության հնարավորությունն է: Խորհրդային Համակարգը չի բացառում «ճշմարիտ խոսք»ի հնարավորությունը: Այս կարելու հարցին գրողը անդրադառնում է բազմիցս: Մասնավորապես արդեն հիշատակված հարցազրույցում Մաթեոսյանն ընդգծում է, որ միայն ֆաշիստական վարչակարգն է՝ հագեցած ստով ու կեղծիքով, անկարող ծնելու իսկական գրականություն: Խորհրդային Միությունում խոսքի հնարավորությունը կասկածից վեր է, իսկ խոսքի հնարավորությունն իրականության հնարավորությունն է, «քանի որ երկրի վրա ինչ որ լինում է՝ լինում է նախ խոսքի մեջ»<sup>38</sup>: Եվ ընդհակառակը՝ կյանքն իր բնական տեսքով արդեն ինչ-որ չափով գրականությունն է, կյանքի երկությունը ասվում է (գրողի) խոսքով նրա լեզվի մեջ<sup>39</sup>: Այսպիսով, ակներեւ է կյանքն ու խոսքի (բանի) փոխադարձությունը, որի ակունքը, թերեւս, բանի (բանականության) ու աշխարհի նախաենթադրվող համաձայնությունն է: Գրությունն արարում է Յայրենիքը (իբրեւ պատկեր), որ երկրի վրա լինելու համար եւ լինելուց առաջ հարկ է որ լինի գրության մեջ: Որո՞նք են այն հիմնական ուժերը, որոնց ազդեցությունը մարմնավորում է գրությունը:

Վճռական է տեղանքի կազմավորող արմատական նշանակությունը: Հիշենք «Լոռին չպետք է վերանա երկրի երեսից» հրամայականը, այլ պետք է վերստեղծվի գրության մեջ: Գրողական արարքի բնորոշ, աշխարհագրական մյուս փոխաբերությունները՝ «ուզում եմ մի նոր հովիտ փռել» գրականության մեջ կամ «մի նոր բացատ բացել», որ գրությունը վերստին առնչում են տեղանքին, նույնպես պատահական չեն: Գրողի ինքնության փնտրտուքի բոլոր հանգրվաններում գրողական արարքը մտում է նույն հարազույցի շրջանակում գործող: Հողի մշակի, որն ինքը տեղանքից անբաժանելի է, աշխատանքը տեղանքի հնարավորությունների իրագործումն է, մինչեւ ավարտունությունը շարունակելը: Գրողական արարքը ծավալվում է նույն հունով. գրությունը կոչված է ի հայտ բերել, խոսքի մեջ արձակել տեղանքի զսպված, թաքուն հնարավորությունները: Գրությունն իբրեւ տեղանքի կրկնություն-շարունակություն: Ունկնդրել տեղանքը, ուշք ունել նրա ձայնին, գտնել այն ստոյ միակ ճշգրիտ բառը, գրել ինչ զգում է արելից լքված քարը, միայնակ տանձենին («Նյութի ենթագիտակցությունը»), գրել ձին, գոմեշը, բակը... Միաժամանակ տեղանքի ներփակ տարածության կազմակերպվածության եղանակը եւ կշռույթը խորապես պայմանավորում են գրության ծավալումի կերպը, դիտման եղանակը, հաստատում գրության պարագիծը: Այս տարածության փլուզումից հետո միայն հնարավոր է դառնում «Տերը» իբրեւ գրության աննախադեպ ընդարձակում, որ ուղեկցում է «ավերակների» մեջ դեգերող Ռոստոմի՝ տարածության նախկին պարտադրանքը թոթափած կամայական անցուղարձը: Միաժամանակ գրությունը, որ սկզբից ետե՞ր դեպի դուրս է ուղղված, ջանում է հեռանալ տեղանքից, ելնել նրա փակ տարածքից՝ կազմավորման նոր, տեղանքին անհարիր եղանակի հետամուտ: Մյուս կարելու ուժը համակարգն է իր մերժելի ու բաղձալի կողմերով. համակարգը որպես գաղափարաբանական

պարտադրանք, որ պետք է դիմակայել եւ լինելության եղանակ, որ պետք է յուրացնել: Դարձյալ կացությունը երկդիմի է. ջանալ վերարտադրել այն, ինչից փորձում ես խույս տալ: Գրելու հնարավորությունը հաստատելու, գաղափարաբանության սահմանած շրջանակը ընդլայնելու եւ այդպես գաղափարաբանական խոսքի սահմանները «յուրացնելու», նրա պարտադրանքը մեղմելու ռազմավարությունն իրականանալու զանազան եղանակներ է գտնում՝ հեգնանք, երկիմաստություն, նախադասության բարդացում եւ այլն: Գրությունը բարդանում է, թույլատրելի սահմանները ընդլայնում, թերեւս նույնիսկ «անհասկանալի» դառնալու գնով, ջանում է նվաճել, իր մեջ ամենել նոր, արտաքուստ, ավելի ճիշտ՝ վերուստ անտեսանելի, անգուշակելի տարածքներ: Համակարգն իբրեւ ցանկալի կարող է ներկայանալ նաեւ կարգավորման վերացական ձեւի, ասենք, վեպի ժանրի կամ ֆորմի ձեւով, որ գրությունը համառորեն փնտրում է ու չի գտնում: Գրության այս ձախողումը, ըստ երեւույթին, համակարգվելու անկարողությունն է, անգիտություն՝ նման «վաշտ կապելու մեծ գաղտնիքը» չիմանալուն: Եզրակացությունը՝ «գուցե առհասարակ հայրեն անկարելի է ճիշտ վեպ գրել»<sup>40</sup>:

Ինչ վերաբերում է գրության մեջ վերստեղծվող աշխարհը «տեսքի ու հավասարակշռության» բերելու սկզբունքին, ապա թե՛ «Գոմեշի» սկզբը հաստատող բնապատկերին համառոտ անդրադարձը, թե՛ Մ. Սարյանի խիստ բնորոշ եւ հեղինակի ինքնակարի համար նախատիպ հանդիսացող բնութագրումը հիմք են տալիս պնդելու՝ ամենպես իր մասնավոր կիրառության մեջ մենք գործ ունենք ոչ թե վերացական սկզբունքի, այլ հենց Հայրենիքի պատկերը հաստատելու, հավասարակշռելու ու հաստատուն պահելու հրամայականի հետ:

Այսպիսով կարելի է ամփոփել. գրությունը ծավալվում է Տեղանքի ու Համակարգի միջեւ, ջանալով համադրել այդ իրարամերձ բեւեռները՝ հյուսել, ի մի բերել Հայրենիքի պատկերը:

Անշուշտ սա այսպես է ավելի շատ գրողական հետախայաց ծրագրի հորիզոնում դիտված: Այլ հարց է, թե գրությունը որտեղ եւ որ չափով է հետեւում այդ ծրագրին եւ որտեղ հապաղում: Բայց ամենպես այս հորիզոնում է պարզորոշ երեւում գրության գաղափարաբանական ցանցը, որի հանգույցներում գտնում ենք տեխնիկայի ընդունման-մերժման ջրբաժան գիծը՝ կազմող տեխնիկայի ըմբռնման ընդհանուր ուղղվանկարը:

#### ՎԵՐՁԱԲԱՆ: ՆՈՅՅԱՆ ԲԱՐԴՈՒՅԹ

Իսկ հողը նույն կենսագրությունն ունի, ինչ հայոց՝ հազար անգամ մոխրացած, հազար մեկ անգամ կանաչած հողը, այստեղ մարդ ապրել է, այս ձորը եղել է մի բերրի հովիտ, մարդաշատ, ինչպես հայ հողի ուզածը կտորը: «Անիծոր» (1960):

Բաց սարերի, աշնան բացատավոր անտառների, թփուտ արեւոտ լանջերի, մինչեւ Լարվար ու Զոհի հովիտ ու հովտից դեռ աշնան մաքուր արեւի տակ ելեւէջող մեր հին, հազարիցս բնակեցված, մաշված երկրի պատկերի առջեւ մեր սիրտը բացվեց: Չգացինք, որ անչար, հաշտ ու խաղաղ լաց ենք լինում, արտասուքը թրջում է ծերացող մեր կոպերը եւ անքննադատ ու անչար ենք ընդունում նաեւ հեռու կիրճերում կուտակվող, խտացող ծավալվող գործարանային ծխի գոյությունը: «Տերը» (1980):

Հայրենի երկրի ամեն մի կտոր հող գտնում ենք արդեն բազմիցս բնակեցված: Հոգնած, մաշված տեղանքը չունի այլեւս նախնական բնականությունը, բայց եւ տեսական հետեւողական աշխատանքով հղկված, մշակված, քաղաքակրթված է: Մարդու եւ հողի հարաբերությունը, նրանց բարեկամությունը «Զետեփոնի ժամանակներից» ի վեր գրեթե անփոփոխ է մնացել նույն կաղապարի շրջանակներում, համակեցության նույն եղանակի մեջ: Վերաբնակությունների եւ ուրեմն՝ ասես պարբերական շրիեղելների անվերջ շղթա, տապալանային ռեժիմ՝ միշտ պատրաստ լինելու վերստին բնակեցնելու հայրենիքը: Մաթեմատիկան ինքն է իր պապի հիմնած գյուղը համեմատում տապալանի հետ, իսկ իր մասին էլ ասում, թե կարող է վերստեղծել հողագործության եւ անասնապահության երկու մեծ մշակույթները: Այսպես, տեղանքը եւ մարդու մարմինն իրենց մեջ կրում են վերաբնակեցման հնարավորությունը: Տեղանքն իր մեջ պահում-թաքնում էր ընդհատված պատմության հետքերը. վերաբնակիչներն այնտեղ գտնում էին տարածության կազմավորման նախնական ուղղվածից՝ մի խաչքար-սրբատեղի, գերեզմանատուն, արտ: Մնացած հմտությունները մարդը կրում էր իր մարմնում՝ «մի գույզ ձեռք... ու մի հայոց լեզու»<sup>41</sup>: Սակայն տեխնիկականացման համամոլորակային հողովույթը վերջնականապես սասանում է գոյակցության այս եղանակի հիմքերը: Տեխնիկական միջնորդավորմամբ վերանում է աշխատանքի հին տեսակը, ավելորդ են դառնում հին տեսակի հմտությունները: Նոր ժամանակի փոփոխությունների հորձանքը պոկում է մարդուն տեղանքից, արմատախիլ անում: Կորսվում է բնիկությունը, տեղացիությունը, լեզուն: Հարյուրամյակներ շարունակ տեսած վերաբնակեցման սկզբունքը կորցնում է իր գործունեությունը: Այն, ինչ անվանեցիկ ներկայության հովիտ կամ բացատ՝ փոքր հայրենիք, ինքնաբավ էր, եւ գրությունն այնտեղ տեղ չունեց: Գրությունը ծնվում է վերոհիշյալ հողովույթի մուտքով այդ հովիտ, վախճանի, ավարտի կանխագագամամբ եւ այն գրելու համար: Ի վերջո գրության մեջ փրկել հայրենի երկիրը կործանումից, չի՞ նշանակում հենց գրել այդ կործանումը: Գրությունն ավարտում է Հովիտը եւ՝ կրկնել-շարունակելով, եւ ավարտը, վերջը արձանագրելով: Գրությունն ավարտում է այդ ավարտը: Սակայն վերաբնակեցման հին եղանակի անվերադարձ կորուստը արձանագրելով՝ գրությունն ինքն է լծվում այդ խնդրի լուծմանը: Դիմագրավելու համար վերաբնակության շղթայի վերջնական խզումը՝ գրությունը հաստատում է Հայրենիքի պատկերը իբրեւ նոր բնակության հնարավորություն: Գրողն այսպես ստանձնում է բանի ու բնակեցման արարչական մենաշնորհի տնօրինությունը:

#### ԵԼԸ

Հայրենիք - տեխնիկա գաղափարաբանական զույգի այլակերպումների շղթան այսպիսով կազմում են հետեւյալ երեք օղակները:

- 1) Անտառամեջ (Անիծոր) - տեխնիկան իբրեւ միջոց - զարգացման, առաջընթացի գաղափարաբանություն:
- 2) Ծմակուտ - տեխնիկան անհասկանալի ու տագնապահարույց - պահպանումի (առկախումի) գաղափարաբանություն:
- 3) Հայրենիք - տեխնիկան՝ հարմար եւ միաժամանակ կործանարար - տեխնիկայի օտարում եւ ապավինում Համակարգին:

Ինչպես տեսնում ենք, նախորդ փուլերում ամպա տեխնիկականի երկդիմությունը երրորդ փուլում հասնում է ծայրահեղության: Անշուշտ, գրության մեջ ամեն բան ներկայացվածի պես պարզ ու միանշանակ է: Չարգացումից պահպանումի անցումը, օրինակ, այդպես կտրուկ ու ամբողջական է. զարգացման գաղափարը զսպված, բայց բնավ չի դադարում գործելուց:

Այսպես ամփոփելով ընթերցումի «արդյունքները», որոնց մանրամասն քննարկումը դուրս է մնում այս հողվածի շրջանակից, կատարենք մի քանի նախնական դիտողություն:

Տեխնիկայի ընկալման գաղափարաբանական հագեցվածությունը համընդհանուր երեւոյթ է՝ բնորոշ ողջ «հայ իրականութանը»: Բայց տեխնոլոգիայի առեւելի հորձանուտում փոքր-ինչ կողմնորոշվելու, ընտրության հնարավորություն ունենալու համար անհրաժեշտ է կարելվուն չափ ընդլայնել տեսադաշտը, կանխակալություններից ձերբազատել հայացքը: Գաղափարաբանական նախապաշարումների չնկատված-չխնդրականացված կապանքները երեւութական, թվացյալ են դարձնում այլընտրանքի ամեն մի հնարավորություն, քանի որ ներհայտորեն գործելով, պարտադրում են որոշակի ընտրություն կամ ամեն մի ընտրություն ենթադրում հավասարապես ընդունելի:

Եվ ապա՝ կրկին դառնալով Մաթեւոսյանի գրությանը եւ նշմարելով այլափոխության ընդհատվող բեկյալը, վկայելով նրա առկախում-խզումը ինչպես սահմանը խախտելու եւ կերպարանափոխված այն վերահաստատելու գրության ճիգը, անհրաժեշտ են համարում նրա ստանձնումը եւ գրության նկատմամբ նորովի կիրարկումը: Արարք, որ խնդրականացնում է գրության հաստատած սահմանները կամ գրությունն իբրեւ սահման. սահմանը ի՞նչն է առնում իր մեջ եւ ի՞նչը մերժում: Կառուցիկ, ավարտուն ու անթերի պարբերություն կամ զնգուն էջ, ներփակ ու կենտրոնաձիգ նախադասություն, միակ, ճշգրիտ ու լավագույն բառ - այլամերժ մի լեզու, որ պարտադրում է իրեն, իր աներկբա իշխանությունն է թելադրում իր տնօրինության տիրույթում: Ուրեմն ի՞նչպես ազատվել այս լեզվի իշխանությունից՝ անդրադարձի ենթարկելու համար նրա գծած սահմանները, փորձելու համար մտածել նրա կանխակալությունները եւ վերջապես, գրության կողմից մերժված, «զուտ ազգայինի» շրջանակից դուրս մնացած օտարը, այլատարրը, տարասեռը, որ մեր շուրջն է, մասնավորապես տեխնոլոգիայի տեսքով, եւ մեր ներսում, բայց մնում է դեռեւս «բացակա» վտանգավոր բացակայությամբ, քանի դեռ չունենք նոր լեզուն (լեզուները)՝ այն մտածելու համար անհրաժեշտ:

Սրանք՝ արկածախնդրության կոչող, մտածումի ենթադրյալ ցանկալի ուղղությունը մատնանշող ու այդպես՝ գոտեպնդող հորդորներ առավելապես, քան այս գրությամբ իսկ գործադրած ռազմավարություն:

1995 թ.

Ծանոթագրություններ եւ հղումներ

1) Յ. Մաթեւոսյան, Երկեր, 2 հատորով, Երեւան, Սովետ. գրող, 1985:

2) Յ. Մաթեւոսյան, Վիպակներ, Երեւան, Լաիրի, 1990:

3) ԹՏՈՐՏՐՈ սՈՏԱԿՐՈՏԳՐՕ (Թխ), N 12, 1980, էջ 198:

4) Երկեր, 1, էջ 6:

5) Վիպակներ, էջ 17:

6) Երկեր, 1, էջ 114-115:

7) Նույնը, էջ 57:

8) Նույնը, էջ 48:

9) Նույնը, էջ 18-19:

Այս գրության մեջ կարելի է գտնել ուղղակի կամ անուղղակի հղումներ Մ. Յայդեգերի փիլիսոփայության որոշ հղացքերի կամ դրույթների: Առայժմ բավարարվում են ընդգծելով Մաթեւոսյանի կողմից տեխնիկայի ըմբռնման մերձավորությունը հայդեգերյան համապարփակ հղացումի որոշ կողմերի (ուղղակի ազդեցության մասին խոսք լինել չի կարող):

10) Երկեր, 1, էջ 114:

11) Նույնը, էջ 547:

Ներկայության կարոտը, հայրենի ուղորտում գոյության մերձության բաղձանքն է երեւում Յոզի. Թումանյանի «Ո՛վ է ձեռքով անում, ո՛վ» եւ «Յիմի բացել են հանդես» քառյակներում. անտես երգիչներ, որոնց հարկ է ուշք դնել, կանչող ձեռքեր, որոնց կանչին հարկ է արձագանքել: Եութան անթիվ ձեռքեր են անտառները, որ իրենց ունկնդրին ետ են կանչում ներկա լինելու իրենց «քով»:

12) Երկեր, 2, էջ 438:

13) Նույնը, էջ 476:

14) Նույնը, էջ 596:

15) Երկեր, 1, էջ 57:

16) Նույնը, 57:

17) Նույնը, էջ 128:

18) Երկեր, 2, էջ 53:

Յին ու նոր ժամանակների սահմանագիծն է բաժանում Սիմոնին ու Աղունին («Աշնան արեւ»): Աղունի խոսքի մեջ գտնում ենք նոր ժամանակը բնորոշող բազմաթիվ դիտարկումներ: Օրինակ՝ «...ոտքը ոտք է դարձնում կոշիկը, բայց առանց ասֆալտի կոշիկը մի բան չի ու այդպես էլ իր ոտքերը մնացին գյուղական»: (էջ 70) Աղունը՝ որքանով մարմնավորում է նոր ժամանակը, ակնհայտ



հակադրությունն է Մաթեմատիկայի համար վճռական «զուտ պահպանողական, իզական, մայրական, նահապետական» սկզբունքի:

19) Երկեր, 1, էջ 140:

20) Երկեր, 2, էջ 483:

21) Նույնը էջ 418:

22) Նույնը, էջ 523:

23) Վիպակներ, էջ 15:

24) Երկեր, 1, էջ 401:

25) Նույնը, էջ 385:

26) Վիպակներ, էջ 13: Նույն տեղում ստեղծագործական սկզբունքի այլ բնորոշումներ էլ ենք գտնում՝ «զուտ ազգային», «զուտ նահապետական», «զուտ պահպանողական»: «Չուտ ազգային» պահպանումը եւ օտարի, այլատարրի («խանձածինը») մերժումը տիրական շեշտով առկա է նաեւ «Խումհարում»: Հետաքրքրական է, այս առումով, հետեւյալ զուգահեռը: Շ. Շահնուրի, Հ. Չարդարյանի եւ Ռբունիի վեպերը քննության առնող «Երկդիմին եռանկյունիի մեջ» (Տրամ, 1980, Պեյրութ) հոդվածում Գ. Պըլտյանը մասնավորապես գրում է «... «հայությունը» կսահմանի որոշ պահպանելի հատկանիշներով, իբրեւ անխախտ ու միաձուլյալ իսկություն» (էջ 355): Տարբեր կեցվածք ենք գտնում Դ. Վարուժանի մոտ. «(Վարուժան) «հայությունը» կգտնեղէ իբրեւ արվեստի մեջ գալիք, նվաճելի, ըսենք, որակ մը: Որով հայությունը, պահ մը, իր կարգին կդառնա անճանաչելի» (Գ. Պըլտյան, «Կրակե շրջանակը Դ. Վարուժանի շուրջ», 1988, Անթիլիաս-Լիբանան, էջ 62):

27) Երկեր, 1, էջ 413-414:

28) Երկեր, 2, էջ 176:

Յարմար «պատշաճ, վայել, վայելուչ» բառը, որ ըստ Հր. Աճառյանի ճիշտ նույն բառն է, ինչ-որ յարդար եւ ունի ար արմատը, իր հիմնական ու կից նշանակություններով, ինչպես եւ նույն արմատից կազմված ուրիշ բառերով ուրվագծում է իմաստային այն ոլորտը, ուր գործում է «հարմար» հղացքը: «Յար նշանակում է կից, կցված, կողք-կողքի միացած»: Հնդեվրոպական նախալեզվի *ar-* «կցել, միացնել, արվեստով հորինել» արմատից են սերում մասնավորապես լատինական *ars* «արվեստ» եւ *arma* «կարասիք, զործիք, զենք» բառերը: Մյուս կողմից, արդ-ը ունի «ծել, կարգավորություն, սարք» իմաստները: Ավելի մանրամասն՝ տես Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 306-309 եւ հ. 3, էջ 387-390:

29) Տերը, Երեւան, Սովետ. գրող, 1983, էջ 128-129, 140:

30) Երկեր, 2, էջ 157:

31) Տերը, էջ 129:

32) Նույնը, էջ 140:

33) Նույնը, էջ 130:

34) Երկեր, 2, էջ 157-158:

35) Վիպակներ, էջ 12:

Կարծում եմ, որ այս իմաստով հայրենիքը իբրեւ պատկեր առաջին անգամ ներկայացվում է Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության մեջ:

36) Երկեր, 1, էջ 384:

37) Նույնը, էջ 344:

38) Վիպակներ, էջ 17:

39) Թխ, էջ 193:

40) Նույնը, էջ 214:

41) Երկեր, 1, էջ 5: